

19190



ԽՍՀՄ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ

ԱՐՏԱՅԵՐԹ ՔԻՆԳԵՐՈՐԴ ՍԵՍԱՆԱՆ

ՍՂԱԳՐԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

51

328(47)
Խ-11

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅՆ 27 SEP 2006

328(47)

Խ-11

այ

15 JAN 2010



ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ

ԱՐՏԱՀԵՐԹ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՍԵՍՍԻԱՆ

31 հոկտեմբերի — 2 նոյեմբերի 1939 թ.



ՍՂԱԳՐԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
1939

19190

1.1.09.2013



ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՅԵՎ
ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՀԱՄԱՏԵՂ ՆԻՍՏԵՐԸ



2595
40

ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ

(1939 թ. հոկտեմբերի 31-ին)

Նախագահության մեջ Միության հորհրդի Նախագահ ընկ. Ա. Ա. Անդրեևի, Ազգությունների հորհրդի Նախագահ ընկ. Ն. Մ. Շվերնիկի և նրանց տեղակալներ—ընկերներ Տ. Դ. Լիսենկոյի ու Զ. Ա. Ասլանովայի, իսկ «Բյուրոյի» ընկերներ Ստալինի, Մուստովի, Վորոշիլովի, Կալինինի, Լ. Մ. Կազանովիչի, Միկոյանի, Ժգանովի, Բերիայի, Մալենկովի, Շկիրյատովի և ուրիշների յերևալը դեպուտատները դիմավորում են բուռն ծափահարություններով, վարմա՛ն փոխվում են ովացիայի: Բոլորը վոտի յեն կանգնում: Լսվում են բացականչություններ ԽՍՀՄ ժողովուրդների լեզուներով. «Կեցցե՛ ընկեր Ստալինը», «Ընկեր Ստալինին ուռա՛»:

Նախագահում է Միության հորհրդի Նախագահ Ա. Ա. Անդրեևը:

Նախագահող: Ընկե՛ր դեպուտատներ: Նախքան Գերագույն Խորհրդի նիստը բացելը, թույլ տվե՛ք առաջարկել ձեզ հոտընկայս հարգել մեր ռադիկների հիշատակը, վորոնք ընկան Լեհաստանի տերիտորիայում՝ Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելո-ռուսիայի ժողովուրդներին կապիտալիզմի ստրկութունից ազատագրելու ժամանակ: (Բ ո լ ո Ր ը վ ո տ ք ի յ են կ ա ն զ ն ու մ):

Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Գերագույն Խորհրդի նիստը հայտարարում եմ բացված:

Գերագույն Խորհրդի քննարկմանը մտցված են հետևյալ հարցերը.

1. Զեկուցում Կառավարության արտաքին քաղաքականության մասին:

2. Արևմտյան Ուկրաինայի Ժողովրդական Ժողովի Լիազոր Հանձնաժողովի հայտարարութիւնը:

3. Արևմտյան Բելոռուսիայի Ժողովրդական Ժողովի Լիազոր Հանձնաժողովի հայտարարութիւնը:

Ընկե՛ր դեպուտատներ: Արևմտյան Ուկրաինայի ու Արևմտյան Բելոռուսիայի Ժողովրդական Ժողովների Լիազոր Հանձնաժողովներն այսօր ժամանել են Մոսկվա և ներկա յեն Գերազույն խորհրդի այս նիստին: (Բ ու ու ն ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր :)
Թույլ տվե՛ք Գերազույն խորհրդի—խորհրդային Միութեան պետական իշխանութեան բարձրագույն որդանի դեպուտատների կողմից վողդունել մեր թանկագին ընկերներին, Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի Ժողովրդական Ժողովների Լիազոր Հանձնաժողովների անդամներին (բ ու ու ն ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր , ա մ բ ո ղ ջ դ ա հ լ ի ճ ի ո վ ա ց ի ա ն , բ ա ց ա կ ա ն չ ու թ յ ու ն ն ե ր . «Ոււա՛») և հանձին նրանց վողջունել Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի յեղբայրական ժողովուրդներին, վորոնց մեր քաջարի Կարմիր Բանակն ազատագրել է լեհական պաների ու կապիտալիստների ճնշումից: (Բ ու ու ն ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր : Ա մ բ ո ղ ջ դ ա հ լ ի ճ ի ո վ ա ց ի ա ն : Բ ա ց ա կ ա ն չ ու թ յ ու ն ն ե ր . «Ոււա՛» :)

Անցնում ենք Սեսսիայի՝ իմ կողմից հրապարակված որակարգի քննարկմանը:

Դեպուտատներից ո՞վ է ցանկանում խոսք վերցնել որակարգի հարցի վերաբերյալ:

Խոսքը տրվում է դեպուտատ Բաբրաձեյին:

Վ. Մ. Բաբրաձե (Ք ու թ ա յ ի ս ի ի ո կ ը ու գ , Վ ը ա ց ա կ ա ն ԽՍՀ): Գերազույն խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Միութեան խորհրդի Նախագահի կողմից այստեղ հրապարակված հարցերը չափազանց լուրջ և ակտուալ նշանակութիւն ունեն մեր յերկրի համար: Առաջարկ եմ մտցնում այդ հարցերը մտցնել խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան Գերազույն խորհրդի աշխատանքի որակարգի մեջ:

Նախագահող: Դեպուտատներից ելի ո՞վ է խոսք խնդրում որակարգի վերաբերյալ: Չկա:

Քվեարկում եմ իմ կողմից հրապարակված որակարգը:

Այս առաջարկը քվեարկում եմ ըստ պալատների առանձին-առանձին: Քվեարկում են Աղդութիւնների խորհրդի դեպուտատները: Ով կողմնակից է հրապարակված որակարգը հաստա-

տել, նրանց խնդրում եմ ձեռք բարձրացնել: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Քվեարկում են Միութեան խորհրդի դեպուտատները: Ով կողմնակից է որակարգն ընդունել, նրանց խնդրում եմ ձեռք բարձրացնել: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Այսպիսով, որակարգը յերկու պալատների կողմից ընդունվում է միաձայն:

Այժմ մեզ անհրաժեշտ է վորոշել Սեսսիայում դրված հարցերի քննարկման կարգը: Դեպուտատներից ո՞վ է խոսք խնդրում այս հարցի առթիւ:

Խոսքը տրվում է դեպուտատ Բուրմիստենկոյին:

Մ. Ա. Բուրմիստենկո (Մ ա յ կ ո պ ի դ յ ու ղ ա կ ա ն ո կ ը ու գ , Ա դ ի դ ե յ ա կ ա ն ա վ տ ո ն ո մ մ ա ը ղ): Ընկե՛ր դեպուտատներ: Առաջարկ եմ մտցնում ընդունված որակարգի բոլոր հարցերը քննարկել Միութեան խորհրդի և Աղդութիւնների խորհրդի համատեղ նիստերում:

Նախագահող: Ելի ո՞վ է ցանկանում խոսք վերցնել այս հարցի առթիւ:

Առաջարկ կա քվեարկել: Այս առաջարկը քվեարկում եմ ըստ պալատների առանձին-առանձին: Քվեարկում են Աղդութիւնների խորհրդի դեպուտատները: Ով կողմնակից է, վորպեսզի ընդունել դեպուտատ Բուրմիստենկոյի մտցրած առաջարկը, նրանց խնդրում եմ ձեռք բարձրացնել: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Քվեարկում են Միութեան խորհրդի դեպուտատները: Ով կողմնակից է, վորպեսզի ընդունել դեպուտատ Բուրմիստենկոյի առաջարկը, նրանց խնդրում եմ ձեռք բարձրացնել: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Այսպիսով, դեպուտատ Բուրմիստենկոյի առաջարկը յերկու պալատների կողմից ընդունվում է միաձայն:

Անցնում ենք որակարգի առաջին հարցի քննարկմանը: Կառավարութեան արտաքին քաղաքականութեան մասին ղեկուցելու համար խոսքը տրվում է Ժողովրդական Կոմիսարների խորհրդի Նախագահ և Արտաքին գործերի Ժողովրդական Կոմիսար Վյաչեսլավ Միխայլովիչ Մոլոտովին: (Բ ու ու ն , յ ե ը կ ա ը ա տ և ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր : Բ ո լ ո ը ղ վ ո տ ք ի յ ե ն կ ա ն դ ն ու մ : Լ ա վ ու մ ե ն բ ա ց ա կ ա ն չ ու թ յ ու ն ն ե ր . «Կեցցե՛ ընկեր Մոլոտովը», «Ընկեր Մոլոտովին ուա՛», «Կեցցե՛ խաղաղութեան ստալինյան քաղաքականութիւնը» :)

Վ. Մ. Մոլոտով: Ընկե՛ր դեպուտատներ: Վերջին յերկու ամսվա ընթացքում միջազգային իրադրության մեջ կատարվեցին կարևոր փոփոխություններ: Այդ վերաբերում է, ամենից առաջ, Յեվրոպայում ստեղծված դրությանը, բայց նաև այն յերկրներին, վորոնք գտնվում են Յեվրոպայի սահմաններից շատ հեռու: Այս կապակցութամբ պետք է մատնանշել յերեք հիմնական հանգամանքներ, վորոնք ունեն վճռական նշանակություն:

Նախ՝ պետք է մատնանշել այն փոփոխությունները, վորոնք կատարվել են Խորհրդային Միության և Գերմանիայի հարաբերությունների մեջ: Ոգոստոսի 23-ին՝ չհարձակման խորհրդային-գերմանական պայմանագրի կնքման ժամանակից, վերջ դրվեց այն աննորմալ հարաբերություններին, վորոնք մի շարք տարիների ընթացքում գոյություն ունեցին Խորհրդային Միության և Գերմանիայի միջև: Յեվրոպական վորոշ տերությունների կողմից ամեն կերպ հրահրվող թշնամանքին փոխարինելու յեկան մերձեցումը և բարեկամական հարաբերություններին հաստատումը ԽՍՀՄ և Գերմանիայի միջև: Այդ նոր, լավ հարաբերությունների հետագա բարելավումն իր արտահայտությունը դտավ ԽՍՀՄ և Գերմանիայի միջև բարեկամություն ու սահմանի գերմանո-խորհրդային պայմանագրի մեջ, վորը ստորագրվեց սեպտեմբերի 28-ին, Մոսկվայում: Խորհրդային Միության և Գերմանիայի, Յեվրոպայի յերկու ամենախոշոր պետությունների հարաբերությունների մեջ կատարված կտրուկ չրջադարձը չէր կարող չանդրադառնալ ամբողջ միջազգային դրության վրա: Ըստ վորում, իրադարձություններն ամբողջապես հաստատեցին խորհրդային-գերմանական մերձեցման քաղաքական նշանակություն այն գնահատականը, վորը տրվեց Գերադույն Խորհրդի նախորդ Սեսիայում:

Յերկրորդ՝ պետք է մատնանշել այնպիսի մի փաստ, ինչպիսին է Լեհաստանի ռազմական ջախջախումը և Լեհական պետության քայքայումը: Լեհաստանի կառավարող չրջանները քիչ չէին պարծենում իրենց պետության «ամրություն» և իրենց բանակի «հզորություն»: Սակայն, բավական յեղալ Լեհաստանի դեմ ուղղված կարճ հարվածն սկզբում գերմանական բանակի, իսկ այնուհետև՝ Կարմիր Բանակի կողմից, վորպեսզի վոչինչ չմնար վերսալյան պայմանագրի այդ ճիվաղ դավալից, վորն ասլրում էր վոչ-լեհական ազդությունների ճնշման հաշվին: Գերմանիայի և ԽՍՀՄ միջև անսկզբունք խուսանավման ու խաղի «տրադիցիոն քաղաքականություն» անձարակ գտնվեց և լիովին սնանկացավ:

Յերրորդ՝ պետք է խոստովանել, վոր Յեվրոպայում բռնկած

մեծ պատերազմն արմատական փոփոխություններ մտցրեց ամբողջ միջազգային իրադրության մեջ: Այդ պատերազմը սկսվեց Գերմանիայի ու Լեհաստանի միջև և վերածվեց պատերազմի մեկ կողմից՝ Գերմանիայի, մյուս կողմից՝ Անգլիայի ու Ֆրանսիայի միջև: Գերմանիայի և Լեհաստանի միջև պատերազմն ավարտվեց արագորեն, լեհական ղեկավարների լիակատար սնանկության հետևանքով: Լեհաստանին, ինչպես հայտնի յե, չոչնեցին վոչ անգլիական, վոչ Ֆրանսիական յերաշխիքները: Մինչև այժմ էլ, ճիշտն ասած, հայտնի չէ, թե ի՞նչ «յերաշխիքներ» եյին դրանք: (Ընդհանուր ծիծաղ:) Գերմանիայի և անգլո-ֆրանսիական բլոկի միջև սկսված պատերազմը գտնվում է միայն իր առաջին փուլում և ինչպես հարկն է դեռ չի ծավալվել: Այնուամենայնիվ, հասկանալի յե, վոր այդպիսի պատերազմը պետք է արմատական փոփոխություններ մտցներ Յեվրոպայի դրության մեջ, ասենք և վո՛չ միայն Յեվրոպայի:

Միջազգային իրադրության այս կարևոր փոփոխությունների կապակցութամբ, վորոշ հին ֆորմուլաներ, վորոնցով մենք սղտվում եյինք դեռ վերջերս, — և վորոնց շատերն այնպես սովորել եյին, — բացահայտորեն հնացել են և այժմ անկիրառելի յեն: Այդ մասին պետք է հաշիվ տանք մեզ, վորպեսզի խուսափենք կոպիտ սխալներից Յեվրոպայում ստեղծված քաղաքական նոր դրության գնահատականի մեջ:

Հայտնի յե որինակ, վոր վերջին մի քանի ամիսների ընթացքում այնպիսի հասկացողություններ, ինչպես «ադրեսսիան», «ադրեսսորը» ստացել են նոր կոնկրետ բովանդակություն, ձևեր են բերել նոր իմաստ: Դժվար չէ կուսհել, վոր այժմ մենք չենք կարող այդ հասկացողություններից ողտվել նույն այն իմաստով, ինչպես, ասենք, 3—4 ամիս սրանից առաջ: Այժմ, յեթե խոսենք Յեվրոպայի մեծ տերությունների մասին, Գերմանիան գտնվում է այնպիսի պետության դրության մեջ, վորը ձգտում է պատերազմի ամենաարագ ավարտման ու խաղաղության, իսկ Անգլիան և Ֆրանսիան, վորոնք դեռ յերեկ կովում եյին ադրեսսիայի դեմ, կողմնակից են պատերազմը շարունակելուն և դեմ են հաշտության կնքմանը: Դերերը, ինչպես տեսնում եք, փոխվում են:

Անգլիական և Ֆրանսիական կառավարությունների փորձերը՝ իրենց այդ նոր դիրքն արդարացնելու Լեհաստանին տրված պարտավորություններով, հասկանալի յե, վոր բացահայտորեն սնանկ են: Հին Լեհաստանի վերականգնման մասին, ինչպես յուրաքանչյուրին հասկանալի յե, խոսք անդամ լինել չի կարող: Ուստի, անիմաստ է ներկայիս պատերազմի շարունակումը նախ-

գին։ Լեհական պետութեան վերականգնման դրոշակի տակ։ Հասկանալով այդ, Անգլիայի և Ֆրանսիայի կառավարութիւնները, սակայն, չեն ուզում դադարեցնել պատերազմն ու վերականգնել խաղաղութիւնը, այլ նոր արդարացում են փնտռում Գերմանիայի դեմ պատերազմը շարունակելու համար։

Վերջին ժամանակներս Անգլիայի և Ֆրանսիայի կառավարող շրջանները փորձում են իրենց պատկերացնել վորպես ժողովուրդների դեմոկրատական իրավունքների համար։ Ընդդէմ հիտլերի դի պայքարող մարտիկներ, ըստ վորում անգլիական կառավարութիւնը հայտարարեց, վոր, իբր թե նրա համար Գերմանիայի դեմ պատերազմելու նպատակը հանդիսանում է, վոչ ավելի ու վոչ պակաս, քան «հիտլերի դի վոչնացումը»։ Ստացվում է այսպես, վոր պատերազմի անգլիական, իսկ նրանց հետ միասին նաև Ֆրանսիական կողմնակիցները Գերմանիայի դեմ հայտարարել են «իդեոլոգիական պատերազմի» պես ինչ վոր մի բան, վորը հիշեցնում է հին կրոնական պատերազմները։ Դրոք, իր ժամանակին կրոնական պատերազմները հերետիկոսների ու այլադավանների դեմ, մոդա ելին։ Դրանք, ինչպես հայտնի յե, հասցրին ժողովրդական մասսաների համար ամենածանր հետևանքների, տնտեսական քայքայման և ժողովուրդների կուլտուրական վայրենացման։ Վորեւ ալ բան այդ պատերազմները չեյին ել կարող տալ։ Բայց այդ պատերազմները միջնադարի ժամանակներումն եյին։ Անգլիայի և Ֆրանսիայի տիրապետող դասակարգերը նորից մեղ չե՞ն քաշում արդյոք դեպի միջնադարի այդ ժամանակները, կրոնական պատերազմների, սնտիապաշտութեան և կուլտուրական վայրենացման ժամանակները։ Համենայն դեպս, «իդեոլոգիական» դրոշակի տակ այժմ սկսված է ե՛լ ավելի մեծ մասշտաբի և Յեվրոպայի ու ամբողջ աշխարհի ժողովուրդների համար ե՛լ ավելի մեծ վտանգներ սպառնացող պատերազմ։ Բայց այդպիսի պատերազմն իր համար չունի վորեւ արդարացում։ Հիտլերի դի իդեոլոգիան, ինչպես և ամեն մի այլ իդեոլոգիական սիստեմ, կարելի յե ընդունել կամ ժխտել, այդ—քաղաքական հայացքների դրոք է։ Բայց ամեն մի մարդ կհասկանա, վոր իդեոլոգիան չի՛ կարելի վոչնչացնել ուժով, չի՛ կարելի նրան վերջ դնել պատերազմի միջոցով։ Ուստի, վոչ միայն անիմաստ բան է, այլև հանցադրոշմութիւն է այնպիսի պատերազմ մղելը, ինչպես պատերազմը «հիտլերի դի վոչնացման» համար, վորը քողարկվում է հանուն «դեմոկրատիայի» պայքարելու կեղծ դրոշակի տակ։ Իսկապես, վոչ մի կերպ չի կարելի դեմոկրատիայի համար մղվող պայքար անվա-

նել այնպիսի գործողութիւնները, ինչպես կոմունիստական կուսակցութեան փակումը Ֆրանսիայում, Ֆրանսիական պառլամենտի կոմունիստական դեպուտատների ձերբակալութիւնները, կամ քաղաքական ակադեմիաների սահմանափակումն Անգլիայում, չթուլացող աղբային ճնշումը Հնդկաստանում և այլն։

Պարզ չե՞ արդյոք, վոր Յեվրոպայում տեղի ունեցող ներկայիս պատերազմի նպատակն այն չե, ինչի մասին խոսում են ունկնդիրների լայն շրջանի համար կաղմակերպվող պաշտոնական յեւույթների մեջ Ֆրանսիայում ու Անգլիայում, այսինքն՝ հանուն դեմոկրատիայի պայքարելը չե, այլ ինչ վոր մի ուրիշ բան, վորի մասին այդ պարոնայք բացե ի բաց չեն ասում։

Գերմանիայի դեմ մղվող անգլո-ֆրանսիական պատերազմի իսկական պատճառը վո՛չ թե այն է, վոր Անգլիան ու Ֆրանսիան յերդել են, իբր թե վերականգնել նախկին Լեհաստանը և, իհարկե, վո՛չ թե այն է, վոր նրանք վճռել են իբր թե իրենց վրա վերցնել դեմոկրատիայի համար պայքարելու խնդիրը։ Անգլիայի և Ֆրանսիայի կառավարող շրջանները, հասկանալի յե, վոր ունեն Գերմանիայի դեմ պատերազմելու ալ, ե՛լ ավելի իսկական մոտիվներ։ Այդ մոտիվները վերաբերում են վոչ թե վորեւ մի իդեոլոգիայի բնագավառի, այլ նրանց, վորպես գաղութային հզոր տերութիւնների, զուտ նյութական շահերի սփերային։

Բրիտանական կայսրութիւնը, վորի բնակչութիւնը հասնում է 47 միլիոնի, տիրապետում է 480 միլիոն բնակչութիւն ունեցող գաղութների։ Ֆրանսիայի գաղութային կայսրութիւնը, Ֆրանսիայի, վորի բնակչութիւնը 42 միլիոնից ավելի չե, ընդգրկում է 70 միլիոն բնակչութիւն՝ Ֆրանսիական գաղութներում։ Այդ գաղութներին տիրապետելը, վոր հնարավորութիւն է տալիս շահագործելու հարյուր միլիոնավոր մարդկանց, Անգլիայի և Ֆրանսիայի համաշխարհային տիրապետութեան հիմքն է հանդիսանում։ Յերկուշն այդ գաղութային տիրակալութիւնների համար գերմանական պահանջները հանդեպ—ահա թե վորն է Գերմանիայի դեմ Անգլիայի ու Ֆրանսիայի ներկայիս պատերազմի աստառը, Գերմանիայի, վորը լուրջ կերպով ուժեղացել է վերջին ժամանակներս, Վերսալյան պայմանագրի քայքայման հետևանքով։ Համաշխարհային տիրապետութիւնը կորցնելու յերկուշն Անգլիայի և Ֆրանսիայի կառավարող շրջաններին թելադրում է Գերմանիայի դեմ պատերազմի հրահրման քաղաքականութիւն։

Այսպիսով, այդ պատերազմի իմպերիալիստական բնույթն

ակնբախ ե յուրաքանչյուրի համար, ով ուղում ե տեսնել իրերի իսկական դրուժյունը, ով աչքերը չի փակում փաստերի առջև:

Այս բոլորից յերևում ե, թե ո՞ւմ ե հարկավոր այդ պատե-
րադմբ, վորը մղվում ե հանուն համաշխարհային տիրապետու-
թյան: Իհարկե, վո՛չ բանվոր դասակարգին: Այդպիսի պատե-
րադմբ բանվոր դասակարգին վոչինչ չի խոստանում, բացի
արյունոտ դոհերից ու աղետներից:

Սրանից հետո, դատեցեք ինքներդ, վերջին ժամանակաշրջա-
նում փոխվե՞լ ե, թե՞ չի փոխվել այնպիսի հասկացողություննե-
րի բովանդակությունը, ինչպես «աղբեսսիան», «աղբեսսորը»: Դժվար չե տեսնել, վոր այդ բառերի դործածումը հին իմաստով, —
այսինքն այնպես, ինչպես այդ կար նախքան Խորհրդային Միու-
թյան ու Գերմանիայի քաղաքական հարաբերությունների մեջ
կատարված վերջին վճռական շրջադարձը և նախքան Յեվրոպա-
յում իմպերիալիստական մեծ պատերազմի սկսվելը, — միայն
խառնաշփոթություն կարող ե ստեղծել գլուխներում և անխու-
սափելիորեն կմղի դեպի սխալ հետևություններ: Վորպեսզի այդ
չկատարվի, մենք չպետք ե թույլ տանք վոչ-քննադատական վե-
րաբերմունք դեպի այն հին հասկացողությունները, վորոնք ան-
կիրառելի յեն միջադեպին նոր իրադրության մեջ:

Այսպես ե դասավորվել միջադեպին իրադրությունը վերջին
շրջանում:

Անցնենք այն փոփոխություններին, վորոնք կատարվել են հենց
Խորհրդային Միության արտաքին դրության մեջ: Այստեղ կա-
տարվել են վոչ-փոքր փոփոխություններ, բայց, յեթե խոսենք
գլխավորի մասին, ապա չի կարելի չխոստովանել հետևյալը. —
խաղաղության մեր արտաքին քաղաքականությունը հետևողա-
կանորեն կիրառելու շնորհիվ, մեզ հաջողվեց զբաղիորեն ուժե-
ղացնել մեր դիրքերը և Խորհրդային Միության միջադեպին
կշիռը: (Յե ր կ ա ր ա տ ե ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր :)

Մեր հարաբերությունները Գերմանիայի հետ, ինչպես յես
արդեն ասացի, բարեկամվել են արմատապես: Այստեղ դործը
զարգանում եր բարեկամական հարաբերությունների ամրապնդ-
ման, պրակտիկ համագործակցության զարգացման և Գերմա-
նիային, խաղաղության նրա ձգտումների մեջ, քաղաքական
աջակցություն ցույց տալու գծով: Խորհրդային Միության և
Գերմանիայի միջև կնքված չհարձակման պայմանագիրը, մեզ
պարտավորեցնում եր չեղծություն պահպանել այն դեպքում,
յերբ Գերմանիան մասնակցի պատերազմին: Մենք հետևողակա-
նորեն կիրառում եյինք այդ դիժը, վորին բնավ չի հակասում

մեր զորքերի մուտքը նախկին Լեհաստանի տերիտորիան, վոր
սկսվեց սեպտեմբերի 17-ին: Բավական ե հիշեցնել, վոր այդ
ժամանակ հենց, սեպտեմբերի 17-ին, Խորհրդային Կառավարու-
թյունը հատուկ նոտա ուղարկեց այն բոլոր պետություններին,
վորոնց հետ նա ունի դիվանագիտական հարաբերություններ,
հայտարարելով, վոր ԽՍՀՄ այսուհետև ել չեղդություն քաղա-
քականություն կվարի նրանց հետ ունեցած հարաբերություննե-
րի մեջ: Ինչպես հայտնի յե, մեր զորքերը Լեհաստանի տերի-
տորիան մտան այն բանից հետո միայն, յերբ Լեհական պետու-
թյունը քայքայվեց և վաստորեն դադարեց գոյություն ունենա-
լուց: Հասկանալի յե, վոր մենք չեյինք կարող չեղոք մնալ այդ-
պիսի փաստերի նկատմամբ, քանի վոր այդ իրադարձություն-
ների հետևանքով մեր առջև ծագացան մեր պետության ան-
վերջանդության սուր հարցերը: Բացի այդ, Խորհրդային Կառա-
վարությունը չեր կարող հաշվի չառնել այն բացառիկ դրու-
թյունը, վոր ստեղծվել եր Արևմտյան Ուկրաինայի և Արևմտ-
յան Բելուուսիայի յեղբայրական բնակչության համար, վորը
քայքայված Լեհաստանում բախտի զմահացումը եր թողնված:

Հետագա իրադարձությունները լիովին հաստատեցին, վոր
Խորհրդային-գերմանական նոր հարաբերությունները կառուց-
ված են փոխադարձ շահերի ամուր բաղայի վրա: Այն բանից
հետո, յերբ Կարմիր Բանակի զորամասերը մտան նախկին Լե-
հական պետության տերիտորիան, ծագեցին ԽՍՀՄ և Գերմա-
նիայի պետական շահերի սահմանադժման լուրջ հարցեր: Այդ
հարցերն արագորեն կարգավորվեցին փոխադարձ համաձայնու-
թյամբ: ԽՍՀՄ և Գերմանիայի միջև բարեկամության ու սահ-
մանի գերմանո-խորհրդային պայմանագիրը, վոր կնքվեց սեպ-
տեմբերի վերջերին, ամրապնդեց մեր հարաբերությունները
Գերմանական պետության հետ:

Գերմանիայի հարաբերություններն արևմտա-յեվրոպական
բուրժուական մյուս պետությունների հետ, վերջին յերկու տաս-
նամյակի ընթացքում բնորոշվում եյին, ամենից առաջ, Գերմա-
նիայի ձգտմամբ՝ փչրելու Վերսալյան պայմանագրի շղթաները,
պայմանագրի, վորի ստեղծողներն եյին Անգլիան ու Ֆրանսիան՝
Ամերիկայի Միացյալ Նահանգների ակտիվ մասնակցությամբ:
Այդ ել հենց, վերջին հաշվով, հասցրեց Յեվրոպայում բռնկած
ներկայիս պատերազմին:

Խորհրդային Միության հարաբերությունները Գերմանիայի
հետ կառուցվում եյին այլ հիմքի վրա, վորն ընդհանուր վոչինչ
չունեւ հետպատերազմյան Վերսալյան սխտեմի հավերժացման

չահերի հետ: Մենք միշտ յեղել ենք այն կարծիքին, վոր ուժեղ Գերմանիան հանդիսանում է Յեվրոպայում հաստատուն խաղաղության անհրաժեշտ պայմանը: Ծիծաղելի կլիներ կարծել, թե Գերմանիային կարելի չէ «պարզապես դուրս բերել շարքից» և դեն դցել հաշվից: Այդ տխմար ու վտանգավոր իդճը փայփայող տերությունները հաշվի չեն առնում Վերսալի տխուր փորձը, իրենց հաշիվ չեն տալիս Գերմանիայի աճած հղորության մասին և չեն հասկանում, վոր Վերսալի կրկնման փորձը ներկայիս միջադեպին իրադրության մեջ, վորն արմատապես տարբերվում է 1914 թվի իրադրությունից, — կարող է վերջանալ նրանց համար կրախով:

Մենք անչեղորեն ձգտում եյինք Գերմանիայի հետ հարաբերությունների բարելավման և ամեն կերպ վողջունում եյինք այդպիսի ձգտումները բուն Գերմանիայում: Այժմ մեր հարաբերությունները Գերմանական պետության հետ կառուցված են բարեկամական հարաբերությունների բաղայի վրա, Գերմանիայի խաղաղության ձգտումներին աջակցելու պատրաստակամության, և, դրա հետ միասին, խորհրդային-գերմանական տնտեսական հարաբերությունների զարգացման ամեն կերպ նպաստելու ցանկության վրա՝ հոգուտ յերկու պետությունների փոխադարձ շահերի: Պետք է հատկապես նշել, վոր խորհրդային-գերմանական հարաբերությունների մեջ կատարված փոփոխությունները քաղաքական բնագավառում բարենպաստ նախադրյալներ ստեղծեցին խորհրդային-գերմանական տնտեսական հարաբերությունների զարգացման համար: Գերմանական պատվիրակության վերջին տնտեսական բանակցությունները Մոսկվայում, և խորհրդային տնտեսական պատվիրակության՝ ներկա պահին տեղի ունեցող բանակցությունները Գերմանիայում, լայն բաղա յեն նախապատրաստում խորհրդային Միության և Գերմանիայի միջև ապրանքաշրջանառության զարգացման համար:

Այժմ թույլ տվեք կանգ առնել այն իրադարձությունների վրա, վորոնք անմիջականորեն կապված են մեր զորքերի՝ Նախկին Լեհական պետության տերիտորիան մտնելու հետ: Անհրաժեշտություն չկա, վոր յես նկարագրեմ այդ իրադարձությունների ընթացքը: Այդ բոլորի մասին մանրամասն խոսվել է մեր մամուլում և դուք, ընկեր ղեպուտատներ, լավ ծանոթ եք փաստական կողմին: Կասեմ միայն ամենաեյականի մասին:

Հարկ չկա ապացուցելու, վոր Լեհական պետության լիակատար քայքայման պահին մեր կառավարությունը պարտավոր երողնության ձեռք մեկնել Արևմտյան Ուկրաինայի և

Արևմտյան Բելոռուսիայի տերիտորիայում բնակվող յեղբայր-ուկրաինացիներին ու յեղբայր-բելոռուսներին: Նա այդպես էլ վարվեց: (Բուռն, յերկարատև ծափահարություններ: Դեպուտատները վոտքի յեն կանդնում և ովացիա յեն սարքում:) Կարմիր Բանակն այդ շրջանները մտավ ուկրաինական և բելոռուսական բնակչության ընդհանուր համակրանքի պայմաններում, բնակչության, վորը մեր զորքերին դիմավորում եր վորպես պանական ճնշումից, լեհական կալվածատերերի ու կապիտալիստների ճնշումից իրեն ազատազրոյների:

Այդ շրջաններում Կարմիր Բանակի մարտական առաջխաղացման ժամանակ մեր զորամասերը վորոշ տեղերում լուրջ ընդհանրումներ ունեցան լեհական զորամասերի հետ, իսկ այդ նշանակում է, վոր յեղան նաև զոհեր: Թե ինչպիսին եյին այդ զոհերը, յերևում է հետևյալից: Բելոռուսական ռազմաճակատում Կարմիր Բանակի զորամասերում, հաշված պետկազմն ու շարքային կազմը, մենք ունեցել ենք 246 սպանված և 503 վիրավոր, իսկ ընդամենը 749: Ուկրաինական ռազմաճակատում մենք պետկազմից ու շարքային կազմից ունեցել ենք 491 սպանված և 1359 վիրավոր, իսկ ընդամենը 1850: Հետևապես, Արևմտյան Բելոռուսիայի և Արևմտյան Ուկրաինայի տերիտորիայում Կարմիր Բանակի կրած զոհերի ընդհանուր թիվը կազմում է՝ սպանվածներ—737, վիրավորներ—1862, այսինքն, ամբողջությամբ՝ 2599 մարդ: Ինչ վերաբերում է Լեհաստանում մեր գրաված մարտավարին, ապա դրանք կազմում են 900-ից ավելի թնդանոթ, ավելի քան 10 000 զնդացի, ավելի քան 300 հազար հրացան, ավելի քան 150 միլիոն հրացանի փամփուշտ, մոտավորապես 1 միլիոն հրետանային արկ, մինչև 300 ինքնաթիռ և այլն:

ԽՍՀՄ-ին անցած տերիտորիան իր չափերով հավասար է յեվրոպական մի մեծ պետության տերիտորիայի: Այսպես, Արևմտյան Բելոռուսիայի տերիտորիան հանսում է 108 հազար քառակուսի կիլոմետրի, 4 միլիոն 800 հազար բնակչությամբ: Արևմտյան Ուկրաինայի տերիտորիան կազմում է 88 հազար քառակուսի կիլոմետր, 8 միլիոն բնակչությամբ: Այսպիսով, մեղ անցած՝ Արևմտյան Ուկրաինայի տերիտորիան, Արևմտյան Բելոռուսիայի տերիտորիայի հետ միասին, կազմում է՝ 196 հազար քառակուսի կիլոմետր, իսկ նրա բնակչությունը — մոտավորապես 13 միլիոն մարդ, վորից ուկրաինացիներ — ավելի քան 7 միլիոն, բելոռուսներ — ավելի քան 3 միլիոն, լեհեր — ավելի քան 1 միլիոն, հրեաներ — ավելի քան 1 միլիոն:

Այդ իրադարձութիւններէ քաղաքական նշանակութիւնը դժ-
վար է գերադնահատել: Արեւմտյան Ուկրաինայից և Արեւմտյան
Բելոռուսիայից ստացվող բոլոր հաղորդագրութիւնները վիւ-
յում են, վոր բնակչութիւնն աննկարագրելի ցնծությամբ դի-
մաւորեց իր ազատագրումը սլանական ճնշումից և ջերմային
վողջունեց Խորհրդային իշխանութեան նոր մեծ հաղթանակը:
(Յերկարատե ծափահարութիւնների պոռթկում:)
Արեւմտյան Ուկրաինայի և Արեւմտյան Բելոռուսիայի Ժողովրդա-
կան Ժողովները՝ վերջին որերս տեղի ունեցած ընտրութիւն-
ները, վորոնք այդտեղ առաջին անգամ ելին կազմակերպվում
ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունքի հիման
վրա՝ դադանի քվեարկությամբ, ցույց տվին, վոր այդ մարդե-
րի բնակչութեան առնվազն 9/10-ը վաղուց արդեն նախապատ-
րաստված եր Խորհրդային Միութեան հետ վերամիավորվելու
համար: Լվովում և Բելոստոկում Ժողովրդական Ժողովների
ընդունած վորոշումները, վորոնք այժմ արդեն հայտնի յեն բո-
լորիս, վկայում են Ժողովրդական ընտրյալների լիակատար միա-
համուռութիւնը քաղաքական բոլոր հարցերում:

Անցնենք մեր հարաբերութիւններին՝ մերձբալթյան յերկրնե-
րի հետ: Ինչպես հայտնի յէ, այստեղ ևս կատարվել են ելական
փոփոխութիւններ:

Եստոնիայի, Լատվիայի և Լիտվայի հետ Խորհրդա-
յին Միութեան հարաբերութիւնների հիմքում դտնվում են խա-
ղաղութեան համապատասխան պայմանագրերը, վորոնք կնքվել
են 1920 թվին: Այդ պայմանագրերի համաձայն Եստոնիան,
Լատվիան և Լիտվան ստացան ինքնուրույն պետական գոյու-
թիւն, ըստ վորում անցած ամբողջ ժամանակաշրջանում Խոր-
հրդային Միութեան անխփփ կերպով բարեկամական քաղա-
քականութիւն եր վարում այդ նոր ստեղծված վորք պետու-
թիւնների վերաբերմամբ: Դրանում իր արտահայտութիւնը
գտավ Խորհրդային իշխանութեան քաղաքականութեան արմատա-
կան տարբերութիւնը ցարական Ռուսաստանի քաղաքականու-
թիւնից, վորը դադանաբար կեղեքում եր վորք Ժողովուրդնե-
րին, նրանց չեր տալիս ինքնուրույն ազգային-պետական դարգաց-
ման վորեւ հնարավորութիւն և նրանց մեջ թողել է վոչ-բիչ
ծանր հիշողութիւններ: Պետք է ընդունել, վոր Խորհրդային-
եստոնական, Խորհրդային-լատվիական և Խորհրդային-լիտվա-
կան բարեկամական հարաբերութիւնների դարգացման անցած
յերկու տասնամյակների վորձը բարենպաստ նախադրյալներ
ստեղծեց մերձբալթյան հարեանների հետ ԽՍՀՄ քաղաքական

աւ ամեն տեսակ այլ հարաբերութիւնների հետագա ամրապնդ-
ման համար: Այդ ցույց տվին նաե վերջին դիվանագիտական
բանակցութիւններն Եստոնիայի, Լատվիայի ու Լիտվայի ներկա-
յացուցիչների հետ, և այն պայմանագրերը, վորոնք ստորագր-
վեցին Մոսկվայում, այդ բանակցութիւնների հետեանքով:

Դուք գիտեք, վոր Խորհրդային Միութեան Եստոնիայի, Լատ-
վիայի և Լիտվայի հետ կնքել է փոխադարձ ողնութեան այնպի-
սի պակտեր, վորոնք ունեն քաղաքական խոշորագույն նշանա-
կութիւն: Այդ պակտերի սկզբունքային հիմքը նույնն է: Դրանք
հիմնված են փոխադարձ ողնութեան վրա, մեկ կողմից՝ Խոր-
հրդային Միութեան, և մյուս կողմից՝ Եստոնիայի, Լատվիայի
ու Լիտվայի միջև, ներառյալ և՛ ռազմական ողնութիւնը մեկը
մյուսին, նրանցից վորեւ մեկի վրա հարձակում կատարվելու
գեպքում: Այդ յերկրների աշխարհադրական առանձնահատուկ
դիրքի շնորհիւ, յերկրներ, վորոնք յուրատեսակ մատուցներ են
հանդիսանում դեպի ԽՍՀՄ, հատկապես Բալթիկ ծովի կողմից,
այդ պակտերը Խորհրդային Միութեանը հնարավորութիւն են
տալիս ռազմա-ծովային բազաներ և ողանալակայաններ ունե-
նալու Եստոնիայի և Լատվիայի վորոշ կետերում, իսկ Լիտվայի
վերաբերմամբ սահմանում են լիտվական սահմանի համատեղ
պաշտպանութիւն Խորհրդային Միութեան հետ: Խորհրդային
այդ ռազմա-ծովային բազաների և ողանալակայանների ստեղ-
ծումն Եստոնիայի, Լատվիայի ու Լիտվայի տերիտորիայում և
վորոշ քանակությամբ կարմիրբանակային դորամասերի փոխա-
դրումն այդ բազաների ու ողանալակայանների պահպանման
համար, ապահովում են պաշտպանութեան հուսալի հնարան վոչ
միայն Խորհրդային Միութեան համար, այլև հենց մերձբալ-
թյան պետութիւնների համար, և դրանով իսկ ծառայում են
խաղաղութիւն պահպանելու գործին, վորում շահագրգռված են
մեր Ժողովուրդները:

Եստոնիայի, Լատվիայի և Լիտվայի հետ վերջին ժամանակ-
ներս տեղի ունեցած դիվանագիտական բանակցութիւնները
ցույց տվին, վոր մեր միջև գոյութիւն ունի բաւականաչափ
վստահութիւն և ռազմապաշտպանական այդ միջոցառումների
իրականացման անհրաժեշտութեան հարկ յեղած ըմբռնում, յել-
նելով ինչպես Խորհրդային Միութեան, այնպես և հենց այդ
պետութիւնների շահերից: Բանակցութիւնների ընթացքում
լիովին յերեւան յեկավ դրանց մասնակիցների ձգտումը՝ պահ-
պանելու խաղաղութիւնը և ապահովելու անվտանգութիւնը
խաղաղ աշխատանքով դրադված մեր Ժողովուրդների համար:



2595
40

Այդ բոլորն եւ հենց ապահովեցին բանակցությունները հաջող ավարտումը և փոխադարձ ոգնության պակտերի կնքումը, վորոնք ունեն պատմական կարևոր նշանակություն:

Փոխադարձ ոգնության հիշյալ պակտերի հատուկ բնույթը բնավ չի նշանակում խորհրդային Միության վորեւ միջամտություն Յստոնիայի, Լատվիայի և Լիտվայի դործերին, ինչպես այդ փորձում են պատկերացնել արտասահմանյան մամուլի վորոշ որդաններ: Ընդհակառակը, փոխադարձ ոգնության այդ բոլոր պակտերը հաստատապես հիշատակում են դրանք ստորագրած պետությունների սովերենիտետի անձեռնմխելիությունը և մյուս պետության դործերին չմիջամտելու սկզբունքը: Այդ պակտերը յեղնում են մյուս յերկրի պետական, սոցիալական ու տնտեսական ստրուկտուրան փոխադարձաբար հարգելուց և պետք է ամրապնդեն մեր ժողովուրդների միջև խաղաղ բարեդրացիական համադործակցության հիմքը: Մենք կողմնակից ենք կնքված պակտերի աղնվորեն ու կետ առ կետ կենսադործմանը՝ լիակատար փոխադարձության պայմաններով և հայտարարում ենք, վոր մերձբալթյան յերկրների խորհրդայնացման մասին յեղած շաղակրատությունը ձեռնտու յե միայն մեր ընդհանուր թշնամիներին ու հակախորհրդային ամեն տեսակ պրովոկատորներին:

Յստոնիայի, Լատվիայի և Լիտվայի հետ քաղաքական հարաբերությունների՝ ձեռք բերված բարելավման հիման վրա, խորհրդային Միությունը լայնորեն ընդառաջ դնաց այդ պետությունների տնտեսական կարիքներին, կնքելով համապատասխան առևտրական համաձայնություններ: Այդ տնտեսական համաձայնությունների կապակցությամբ մի քանի անգամ ավելանում է ապրանքաշրջանառությունը մերձբալթյան յերկրների հետ և ունի բարենպաստ հեռանկար՝ հետագա աճման համար: Այն պայմաններում, յերբ յեվրոպական բոլոր յերկրների, այդ թվում՝ նաև չեղոք պետությունների առևտուրն ապրում է հսկայական դժվարություններ, ԽՍՀՄ այդ տնտեսական համաձայնություններն Յստոնիայի, Լատվիայի և Լիտվայի հետ նրանց համար ունեն չափազանց խոշոր դրական նշանակություն:

Այսպիսով այն մերձեցումը, վոր կատարվել է ԽՍՀՄ, Յստոնիայի, Լատվիայի և Լիտվայի միջև, կնպաստի մեր մերձբալթյան հարևանների դուրդատնտեսության, արդյունաբերության, տրանսպորտի արագ վերելքին և առհասարակ ժողովրդական բարեկեցությանը:

Փոքր յերկրների վերաբերմամբ խորհրդային քաղաքականու-

թյան սկզբունքները հատուկ ուժով ցուցադրվեցին Վիլնո քաղաքը և Վիլնոյի մարզը Լիտվական Հանրապետությանը հանձնելու պայմանադրի որինակով: Ըստ վորում, Լիտվական պետությունը՝ իր յերկու և կես միլիոն բնակչությամբ, դալիորեն ընդարձակում է իր տերիտորիան, 550 հազար մարդով ավելացնում է իր բնակչությունը և ստանում է Վիլնո քաղաքը, վորի բնակիչների թիվը համարյա յերկու անգամ դերադանցում է Լիտվական ներկայիս մաշրաքաղաքի բնակչությունից: խորհրդային Միությունը դիմեց Վիլնո քաղաքը Լիտվական Հանրապետությանը հանձնելու քայլին վոչ այն պատճառով, վոր նրանում դերակշռում է Լիտվական բնակչությունը: Վո՛չ, Վիլնոյում մեծամասնություն է կաղմում վոչ-Լիտվական բնակչությունը: Բայց խորհրդային Կառավարությունը հաշվի առավ այն, վոր Վիլնո քաղաքը, վորը Լեհաստանը բռնի կերպով խլել էր Լիտվայից, պետք է պատկանի Լիտվային վորպես մի քաղաք, վորի հետ կապված են մեկ կողմից՝ Լիտվական պետության պատմական անցյալը, իսկ մյուս կողմից՝ Լիտվական ժողովրդի աղբյային իղձերը: Արտասահմանյան մամուլում մատնանշվում էր, թե համաշխարհային պատմության մեջ դեռ չի յեղել այնպիսի դեպք, վոր մեծ պետությունն իր սեփական կամքով փոքր պետությանը տար այդպիսի մի մեծ քաղաք: Ուստի, խորհրդային պետության այդ ակտն առավել վառ կերպով է ցուցադրում նրա բարի կամքը:

Հատուկ դրության մեջ են գտնվում մեր հարաբերությունները Ֆինլանդիայի հետ: Դա բացատրվում է դլխավորապես նրանով, վոր Ֆինլանդիայում ավելի յեն զգացվում դանադան տեսակ արտաքին աղբեցությունները՝ յերրորդ տերությունների կողմից: Սակայն անաչառ մարդիկ պետք է խոստովանեն, վոր խորհրդային Միության և, հատկապես, Լենինգրադի անվտանգությունն ապահովելու նույն այն հարցերը, վորոնք ծառացած էին Յստոնիայի հետ տեղի ունեցած բանակցություններում, ծառացած են նաև Ֆինլանդիայի հետ տեղի ունեցող բանակցությունների մեջ: Կարելի յե ասել, վոր վորոշ տեսակետից խորհրդային Միության համար անվտանգության հարցերն այստեղ ծառացած են նույնիսկ ավելի սուր կերպով, քանի վոր խորհրդային պետության՝ Մոսկվայից հետո դլխավոր քաղաք Լենինգրադը գտնվում է Ֆինլանդիայի սահմանից ընդամենը 32 կիլոմետր հեռավորության վրա: Այդ նշանակում է, վոր Լենինգրադը գտնվում է այլ պետության սահմանից ավելի փոքր հեռավորության վրա, քան թե այդ հարկավոր է ժամանակակից

հեռաձիգ թնդանոթներից հրետանային զնդակոծման համար։ Մյուս կողմից, դեպի Լենինգրադ տանող ծովային մատուցները նույնպես զգալի չափով կախված են այն բանից — թշնամական, թե՞ բարեկամական դիրք է դրավում Խորհրդային Միության վերաբերմամբ Ֆինլանդիան, վորինն օլատկանոգմ են Ֆիննական ծոցի ափերի ամբողջ հյուսիսային մասը և Ֆիննական ծոցի կենտրոնական մասի յերկայնությամբ դտնվող բոլոր կղզիները։

Հաշվի առնելով այնպիսի դրությունը, ինչպես նաև Յեվրոպայում ստեղծված իրադրությունը, կարելի չէ յենթադրել, վոր Ֆինլանդիան կցուցաբերի հարկ յեղած ըմբռնում։

Ինչի՞ վրա յեն հիմնված յեղել Խորհրդային Միության հարաբերությունները Ֆինլանդիայի հետ այս բոլոր տարիների ընթացքում։ Հայտնի չէ, վոր այդ հարաբերությունների հիմքը հանդիսանում է 1920 թվի խաղաղության պայմանագիրը, վորը նույնատիպ է բալթիական մեր մյուս հարեանների հետ ունեցած մեր պայմանագրերին։ Խորհրդային Միությունը կամքի իր աղատ արտահայտությամբ ապահովեց Ֆինլանդիայի ինքնուրույն և անկախ գոյությունը։ Տարակույս լինել չի կարող, վոր միայն Խորհրդային Կառավարությունը, վորն ընդունում է աղդությունների աղատ զարգացման սկզբունքը, կարող եր դիմել այդպիսի քայլի։ Պետք է ասել, վոր վոչ մի կառավարություն Ռուսաստանում, բացի Խորհրդայինից, չի կարող հանդուրժել անկախ Ֆինլանդիայի գոյությունը հենց Լենինգրադի դարպասների մոտ։ Այդ մասին պերճախոս կերպով ասում է Կերենսկու—Ծերեթելու «դեմոկրատական» կառավարության փորձը, ել չենք խոսում իշխան Լվովի—Միլյուկովի կառավարության մասին և, առավել ևս, ցարական կառավարության մասին։ Տարակույս չկա, վոր այս կարևոր հանգամանքը կարող եր ծառայել վորպես լավ նախադրյալ Խորհրդային—Ֆիննական հարաբերությունների բարելավման համար, վորում, ինչպես յերևում է, Ֆինլանդիան չահագորդված է վո՛չ պակաս չափով, քան Խորհրդային Միությունը։

Խորհրդային—Ֆիննական բանակցությունները սկսվեցին վերջերս, մեր նախաձեռնությամբ։ Ի՞նչն է հանդիսանում այդ բանակցությունների առաքիան։ Դժվար չէ հասկանալ, վոր ժամանակակից միջազգային իրադրության մեջ, յերբ Յեվրոպայի կենտրոնում ծավալվում է պատերազմը խոշորագույն պետությունների միջև, վորը հղի չէ մեծ անակնկալներով ու վտանգներով յեվրոպական բոլոր պետությունների համար, Խորհրդային Միությունը վոչ միայն իրավունք ունի, այլև պարտավոր է

լուրջ միջոցներ ձեռք առնել իր անվտանգությունն ամրապնդելու համար։ Ըստ վորում բնական է, վոր Խորհրդային Կառավարությունը հատուկ հոգատարություն է ցուցաբերում Ֆիննական ծոցի վերաբերմաբ, վորը հանդիսանում է ծովային մատույց դեպի Լենինգրադ, ինչպես նաև ցամաքային այն սահմանի վերաբերմամբ, վորն ինչ վոր մի 30 կիլոմետր հեռավորությամբ կախված է Լենինգրադի վրա։ Յես կհիշեցնեմ, վոր Լենինգրադի բնակչությունը հասել է յերեք և կես միլիոնի, վորը համարյա թե հավասար է ամբողջ Ֆինլանդիայի բնակչությանը, վորը կաղմում է 3 միլիոն 650 հազար մարդ։ (Ուրախ աչխուսություն դահլիճում։)

Հաղիվ թե հիմք կա կանգ առնելու այն հերյուրանքների վրա, վոր արտասահմանյան մամուլը տարածում է Ֆինլանդիայի հետ տեղի ունեցող բանակցություններում Խորհրդային Միության առաջարկների մասին։ Վոմանք պնդում են, թե ԽՍՀՄ «պահանջում է», վոր իրեն տրվի Վիպուրի (Վիբորգ) քաղաքը և Լադոգա լճի հյուսիսային մասը։ Մեր կողմից կասենք, վոր դա բացարձակ հերյուրանք է և սուտ։ Մյուսները պնդում են, թե ԽՍՀՄ «պահանջում է», վոր իրեն հանձնվեն Ալանդական կղզիները։ Դա նույնպես հերյուրանք է և սուտ։ Շաղակրատում են նաև ինչ վոր պահանջների մասին, վոր Խորհրդային Միությունն իբր թե ներկայացնում է Շվեդիայի և Նորվեգիայի վերաբերմամբ։ Բայց այդ հանդուգն ստախոսությունը պարզապես արժանի չէ հերքման։ (Ընդհանուր ծիծաղ։) Իրականում, մեր առաջարկները Ֆինլանդիայի հետ տեղի ունեցող բանակցություններում առավելագույն չափով համեստ են և սահմանափակվում են այն միևնույնումով, առանց վորի անհնարին է ապահովել ԽՍՀՄ անվտանգությունը և կանոնավորել բարեկամական հարաբերությունները Ֆինլանդիայի հետ։

Բանակցությունները Ֆինլանդիայի ներկայացուցիչների հետ, վորի համար Ֆինլանդական կառավարությունը Մոսկվա դործուղեց պ. պ. Պասսիկիվիին և Տաններին, մենք սկսեցինք փոխադարձ ոգնության Խորհրդային—Ֆիննական պակտ կնքելու առաջարկով, մոտավորապես փոխադարձ ոգնության այն պակտերի տիպով, վոր մենք ունենք մերձբալթյան մյուս պետությունների հետ։ Սակայն քանի վոր Ֆինլանդական կառավարությունը հայտարարեց մեզ, թե այդպիսի պակտի կնքումը կհակասի բացարձակ չեղդության իր դրաված դիրքին, մենք չպնդեցինք մեր առաջարկը։ Այն ժամանակ, մենք առաջարկեցինք, անցնել այն կոնկրետ հարցերին, վորոնց մեջ մենք չահագորդված ենք

ԽՍՀՄ անվտանգությունը, և հատկապես Լենինգրադի անվտանգությունն ապահովելու տեսակետից, ինչպես ծովի կողմից՝ Ֆիննական ծոցում, այնպես և ցամաքի կողմից, նկատի ունենալով սահմանադժի չափազանց մոտիկությունը Լենինգրադին։ Մենք առաջարկեցինք համաձայնություն դալ այն մասին, Վոր Լենինգրադից մի քանի տասնյակ կիլոմետրով դեպի հյուսիս հետ մղվի խորհրդային-ֆիննական սահմանը Կարելական պարանոցում։ Դրա փոխարեն մենք առաջարկեցինք Ֆինլանդիային հանձնել Խորհրդային Կարելիայի տերիտորիայի մի մասը, Վորը կրկնակի չափով դերադանցում է Ֆինլանդիայի կողմից Խորհրդային Միությանը հանձնվելիք տերիտորիայից։ Մենք առաջարկեցինք նաև համաձայնություն դալ այն մասին, Վոր Ֆինլանդիան մեզ Վորոշ Ժամկետով կապալով տա իր տերիտորիայի մի փոքրիկ մասը՝ Ֆիննական ծոցի մուտքի շրջանում, Վորպեսզի մենք կարողանանք այնտեղ կաղմակերպել ռադմա-ծովային բազա։ Ֆիննական ծոցի հարավային մուտքի մոտ, այն է՝ Բալթիական նավահանգստում խորհրդային ռադմա-ծովային բազայի առկայությունը դեպքում, ինչպես այդ պայմանավորված է փոխադարձ ուղևորության խորհրդային-եստոնական պակտով, ռադմա-ծովային բազայի ստեղծումը Ֆիննական ծոցի հյուսիսային մուտքի մոտ կարող էր լինի ապահովել Ֆիննական ծոցի անվտանգությունը մյուս պետությունների թշնամական վտանգությունների հանդեպ։ Մենք չենք տարակուսում, Վոր այդպիսի բազայի ստեղծումը համապատասխանում է Վոչ միայն Խորհրդային Միության շահերին, այլ և հենց Ֆինլանդիայի անվտանգությանը։ Մեր մյուս առաջարկները և, մասնավորապես, մեր առաջարկը Ֆիննական ծոցում յեղած մի քանի կղզիների, ինչպես նաև Ռիբաչիյ ու Սրեդնիյ թերակղզիների մի մասի տերիտորիան Խորհրդային Կարելիայում իր չափերով կրկնակի տերիտորիայի հետ փոխանակելու մասին, ըստ յերևույթին առարկություն չեն հանդիպում Ֆինլանդական կառավարության կողմից։ Տարածաշրջանները մեր Վորոշ առաջարկների վերաբերմամբ դեռ հաղթահարված չեն, իսկ այդ տեսակետից Ֆինլանդիայի կատարած դիմումները, որինակ՝ տերիտորիայի մասնակի դիմումը Կարելական պարանոցում, բացահայտորեն չեն հասնում նպատակին։

Այնուհետև մենք մի շարք նոր քայլեր արինք Ֆինլանդիային ընդառաջելու լիմաստով։ Մենք ասացինք, Վոր յեթե ընդունվեն մեր հիմնական առաջարկները, ապա մենք պատրաստ ենք վերացնել մեր առարկություններն Ալանդական կղզիների սպառա-

դինման դեմ, մի բան, Վորը վաղուց արդեն պնդում է Ֆինլանդական կառավարությունը։ Մենք միայն հիշատակեցինք, Վոր մենք վերացնում ենք մեր առարկություններն Ալանդական կղզիների սպառադինման դեմ այն պայմանով, Վոր հիշյալ սպառադինումը կատարվի իրեն՝ Ֆինլանդիայի ազդային ուժերով և Վոր այդ սպառադինումներին յերրորդ յերկրները չունենան Վոչ մի մասնակցություն, քանի Վոր ԽՍՀՄ-ն ևս չի մասնակցում դրանց։ Մենք նաև առաջարկեցինք Ֆինլանդիային՝ Կարելական պարանոցում խորհրդային-ֆիննական ամբողջ սահմանի վրա կատարել ամրացված շրջանների դինաթափում, Վորը պետք է ամբողջապես համապատասխանի Ֆինլանդիայի շահերին։ Այնուհետև, մենք ցանկություն հայտնեցինք հհարձակման խորհրդային-ֆիննական պակտն ուժեղացնել լրացուցիչ փոխադարձ յերաշխիքներով։ Վերջապես, խորհրդային-ֆիննական քաղաքական հարաբերությունների ամրապնդման անտարակույս կհանդիսանար հիանալի բազա նաև մեր յերկրների միջև տնտեսական հարաբերությունների արագ վերելքի համար։

Այսպիսով, մենք պատրաստ ենք ընդառաջ դնալ Ֆինլանդիային այն հարցերում, Վորոնց մեջ նա հատկապես շահագրգռված է։

Այս բոլորից հետո մենք չենք կարծում, Վոր Ֆինլանդիան սկսի առիթ Վորոնել յենթադրվող համաձայնությունը վիժեցնելու համար։ Այդ չեր համապատասխանի խորհրդային-ֆիննական բարեկամական հարաբերությունների քաղաքականությանը և, իհարկե, լուրջ վնաս կհասցներ Ֆինլանդիային։

Մենք հավատացած ենք, Վոր Ֆինլանդական դեկավար շրջանները ձիշտ կհասկանան խորհրդային-ֆիննական բարեկամական հարաբերությունների ամրապնդման նշանակությունը և Ֆինլանդական դործիչները չեն յենթարկվի հակախորհրդային Վորեհ ճնշման ու դրդման թեկուղ ում կողմից ել լինի այդ։

Սակայն յես պետք է հայտնեմ, Վոր նույնիսկ Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտը տեղին դտավ միջամտել այդ հարցերին, մի բան, Վորը դժվար է համաձայնեցնել ամերիկյան չեղոթության քաղաքականության հետ։ Հոկտեմբերի 12-ին Գերադույն Խորհրդի Նախագահության Նախագահ ընկ. Կալինինի անունով ուղարկած իր դիմումի մեջ պ. Ռուզվելտը հույս հայտնեց ԽՍՀՄ և Ֆինլանդիայի միջև բարեկամական ու խաղաղ հարաբերությունների պահպանման և դարգացման վերաբերմամբ։ Կարելի յե մտածել, Վոր Ամերիկայի Միացյալ Նահանգների դործերն ավելի լավ են, ասենք, Ֆիլիպինյան կղզիների կամ Կու-

բայի հետ, վորոնք վաղուց ԱՄՆ-ից պահանջում են աղատություն ու անկախություն և չեն կարողանում այդ ստանալ, քան թե խորհրդային Միության դորժերը Ֆինլանդիայի հետ, վորը վաղուց արդեն խորհրդային Միությանից ստացել է և՛ աղատություն, և՛ պետական անկախություն:

Պ-րն Ռուզվելտի դիմումին ընկ. Կալինինը պատասխանեց հետևյալ կերպ.

«Տեղին եմ համարում հիշեցնել Ձեզ, պարոն պրեզիդենտ, վոր Ֆինլանդական հանրապետության պետական անկախությունը ճանաչվել է խորհրդային Կառավարության կամքի ազատ արտահայտմամբ 1917 թվի դեկտեմբերի 31-ին, և վոր Ֆինլանդիայի սովետական տապալումից ե. ՌՍՖՍՀ ու Ֆինլանդիայի միջև 1920 թվի հոկտեմբերի 14-ին կնքված հաշտության պայմանագրով: Խորհրդային Կառավարության հիշյալ ակտերով վորոշվեցին խորհրդային Միության և Ֆինլանդիայի միջև փոխհարաբերությունների հիմնական սկզբունքները: Այդ սկզբունքներին համապատասխան են տեղի ունենում նաև ներկայիս բանակցությունները խորհրդային Կառավարության ու Ֆինլանդիայի Կառավարության միջև: Հակառակ այն շրջանների կողմից տարածվող տենդենցիկ վերսիանների, վորոնք ըստ յերևույթին, չահաղըրդոված չեն յեվրոպական խաղաղությանը, հիշյալ բանակցությունների միակ նպատակն է փոխհարաբերությունների ամրապնդումը խորհրդային Միության ու Ֆինլանդիայի միջև և յերկու յերկրների բարեկամական համագործակցության ամրապնդումը խորհրդային Միության ու Ֆինլանդիայի անվտանգությունն ապահովելու դորժում»:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության Նախագահի այսպիսի պարզ պատասխանից հետո պետք է միանգամայն հասկանալի լինի, վոր, բարի կամքի առկայության դեպքում, Ֆինլանդական կառավարությունն ընդառաջ կզա մեր նվազագույն առաջարկներին, վորոնք վոչ միայն չեն հակասում Ֆինլանդիայի ազգային ու պետական շահերին, այլ ամրապնդում են նրա արտաքին անվտանգությունը և լայն բազա յեն ստեղծում մեր յերկրների միջև քաղաքական ու տնտեսական հարաբերությունների հետագա լայն դարգացման համար:

Մի քանի խոսք թյուրքիայի հետ տեղի ունեցած բանակցությունների մասին:

Այդ բանակցությունների եյուրյան մասին արտասահմանում դրդւմ են ամեն տեսակ հերյուրանքներ: Վոմանք պնդում են,

վոր ԽՍՀՄ իբր թե պահանջել է հանձնել Արդահանի և Ղարսի շրջանները: Մեր կողմից կասենք, վոր այդ կատարյալ հերյուրանք է և սուտ: Մյուսները պնդում են, վոր ԽՍՀՄ պահանջել է, իբր թե, փոփոխել Մոնտրեյում կնքված միջազգային կոնվենցիան և ԽՍՀՄ համար գերակշիռ իրավունքներ է պահանջել նեղուցների հարցում: Այդ նույնպես հերյուրանք է և սուտ: Իրականում խոսքը վերաբերում էր փոխադարձ ողնության յերկկողմանի պակտի կնքմանը, վորը սահմանափակված էր Սև ծովի և նեղուցների շրջաններով: ԽՍՀՄ պտնում էր, վոր այդպիսի պակտի կնքումը չի կարող նրան դրդել այնպիսի դորժողություններ, վորոնք վարողանային նրան ներդրովել ղինված կոնֆլիկտի մեջ Գերմանիայի դեմ՝ այդ մեկ, և վոր ԽՍՀՄ պետք է յերախիք ունենա, վոր պատերազմի սպառնալիքը նկատի ունենալով, Թյուրքիան վոչ-սեւծովյան տերությունների ռազմանալերին թույլ չի տա Բոսֆորով անցնել Սև ծովը՝ այդ յերկրորդ: Թյուրքիան մերժեց ԽՍՀՄ այդ յերկու վերապահումները և դրանով իսկ անհնարին դարձրեց պակտի կնքումը:

Խորհրդային-թյուրքական բանակցությունները չհասցրին պակտի կնքման, բայց դրանք ողնեցին պարզելու՝ կամ, համենայն դեպս, շոշափելու մեղ հետաքրքրող մի շարք քաղաքական հարցեր: Ժամանակակից միջազգային իրադրության մեջ հատկապես կարևոր է ճանաչել այն պետությունների իսկական դեմքն ու քաղաքականությունը, վորոնց հետ հարաբերություններն ունեն լուրջ նշանակություն: Թյուրքիայի քաղաքականությունն մեջ մեղ համար այժմ շատ բան դարձավ շատ ավելի պարզ, ինչպես Մոսկվայի բանակցությունների հետևանքով, այնպես և Թյուրքական կառավարության արտաքին-քաղաքական վերջին ակտերի հետևանքով:

Ինչպես հայտնի յե Թյուրքիայի կառավարությունը գերադասեց իր բախտը կապել պատերազմին մասնակցող յեվրոպական տերությունների վորոշ խմբավորման հետ: Նա փոխադարձ ողնության պակտ կնքեց Անգլիայի ու Ֆրանսիայի հետ, վորոնք արդեն յերկու ամիս է, ինչ պատերազմ են մղում Գերմանիայի դեմ: Դրանով իսկ Թյուրքիան վերջնականապես դեն չարտեց չեզոքության գլուշ քաղաքականությունը և մտավ ծավալվող յեվրոպական պատերազմի որբիտայի մեջ: Դրանից չափազանց դոհ են ինչպես Անգլիայում, այնպես և Ֆրանսիայում, վորոնք ուզում են ավելի մեծ թվով չեզոք յերկրներ ներդրովել պատերազմի իրենց սֆերայի մեջ: Թյուրքիան չի՞ ափսոսա արդյոք այդ մասին—գուշակություն չենք անի: (Ա. շ խ ու ժ ու թ յ ու ն դ ա հ լ ի-

ճ ու մ :) Մեղ միայն մնում է նշել այդ նոր մոմենտները մեր հա-
րեանի արտաքին քաղաքականության մեջ և ուշադիր հետևել
իրադարձությունների զարգացմանը :

Յեթե Թյուրքիան այժմ վորոշ չափով կապել է իր ձեռքերը և
հակվել պատերազմող կողմերից մեկին ցույց տրվելիք՝ իր համար
ռիսկի հետ կապված աջակցությանը, ապա, ակնբախ է, վոր
Թյուրքական կառավարությունը գիտակցում է այն պատասխա-
նատվությունը, վոր նա դրանով վերցրեց իր վրա : Բայց դա այն
արտաքին քաղաքականությունը չէ, վորին հետևում է խորհրդ-
դային Միությունը, և վորի շնորհիվ խորհրդային Միությունն
արդեն ապահովել է վոչ-քիչ արտաքին-քաղաքական՝ հաջողու-
թյուններ : Խորհրդային Միությունը գերադասում է այսուհետև
էլ իր ձեռքերն ազատ թողնել, հետևողականորեն կիրառել չեզո-
քության իր քաղաքականությունը և վոչ միայն չնպաստել պա-
տերազմի հրահմանը, այլ նպաստել խաղաղությունը վերա-
կանգնելու ուղղությամբ յեղած ձգտումների ամրապնդմանը :
Մենք հավատացած ենք, վոր խաղաղության այն քաղաքակա-
նությունը, վոր անչեղորեն վարում է ԽՍՀՄ, հետագայում ևս
ունի լավագույն հեռանկարներ : Այդ քաղաքականությունը մենք
կկիրառենք Սև ծովի շրջանում ևս, հավատացած լինելով, վոր
լիովին կապահովենք նրա հարկ յեղած կիրառումը, ինչպես այդ
պահանջում են խորհրդային Միության և նրա հետ բարեկամ
պետությունների շահերը : (Մ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր :)

Այժմ ճ ա պ ո ն ի ա յ ի հետ մեր ունեցած հարաբերությունների
մասին :

Վերջին ժամանակներս խորհրդային-ճապոնական հարաբերու-
թյունների մեջ կա վորոշ բարելավում : Այդ բարելավումը նկատ-
վեց վերջերս Մոսկվայում կայացած համաձայնության ժամա-
նակից, վորի հետևանքով լիկվիդացիայի յենթարկվեց մոնղոլա-
մանջուրական սահմանի վրա ծաղած հայտնի կոնֆլիկտը :

Մի շարք ամիսների ընթացքում, ավելի ճիշտ ասած՝ մայիսի,
հունիսի, հուլիսի, ոգոստոսի ընթացքում և մինչև սեպտեմբերի
կեսերը Նոմանխանի շրջանում, վորը կից է մոնղոլա-մանջուրա-
կան սահմանին, ռադմական գործողություններ էյին տեղի ունե-
նում ճապոնա-մանջուրական և խորհրդային-մոնղոլական զոր-
քերի մասնակցությամբ : Այդ ժամանակաշրջանում տեղի ունե-
ցած մարտական գործողություններին մասնակցում էյին ղեկավար-
ողոր տեսակները, ներառյալ ավիացիան ու ծանր հրետանին,
խսկ կոլովները յերբեմն ընդունում էյին չափազանց արյունահեղ
բնույթ : Վոչ վրեժի պեսք չեկող կոնֆլիկտը քիչ զոհեր չառա-

ջացրեց մեր կողմում, բայց այդ զոհերը մի քանի անգամ ավելի
էյին ճապոնա-մանջուրական կողմում : Վերջապես, ճապոնիան
դիմեց մեզ, առաջարկելով լիկվիդացիայի յենթարկել կոնֆլիկ-
տը, և մենք հոժարությամբ ընդառաջ դնացինք ճապոնական կա-
ռավարությանը :

Ինչպես հայտնի յե, կոնֆլիկտը ծաղեց այն բանի հետևանքով,
վոր ճապոնիան ձգտում էր յուրացնել Մոնղոլական Ժողովրդա-
կան Հանրապետության տերիտորիայի մի մասը և այդ ճանա-
պարհով բռնի կերպով, հոգուտ իրեն, փոփոխել մոնղոլա-ման-
ջուրական սահմանը : Այսպիսի միակողմանի մեթոդը պետք է
վճռական հակահարվածի հանդիպեր և մեկ անգամ ևս ցույց
տվեց իր լիակատար անանկությունը, յերբ խոսքը վերաբերում
է խորհրդային Միությանը կամ նրա դաշնակիցներին : Յեթե
լեհաստանի չարաբաստիկ որինակով վերջերս ցուցադրվեց, թե
յերբեմն վորքան եժան է լինում Յեյրոպայի վորոշ մեծ տերու-
թյունների կողմից ստորադրված փոխադարձ ուղնության պակ-
տերի դինը (ծ ի ծ ա դ), ապա մոնղոլա-մանջուրական սահմանի
վրա ցուցադրվեց միանգամայն այլ բան : Այստեղ ցուցադրվեց
փոխադարձ ուղնության այն պակտերի նշանակությունը, վորոնց
տակ դրված է խորհրդային Միության ստորադրությունը :
(Բ ու ո ն, յ ե ր կ ա ր Ժ ա մ ա ն ա կ չ լ ո ո ղ Ծ ա փ ա հ ա ր ու
թ յ ու ն ն ե ր :)

Ինչ վերաբերում է հիշյալ կոնֆլիկտին, ապա սեպտեմբերի
15-ին Մոսկվայում կնքված խորհրդային-ճապոնական համաձայ-
նության հետևանքով այն լիկվիդացիայի յենթարկվեց և մոնղո-
լա-մանջուրական սահմանի վրա լիովին վերականգնված է խա-
ղաղություն : Դրանով իսկ արվեց առաջին քայլը խորհրդային-
ճապոնական հարաբերությունների բարելավման ուղղությամբ :

Հերթի յե դրված սահմանային խառը հանձնաժողովի ստեղ-
ծումը՝ խորհրդային-մոնղոլական և ճապոնա-մանջուրական կող-
մերի ներկայացուցիչներից : Այդ հանձնաժողովը պետք է քննար-
կի սահմանային մի քանի վիճելի հարցեր : Կարելի յե չտարա-
կուսել, վոր յեթե բարի կամք արտահայտվի վոչ միայն մեր
կողմից, ապա սահմանային հարցերի գործուն քննարկման մե-
թոդը կտա դրական արդյունքներ :

Բացի դրանից, պարզվեց խորհրդային-ճապոնական առևտրի
հարցերի վերաբերյալ բանակցություններ սկսելու հնարավորու-
թյունը : Զի կարելի չխոստովանել, վոր խորհրդային-ճապոնա-
կան ապրանքաշրջանառության զարգացումը համապատասխանում
է յերկու պետությունների շահերին :

Այսպիսով, մենք հիմք ունենք խոսելու Ճապոնիայի հետ մեր հարաբերությունների նկատմամբ բարեկամական մասին: Այժմ դժվար է դատել, թե ինչ չափով կարելի չե հույս դնել այդ տենդենցի արդյունավետության վրա: Մեզ դեռ չի հաջողվել պարզել, թե դրա համար վորքան լուրջ կերպով է հող նախապատրաստված ճապոնական շրջաններում: Իմ կողմից պետք է ասեմ, վոր մենք դրական վերաբերմունք ունենք դեպի ճապոնական այդ տեսակի առաջարկները, մոտենալով դրանց մեր հիմնական քաղաքական դիրքի և խաղաղության շահերի նկատմամբ ունեցած հոգատարության տեսակետից:

Վերջապես, մի քանի խոսք ուղղական կոնտրաբանդայի և չեղող յերկրներից՝ պատերազմող յերկրները դենք արտահանելու մասին:

Որքան հրապարակվեց խորհրդային Կառավարության նոտան՝ ի պատասխան Անգլիայի սեսյամբերի 6-ի և 11-ի նոտաների: Մեր նոտայի մեջ շարադրված է խՍՀՄ տեսակետը ուղղական կոնտրաբանդայի հարցերի նկատմամբ և մատնանշված է, վոր խորհրդային Կառավարությունը չի կարող ուղղական կոնտրաբանդա համարել սննդամթերքները, վառելիքը՝ խաղաղ բնակչության համար, և հագուստի առարկաները, վոր մասսայական սպառման առարկաների ներմուծումն արգելվելը նշանակում է յերեխաներին, կանանց, ծերունիներին, հիվանդներին դատապարտել աղետների ու սովամահության: Խորհրդային Կառավարությունը նոտայի մեջ մատնանշում է, վոր այդպիսի հարցերը չեն կարող լինել միակողմանի վորոշման առարկա, ինչպես այդ արեց Անգլիան, այլ պետք է լուծվեն տերությունների ընդհանուր համաձայնությամբ: Մենք հույս ունենք, վոր չեղող յերկրները, ինչպես նաև Անգլիայի ու Ֆրանսիայի հասարակական կարծիքը, կընդունեն մեր դիրքի ճշտությունը և միջոցներ ձեռք կառնեն, վորպեսզի պատերազմող յերկրների բանակների միջև մղվող պատերազմը չվերածվի պատերազմի՝ ընդդեմ մանուկների, կանանց, ծերունիների, հիվանդների: Համենայն դեպս մեր յերկիրը, վորպես չեղող յերկիր, վորը չահագործված չե պատերազմի հրահրումով, ձեռք կառնի բոլոր միջոցները, վորպեսզի պատերազմը դարձնի ավելի պակաս չափով ավերիչ, թուլացնի այն և արագացնի նրա ավարտումը՝ հոգուտ խաղաղության շահերի:

Այսպիսի հեռանկարի տեսակետից, ամերիկյան Կառավարության վորոշումը՝ պատերազմող յերկրները դենք արտահանության արգելքը (եմբարգոն) վերացնելու մասին, առաջացնում է

տրինական տարակուսներ: Հաղիվ թե կարող է տարակուս լինել, վոր այդ վորոշման արդյունքը լինի վոչ թե պատերազմի թուլացումը և վոչ թե պատերազմի վախճանի մոտեցումը, այլ ընդհակառակը՝ պատերազմի ուժեղացումը, սրումը և ձգձգումը: Իհարկե, այդպիսի վորոշումը կարող է բարձր շահույթներ ապահովել ամերիկյան ուղղական արդյունաբերության համար: Բայց ահա մի հարց՝ այդ հանգամանքը կարող է արդյոք արդարացում ծառայել Ամերիկայից դենք արտահանության եմբարգոյի վերացման համար: Պարզ է, վոր չի կարող:

Սա չե միջադեպին իրադրությունը ներկայումս:

Մրանք են խորհրդային Միության արտաքին քաղաքականության հիմունքները:

(Բոլոն, յերկար ժամանակ չլուրջ ծափահարության և յերկրներ, վորոնք փոխվում են ովացիայի: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Նախագահող: Անցնում ենք ընկեր Մոլոտովի ղեկուցման քննարկմանը:

Ո՞վ է խոսք խնդրում:

Խոսք ունի դեպուտատ Կուզնեցովը:

Ա. Ա. Կուզնեցով (Վոլխովի ոկրուդ, Լենինգրադի մարզ): Ընկեր դեպուտատներ: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի արտահերթ Ձորորդ Սեսիայի դումարման մոմենտից անցել է յերկու ամիս: Այդ ժամանակի ընթացքում մեր խորհրդային Կառավարության արտաքին քաղաքականությունն իսկական տրիումֆեր: Խորհրդային Միության անվտանգությունն ամրապնդելու համար խորհրդային Կառավարության ձեռնարկած քայլերը, Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի յեղբայրական ժողովուրդներին ոգնություն ցույց տալը, ԽՍՀՄ և Գերմանիայի միջև բարեկամության ու սահմանի վերաբերյալ կնքված պայմանագիրը, ԽՍՀՄ և Յստոնիայի, ԽՍՀՄ և Լատվիայի, ԽՍՀՄ և Լիտվայի միջև փոխադարձ ոգնության պակտերը հավանություն են դնում ամբողջ խորհրդային ժողովրդի և ամբողջ աշխարհում խաղաղության բոլոր բարեկամների կողմից: (Ծափահարություն յոլուններ:)

Խորհրդային պետության արտաքին իմաստուն քաղաքականությունը հաղթանակներ տարավ, վորովհետև նրան վոզենչում և ուղղություն է տալիս մեր պանծալի բոլշևիկյան կուսակցությունը, մեր առաջնորդ և ուսուցիչ ընկեր Ստալինը: (Բոլոն, յերկարատև ծափահարություն յոլուններ: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

դատարութիւնը, վոր հանդես են բերում մեր կուսակցութիւնը, մեր Կառավարութիւնը և անձամբ ընկեր Ստալինը՝ սոցիալիստական հեղափոխութեան որդան Լենինգրադ քաղաքի անվտանգութեան ամրապնդման նկատմամբ: Լենինգրադի աշխատաւորութեան անունից յես հայտնում եմ Կառավարութեանը, ընկեր Մոլոտովին, բոլշևիկյան կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեին, ընկեր Ստալինին լենինգրադցիների խորին շնորհակալութիւնը: (Մ ա փ ա հ ա ռ ու թ յ ու ն ն ե ռ :)

Ընկե՛ր դեպուտատներ: Նկատի ունենալով խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան Կառավարութեան արտաքին քաղաքականութեան սպառնիչ պարզութիւնն ու հետևողականութիւնը, յես մտնում եմ հետևյալ առաջարկը.

1) խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան Ժողովրդական Կոմիսարների խորհրդի Նախագահ և Արտաքին գործերի Ժողովրդական Կոմիսար ընկ. Վ. Մ. Մոլոտովի ղեկուցման շուրջը մտքերի փոխանակութիւն չբանալ:

2) Ընկ. Մոլոտովի ղեկուցման վերաբերյալ ընդունել հետևյալ վորոշումը.

«խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան Գերագույն խորհուրդը, լսելով խորհրդային Կոմիտեի խորհրդի Նախագահ և Արտաքին գործերի Ժողովրդական Կոմիսար ընկ. Վյաչեսլավ Միխայլովիչ Մոլոտովի ղեկուցումը Կառավարութեան արտաքին քաղաքականութեան մասին, վորոշում է.

Հաւանութիւն տալ Կառավարութեան արտաքին քաղաքականութեանը»: (Մ ա փ ա հ ա ռ ու թ յ ու ն ն ե ռ :)

Նախագահող: Ո՞վ է ցանկանում արտահայտվել դեպուտատ Կուզնեցովի մտքրած առաջարկների առթիւ:

Ձայներ: Ընդունել:

Նախագահող: Այդ դեպքում թույլ տվե՛ք նախ և առաջ քվեարկել դեպուտատ Կուզնեցովի մտքրած առաջարկն այն մասին, վոր նկատի ունենալով ընկեր Մոլոտովի ղեկուցման մեջ շարադրված Կառավարութեան արտաքին քաղաքականութեան լրիվ պարզութիւնը, մտքերի փոխանակութիւն չբանալ: Քվեարկում են յերկու պալատների դեպուտատները:

Ով կողմնակից է ընդունել դեպուտատ Կուզնեցովի մտքրած այս առաջարկը, խնդրում եմ ձեռք բարձրացնել: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ձեռնպահ: Չկա:

Առաջարկն ընդունվում է միաձայն:

Անցնում ենք դեպուտատ Կուզնեցովի մտքրած հետևյալ առաջարկի քննարկմանը:

Յես խորից եմ հրապարակում այդ առաջարկը. «խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան Գերագույն խորհուրդը, լսելով խորհրդային Կոմիսարների խորհրդի Նախագահ և Արտաքին գործերի Ժողովրդական Կոմիսար ընկ. Վյաչեսլավ Միխայլովիչ Մոլոտովի ղեկուցումը՝ Կառավարութեան արտաքին քաղաքականութեան մասին, վորոշում է.

Հաւանութիւն տալ Կառավարութեան արտաքին քաղաքականութեանը»:

Այս առաջարկը քվեարկում եմ ըստ պալատների առանձին առանձին:

Քվեարկում են Աղդութիւնների խորհրդի դեպուտատները:

Ով կողմնակից է ընդունել այս առաջարկը, խնդրում եմ ձեռք բարձրացնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ձեռնպահ: Չկա:

Քվեարկում են Միութեան խորհրդի դեպուտատները:

Ով կողմնակից է առաջարկն ընդունել, խնդրում եմ ձեռք բարձրացնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ձեռնպահ: Չկա:

Այսպիսով, Կառավարութեան արտաքին քաղաքականութեանը հաւանութիւն տալու վերաբերյալ վորոշումը Գերագույն խորհրդի կողմից ընդունված է միաձայն: (Բ ու ո ն , յ ե ռ կ ա ռ ա տ և ծ ա փ ա հ ա ռ ու թ յ ու ն ն ե ռ :)

Ընկե՛ր դեպուտատներ: Առաջարկ կա Գերագույն խորհրդի հետևյալ նիստը հրապարակել վաղը յերեկոյան ժամը 6-ին:

Ուրիշ առաջարկներ վա՞ն: Չկան:

Նիստը հայտարարում եմ փակված:

ՅԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ

(1939 թ. նոյեմբերի 1-ին)

Նախագահության մեջ Միության հարերդի Նախագահ ընկ. Ա. Ա. Անդրեևի, Ազգության մեջ Նախագահ ընկ. Ն. Մ. Շվերնիկի և նրանց տեղակալներ—ընկերներ Տ. Դ. Լիսենկոյի ու Չ. Ա. Ասլանովայի, իսկ ռոյակներում՝ ընկերներ Ստալինի, Մուխոմովի, Վսրոշիովի, Կալինինի, Լ. Մ. Կազանովիչի, Ժգանովի, Միկոյանի, Խուլաշևի, Բերիայի, Մալենկովի և ուրիշների յերևալը դեպատատները դիմավարում են բուռն ծափահարություններով, վարմի փոխվում են ովացիայի։ Բուրբ վտտի յեն կանգնում։ Լսվում են բացականչություններ. «Կեցցե՛ ընկեր Ստալինը», «Ընկեր Ստալինին ուռա՛»։

Նախագահում ե Միության հարերդի Նախագահ Ա. Ա. Անդրեևը։

Նախագահող։ Ընկե՛ր դեպուտատներ։ Միության խորհրդի և Ազգության մեջ Նախագահի խորհրդի համատեղ նիստը հայտարարում եմ բացված։

Անցնում ենք որակարգի յերկրորդ հարցի ըննարկմանը — Արևմտյան Ուկրաինայի Ժողովրդական Ժողովի Լիազոր Հանձնաժողովի հայտարարությանը։ (Դա հիշե՛ն մտնում Արևմտյան Ուկրաինայի Ժողովրդական Ժողովի Լիազոր Հանձնաժողովի անդամները։ Բոլորն ծափահարում են թացական չուլներով. «Կեցցե՛ Արևմտյան Ուկրաինայի ազատագրված Ժողովուրդը», «Կեցցե՛ մեր առաջնորդ, ուսուցիչ և բարեկամ ընկեր Ստալինը»)։ Հայտարարության համար խոսքը տրվում ե Արևմտյան Ուկրաինայի Ժողովրդական Ժողովի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Պանչիչին։ (Բոլորն ծափահարում են թացական չուլներով. «Կեցցե՛ ընկեր Ստալինը», «Ընկեր Ստալինին ուռա՛»)։

Մ. Ի. Պանչիչին (բժշկական դիտուլ յուլներ ղուլտոր)։ Ծառն արտասանված ե ուկրաիններն լեզվով։

խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Միության Գերագույն խորհրդի ընկե՛ր դեպուտատներ։ Յես հանդես եմ գալիս Արևմտյան Ուկրաինայի Ժողովրդական Ժողովի Լիազոր Հանձնաժողովի անդամ, վորը հավաքվելով Լվով քաղաքում, ընտրել ե մեզ, արևմտա-ուկրաինական Ժողովրդի զավակներին ու դուստրերին, վորպեսդի մենք գանք այստեղ, խորհրդային Միության մայրաքաղաքը, կարմիր Մոսկվա, և այստեղ, խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Միության Գերագույն խորհրդի նիստում շարադրենք մեր Ժողովրդի ամենախոր իղձերը, ձգտումներն ու հույսերը։

Արևմտյան Ուկրաինայի ազատագրված Ժողովրդի առաջին խոսքը, վորը հնչեց այստեղ, Լվովում տեղի ունեցած Ժողովրդական Ժողովում, և վորը հրավանքով հնչում ե այստեղ, Միության Գերագույն խորհրդի նիստում, մեր առաջին թանկագին խոսքը հանդիսանում ե սրտի խորքից բղխող մեծ շնորհակալության խոսքը մեր յեղբայրներին—խորհրդային Ժողովուրդներին, ամենախորին շնորհակալության խոսքը մեր առաջնորդին, Արևմտյան Ուկրաինայի ազատագրման վորդենչողին, ընկեր Ստալինին։ (Բոլորն ծափահարում են թացական չուլներով. «Կեցցե՛ ընկեր Ստալինը», «Ընկեր Ստալինին ուռա՛»)։

Ուկրաինական Ժողովրդական Ժողովն Արևմտյան Ուկրաինայի պատմության մեջ առաջին անգամ՝ Արևմտյան Ուկրաինայի Ժողովուրդների ազատ կամքի իսկապես հավատարիմ, լիազոր ու խոր արտահայտիչն ե հանդիսանում։ Իր զավակներին ու դուստրերին ընտրելով Ժողովրդական Ժողովի դեպուտատներ, Ժողովուրդը հնարավորություն ուներ ազատորեն և անբռնադրուիկ կերպով ընտրելու նրանց, վորոնք արժանի յեն իր վստահությանը, վորոնք հավատարմությամբ պետք ե ծառայեն իրեն։

Մեր վրա այլևս չեր շառաչում պանական մտրակը։ Մեր դրլխին այլևս չեր կանգնած պանական ժանդարմը։ Ժողովուրդն ազատ ձայներով ընտրեց իր ներկայացուցիչներին։ Այդ ապահովված եր այն հիմունքներով, վորոնց վրա հիմնվում եյին ընտրությանը. Ժողովրդական Ժողովի դեպուտատներն ընտրվեցին ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի

Հիման վրա՝ դատանի քվեարկությամբ: Մեզ համար դեռևս չտեսնված վոգելորության և ընտրողների ակտիվության մթնոլորտում տեղի ունեցան ընտրությունները:

Ընտրություններին 4766 275 ընտրողներից մասնակցեցին 4433 997 մարդ, այսինքն՝ 92,83%-ը: Այդ արտասովոր նշանակալի թիվ է: Չե՞ վոր բավական է ասել, վոր պանական Լեհաստանում ժեյմի վերջին ընտրությունների ժամանակ մասնակցել և ընտրողների միայն 45%-ը:

Գյուղական կոմիտեների, բանվորների, ինտելիգենցիայի ժողովների, բանվորական գլխավորի ժողովների, ժամանակավոր վարչությունների կողմից առաջադրված թեկնածուների ողտին քվեարկեցին 4 032 154 մարդ, այսինքն՝ ընդհանրապես բոլոր քվեարկողների 90,93%-ը:

Ժողովրդական ժողովում ընտրվեցին արևմտա-ուկրաինական հողի իսկական տերերը: Ընտրվածների մեջ կան 402 բանվոր, 819 գյուղացի, 234 աշխատավոր ինտելիգենտ: Ընտրվածների թվում են 239 կանայք, վորոնք այսուհետև բոլոր իրավունքներով հավասար են տղամարդկանց:

Այսպիսով, Արևմտյան Ուկրաինայի ժողովրդական ժողովը հանդիսանում է մեր ժողովրդի բացարձակ մեծամասնության կամքի իսկական լիազոր արտահայտիչը: Ժողովրդական ժողովի ձայնով է խոսել և իր կամքը հաստատել մեր ամբողջ ազատագրված ժողովուրդը: Իր կամքն ազատ կերպով արտահայտելու այդ հնարավորությունը մեր ժողովրդին տվել է մեր ազատաբարը—պանծալի Կարմիր Բանակը, վորը յեղբայրական խորհրդային ժողովուրդների հրամանով յեկավ մեզ մոտ, փրկեց մեզ քայքայումից ու կորստից, ազատագրեց մեզ և հնարավորություն տվեց մեզ ապրելու ազատ, բերկրալի, ստեղծագործական կյանքով: (Բ ու ու ն ծ ա մ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր :)

Ընտրելով իր ներկայացուցիչներին, Արևմտյան Ուկրաինայի ժողովուրդը նրանց տվել է նակազ, վորի մեջ արտացոլվել են նրա ամենախոր ձգտումները: Այդ մի նակազ եր դեպուտատներին՝ իրենց ձայները տալու Արևմտյան Ուկրաինայի տերիտորիայում Խորհրդային իշխանություն, աշխատավոր ժողովրդի իշխանություն, բանվորների և գյուղացիների իշխանություն հաստատելու ողտին, միակ իշխանությունը, վորը հնարավորություն ունի փպահանջելու մեր յերկրի ազատությունը, ծաղկումն ու բարեկեցությունը, ժողովուրդների բարեկամությունը, ամեն տեսակի ճնշման և չահագործման վոջնչացումը:

Ընտրելով իր դեպուտատներին, Արևմտյան Ուկրաինայի ժողո-

վուրդը նակազ է տվել նրանց քվեարկելու կալվածատիրական, վանքապատկան և չինովնիկական բոլոր հողերի կոնֆիսկացիայի ողտին, բանկերի և խոշոր արդյունաբերության ազգայնացման ողտին:

Այսպիսին եր Արևմտյան Ուկրաինայի ընտրողների նակազը: Յեվ Ուկրաինական Ժողովրդական Ժողովի դեպուտատները, վորպես իրենց ժողովրդի հավատարիմ գավակներ, հաստատեցին այդ նակազը, հաստատեցին ժողովրդի այդ կամքը: Ուկրաինական Ժողովրդական Ժողովը, այս տարվա հոկտեմբերի 27-ի և 28-ի իր նիստերում միաձայն և միահամուռ կերպով ընդունեց իր պատմական Դեկլարացիաները:

Արևմտյան Ուկրաինայի պետական իշխանության վերաբերյալ Դեկլարացիայի մեջ ասված է.

«Արտահայտելով Արևմտյան Ուկրաինայի ազատագրված ժողովրդի միահամուռ կամքը, հետևելով հորիզոնային ժողովուրդների որինակին, Ուկրաինական ժողովրդական ժողովը հռչակում է հորիզոնային իշխանության հաստատումն Արևմտյան Ուկրաինայի ամբողջ տերիտորիայում: Այսուհետև ամբողջ իշխանությունն Արևմտյան Ուկրաինայում պատկանում է փառաքի և գյուղի աշխատավորներին, հանձին աշխատավորների դեպուտատների հորիզոնային»: (Բ ու ու ն ծ ա մ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր :)

Արևմտյան Ուկրաինան Ուկրաինական Խորհրդային Մոցիալիստական Հանրապետության կազմի մեջ մտնելու վերաբերյալ Ուկրաինական Ժողովրդական Ժողովի Դեկլարացիայի մեջ հաստատվել են ուկրաինական ժողովրդի բաղամայա հույսերը՝ ուկրաինական հողերը միասնական պետության մեջ միավորելու նկատմամբ, հաստատվել է արևմտա-ուկրաինական ժողովրդի ջերմ ձգտումը՝ միաձուլվելու խորհրդային ժողովուրդների հզոր ընտանիքի—մեծ Խորհրդային Միության մեջ:

Կալվածատիրական հողերի կոնֆիսկացիայի վերաբերյալ Դեկլարացիայի մեջ Ուկրաինական Ժողովրդական Ժողովը հայտարարել է հետևյալը.

«Արևմտյան Ուկրաինայի աշխատավորների միահամուռ կամքին և ձգտումներին լիովին համապատասխան, պահպանելով նրանց հարազատ ու կենսական շահերը, հետևելով հորիզոնային ժողովուրդների որինակին, Ուկրաինական ժողովրդական ժողովը հռչակում է Արևմտյան Ուկրաինայի տերիտորիայում կալվածատիրական, վանքապատկան և պետական

խոշոր չինովնիկների հոգերի կոնֆիսկացիա՝ նրանց ամբողջ կեն-
դանի ու վեոյալ ինվեստարով և կալվածքային կառուցումներով։
Ժողովրդական ժողովը հաստատում է կալվածատիրական հո-
գերի առանց փրկավմարի գրավումը գյուղացիական կոմիտե-
ների միջոցով, ժամանակավոր վարչառքյունների ղեկավարու-
թյամբ, և դրանց հանձնումն աշխատավոր գյուղացիության ոգ-
տագործմանը։ «Ոսադնիկների» հոգերի հարցը վճռում են գյու-
ղացիական կոմիտեները»։

Արևմտյան Ուկրաինայում բանկերի ու խ... ր արդյունաբե-
րույթյան ազգայնացման վերաբերյալ Դեկլարացիայի մեջ Ուկ-
րաինական Ժողովրդական Ժողովը հայտարարել է․

«Շահագործողներին անառնաբար նկշելու և մարդու կողմից
մարդու ամեն սեռակ շահագործումը վնջնացնելու նպատակով,
արտահայտելով Արևմտյան Ուկրաինայի ամբողջ ժողովրդի
միահամուռ կամքը, հետևելով հորհրդային Սոցիալիստական
Հանրապետությունների Միության որիմակին, Ուկրաինական
Ժողովրդական Ժողովը հռչակում է Արևմտյան Ուկրաինայի
բանկերի և խոշոր արդյունաբերության ազգայնացումը»։

Չորս Դեկլարացիաների մեջ Ուկրաինական Ժողովրդական Ժո-
ղովը հաստատեց մեր Ժողովրդի կամքը։ Անսասանորեն սահման-
ված են տնտեսական, քաղաքական և կուլտուրական նոր կյանքի
այն հիմքերը, վորոնք մեր Ժողովրդի համար կրեբեն, ինչպես
վոր արդեն բերել են ազատ խորհրդային Ժողովուրդների հա-
մար, հաղթանակ հաղթանակի հետևից, լուսաշող յերջանկու-
թյուն, ծաղկող բարեկեցություն, խնդություն և կուլտուրա։
Սահմանված են այն հիմքերը, վորոնք վերջնականապես կվո-
չընչացնեն ամեն տեսակի սոցիալական ու ազգային ճնշումը մեր
Ժողովրդի նկատմամբ։ Արևաշող նոր ուր փայլեց արևմտա-ուկ-
րաինական հողի վրա։

Մենք այստեղ ենք բերել Ուկրաինական Ժողովրդական Ժո-
ղովի՝ մեր Ժողովրդի համար անմոռանալի, պատմական Դեկլա-
րացիաների տեքստերը, վորպեսզի մեր վորոշումները ներկայա-
ցնենք խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների
Միության Գերագույն խորհրդին։ Թույլ տվեք ձեզ համար կար-
գալ Արևմտյան Ուկրաինան Ուկրաինական խորհրդային Սոցիա-
լիստական Հանրապետության կազմի մեջ մտնելու վերաբերյալ
Ուկրաինական Ժողովրդական Ժողովի Դեկլարացիայի տեքստը։

«Ընդունված է միաձայն 1939 թ. հոկտեմբերի 27-ի նիստում։

Ուկրաինական Ժողովուրդը նախկին լեհական պետության մեջ
գաղապարտված էր մահացման։ Նրան վիճակված էր ճնշվել,

վոչնչանալ ու կողոպտվել։ Լեհական պաներն անում էյին ամեն
ինչ, վորպեսզի լեհացնեն ուկրաինական բնակչությունը, արգելել
էյին մինչև իսկ ուկրաինացի բառը, փոխարինելով այդ «բիդլո»
և «խուպ» բառերով։

Ուկրաինական գյուղացիներին զրկում էյին հողից։ Ուկրա-
նացի բանվորներին ու ծառայողներին թույլ չէյին տալիս աշ-
խատել Փարիզի քաղաքում, գործարաններում և հիմնարկներում։
Ուկրաինացիներին չէյին ընդունում ուսումնական հաստատու-
թյունները։ Արմատախիլ էյին անում ուկրաինական մայրենի
լեզուն։ Ձգտում էյին վոչնչացնել ուկրաինական կուլտուրան։
Այս ամենը բազմիցս առաջացրել է բողոքի փոթորիկ, գյուղա-
ցիական ապստամբություններ՝ ընդդեմ պանական Լեհաստանի
կառավարող շրջանների գաղութային ուժերի։

Բայց վերջապալ ճնշման և իրավազրկության ժամանակը։
Բազմազգ խորհրդային ամբողջ Ժողովրդի կամքով, խորհրդային
Կառավարության ցուցումով Կարմիր Բանակն Արևմտյան Ուկ-
րաինայի Ժողովրդին ընդմիջտ ազատագրեց լեհական կալվածա-
տերերի ու կապիտալիստների իշխանությունից։

Վեչենքում, Ժողովներում, միտինգներում Ժողովուրդը միա-
համուռ կերպով արտահայտում է մեծ խորհրդային Միության
Ժողովուրդների յեղբայրական ընտանիքի մեջ միաձուլվելու և
Ուկրաինական խորհրդային Սոցիալիստական Հանրապետության
կազմի մեջ մտնելու իր անհողող կամքը։ Վորովհետև միայն
խորհրդային Միության մեջ է, վորտեղ իշխանության գլուխ
կանգնած են բանվորներն ու գյուղացիները, վոր վոչնչաց-
ված է մարդու շահագործումը մարդու կողմից, իրականաց-
ված է Ժողովուրդների փոխադարձ ոգնությունը տնտեսական
ու հասարակական կյանքի բոլոր բնագավառներում։ Վորովհետև
միայն խորհրդային Միության մեջ է յուրաքանչյուր Ժողովրդի
համար հնարավոր ազգային կուլտուրայի — բառիս բուն իմաս-
տով Ժողովրդական կուլտուրայի լիակատար ծաղկումը։ Վորով-
հետև միայն խորհրդային Միության մեջ է անհետացել Ժողո-
վուրդների միջև փոխադարձ անվստահության զգացմունքը և
բուրժուազիայի կողմից արմատավորվող ազգային յերկպառա-
կության փոխաբեն, աճել ու ամրապնդվել է Ժողովուրդների
բարեկամությունը։

խորհրդային Միության մեջ ծաղկում է Ուկրաինական խո-
հրդային Սոցիալիստական Հանրապետությունը։ Կառուցված են
հարյուրավոր հզոր գործարաններ ու Փարիզի քաղաքում, վորտեղ
աշխատում է շահագործում չիմացող բանվոր դասակարգը։ Աճել

և տնտեսապես ամրապնդվել և ուկրաինական գյուղացիութիւնը, վորը տիրապետում է ամբողջ հողին և այն մշակում է նորագույն տեխնիկայով: Խորհրդային իշխանութիւնը և կոմունիստական կուսակցութիւնը ստեղծել են բոլոր պայմաններն իսկական ժողովրդական ուկրաինական խորհրդային կուլտուրայի ծաղկման համար: Ուկրաիններեն լեզուն — պետական լեզու յե: Խորհրդային յերկրի ժողովուրդները զավակներն ու զուտները զեկավար պոստներն գրավում քաղաքական, տնտեսական, կուլտուրական ու հասարակական կյանքի բոլոր բնագավառներում: Խորհրդային Ուկրաինայի յերիտասարդության համար ապահոված է իր մայրենի լեզվով սովորելու, գիտության բարձունքներին տիրապետելու լիակատար հնարավորութիւնը:

Արեւմտյան Ուկրաինայի ժողովուրդը գիտե այդ:

Ուկրաինական ժողովրդական ժողովը, հանդիսանալով Արեւմտյան Ուկրաինայի ժողովրդի անհողդողդ կամքի ու իղձերի արտահայտիչը, վորոչում է:

Խնդրել ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդին՝ Արեւմտյան Ուկրաինան ընդունելու Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միության կազմի մեջ, Արեւմտյան Ուկրաինան մտցնելու Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմի մեջ այն հաշվով, վարպետի ուկրաինական ժողովրդին վերամիավորել միասնական պետության մեջ, վերջ դնել ուկրաինական ժողովրդի դարավոր անջատվածությանը:

Ժողովրդական ժողովը հաստատ համոզմունք է հայտնում, վոր Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միության Գերագույն Խորհուրդը վերավարարի Արեւմտյան Ուկրաինայի ժողովրդի այդ խնդիրքը, վորպեսզի նա ԽՍՀՄ ժողովուրդների միասնական ու համերաշխ ընտանիքում, բուլլեիկների կոմունիստական կուսակցության զեկավարութեամբ, ընթանա նոր, յերջանիկ կյանքի ուղիով:

Կեցցե՛ք ազատ Խորհրդային Ուկրաինան:

Կեցցե՛ք ժողովուրդների յեղբայրութիւնը:

Կեցցե՛ք Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութիւնը — ամբողջ աշխարհի աշխատավորների հայրենիքը: (Աղմկալից ծափահարութիւններ: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Թույլ տվեք Խորհրդային Միության Գերագույն Խորհրդի արտահերթ Սեսիայի նախագահողին հանձնել Ուկրաինական ժողովրդական ժողովի վորոչումը:

(Աղմկալից ծափահարութիւններ: Բոլորը վոտ-

քի յեն կանգնում: Ընկեր Պանչիշինը նախագահողին է հանձնում Ուկրաինական ժողովրդական ժողովի վորոչումը:)

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միության Գերագույն Խորհրդի ընկե՛ր զեպուտատներ: Ուկրաինական ժողովրդական ժողովի անունից, Արեւմտյան Ուկրաինայի այսուհետեւ ազատ, այսուհետեւ հաւասար, այսուհետեւ նոր կյանքի արևով լուսավորված բոլոր ժողովուրդների անունից մենք խնդրում ենք Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միության Գերագույն Խորհրդին՝ Արեւմտյան Ուկրաինան ընդունել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միության կազմի մեջ, Արեւմտյան Ուկրաինան մտցնել Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմի մեջ և դրանով իսկ ուկրաինական ժողովուրդը վերամիավորել միասնական պետության մեջ, վերջ դնել ուկրաինական ժողովրդի դարավոր անջատվածութիւնը:

Մենք ձգտում ենք միաձուլվել ազատ Խորհրդային ժողովուրդների մեծ ընտանիքի մեջ: Մենք ցանկանում ենք ապրել Ստալինյան Սահմանադրության դրոշի տակ: (Բուռն ծափահարութիւններ:)

Ժողովրդի ամբողջ մեծ սրտով, ժողովրդի ամբողջ մաքուր, անմահ հողով մենք զգում ու հավատում ենք, վոր Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միության Գերագույն Խորհուրդը կրավարարի Արեւմտյան Ուկրաինայի ժողովրդի այս խնդիրքը, վորպեսզի նա Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միության ժողովուրդների միասնական ու համերաշխ ընտանիքում՝ բուլլեիկների կոմունիստական կուսակցության զեկավարութեամբ, մեր իմաստուն ուսուցիչ, բարեկամ և հայր—ընկեր Ստալինի զեկավարութեամբ (բուռն ծափահարութիւններ, բոլորը վոտքի յեն կանգնում) ճշմարիտ ուղիով ընթանա զեպի նոր, յերջանիկ կյանք:

Մենք գիտենք, վոր մեր ժողովրդի համար այլևս յերբեք չեն վերադառնա այն սարսափելի, արյունոտ ժամանակները, այն յերկար ու ահալոր հարյուրամյակները, յերբ սովի, ստորացման, մութ ու անեղանելի կարիքի մեջ մեր ժողովուրդը տնքում եր լեհական հալածակիչների լծի տակ, կալվածատիրական—կապիտալիստական լծի տակ:

Լեհական կալվածատերերը զավթել էին հողը մեր գյուղացիութիւնից, դատապարտելով նրան սովի ու մահացման, հողադրկու-

թյան ու հացաղրկության: Կապիտալիստներն ազահարար չահագործում եյին մեր բանվորին, դատապարտելով նրան դժբախտությունների և ծաղր ու ծանակի, գործաղրկության և իրավագործության: Լեհական կալվածատերերի ու կապիտալիստների պետութիւնը, ժողովուրդների այդ բանտը, այդ նախկին չլյախտայական Լեհաստանն ուղղում եր Արեւմտյան Ուկրաինայի տերիտորիայում ապրող ուկրաինական ժողովրդին դատապարտել իր ժողովրդական դեմքի կորստյան, իր ժողովրդական արժանապատիւթյան կորստյան, վոջնչացնում եր ուկրաինական կուլտուրան, արգելում եր ուկրաինական լեզուն: Նույնիսկ յերգը, աւերաինական ժողովրդական յերգը լեհական արյունարբու դահիճներն ուղղում եյին պոկել ժողովրդի բերանից:

Նախկին Լեհաստանում ծանր եր ապրել աշխատավոր ուկրաինացիներին, հեշտ չեր ապրել նաեւ աշխատավոր լեհացիներին ու հրեաներին: Լեհական պաները ժողովուրդների միջև հրահրում եյին աղգային անհամաձայնութիւն ու յերկպառակութիւն, այն հաշվով, վորպեսզի ե'լ ավելի թուլացնէյին իրենց յենթակա ժողովուրդներին: Ժողովրդի սրբազան ցասումն ընդդէմ կեղեքիչների, կալվածատիրական-կապիտալիստական դահիճներն ուղղում եյին հանգցնել ժողովրդական արյան դետերով, բանտերի ցրտով ու խոշտանգումներով, պաղիֆիկացիաների կրակով ու սարսափներով: Բայց նրանք չհանգցրին այդ ցասումը: Այդ անողոք ցասումն ընդդէմ բոլոր և ամեն տեսակ շահագործողների, ընդդէմ կալվածատիրական-կապիտալիստական դահիճների ու նրանց ոգնականների մինչև այժմ ել բոցավառվում ե ժողովրդի կրծքում, կոչ անելով ժողովրդին վերջնականապես բնաջնջել հին, անիծյալ պանական կարգերի բոլոր մնացորդները:

Մեր ժողովրդի համար ամենաահեղ ժամին, յերբ նախկին լեհական կառավարության անշնորհ ու նենգ ղեկավարները քիչ եր մնացել, վոր մեր ժողովրդին հասցնէյին վերջնական կործանման ու քայքայման, մեր ժողովրդի համար ամենաահեղ այդ ժամին, այստեղից, կարմիր Մոսկվայի կրեմլյան պատերից մեզ համար հնչեց լուսաշող մի լուր կործանումից փրկվելու մասին, հնչեց հույսի խոսքը, ազատության և յերջանկության խոսքը: Այդ՝ Խորհրդային Կառավարության Նախագահ Վլադեսլավ Միխայլովիչ Մոլոտովի խոսքն եր: Այդ՝ մեր հայր, մեր առաջնորդ ընկեր Ստալինի հանճարեղ, մարդասիրական, խորաթափանց իմաստությամբ վողեչնչված խոսքն եր: Յեւ այդ խոսքով շարժվեցին պանծալի կարմիր զնդերը՝ Խորհրդային Միության մեծ

զորավար մարշալ Վորոշիլովի ղեկավարությամբ: (Բ ու ո ն ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր :)

Նրանք անցան արհեստական և անհարկավոր սահմանը, վորն ուկրաինական ժողովրդի միասնական մարմինը բաժանում եր յերկու մասի: Նրանք փրկեցին մեզ, ազատագրեցին մեզ և մեզ հնարավորութիւն տվին ազատորեն, արժանավայել ու հպարտությամբ վճռելու մեր հետագա բախտը, ուրվադժելու մեր հետագա ուղին:

Մեր ժողովուրդը միահամուռ ե այդ ուղին ընտրելու մեջ: Միայն հզոր խորհրդային ժողովրդի հետ միասին, միայն Ստալինյան Սահմանադրութիւն՝ մարդկային ազատության ու յերջանկության այդ մեծաքանի փաստաթղթի դրոշի տակ, միայն բոլշևիկների իմաստուն կուսակցության, մարդկության մեծ ուսուցիչների—Լենինի և Ստալինի կուսակցության ղեկավարությամբ, միայն աշխարհի մեծագույն մարդու, ամբողջ առաջավոր մարդկության մեծ ղեկավարի գլխավորությամբ, մեր հարազատ ընկեր Ստալինի գլխավորությամբ ե ուղղում ընթանալ ու կընթանա մեր ժողովուրդը դեպի իր լուսաշող, հզոր ու հրճվալից ապագան:

Հավաստիացնում ենք ձեզ, ընկեր դեպուտատներ, վոր մենք կլինենք մեր մեծ, մեր միակ իսկական հայրենիքի—Խորհրդային Միության հավատարիմ, անձնվեր զավակներն ու դուստրերը:

Հավաստիացնում ենք ձեզ, ընկեր դեպուտատներ, վոր չխնայելով մեր ուժերը, մեր կյանքը, ամեն ինչ կանենք, վորպեսզի ե'լ ավելի ամրապնդենք մեր սոցիալիստական հայրենիքի հզորութիւնը, վորպեսզի ե'լ ավելի բարձրացնենք նրա փառքը, նրա աւժը, նրա ծաղկումը:

Հավաստիացնում ենք ձեզ, ընկեր դեպուտատներ, վոր մենք կլինենք ամբողջ աշխարհի աշխատավորության հայրենիքի համար, մեր Խորհրդային Միության համար պայքարող հավատարիմ ու անհողողդ մարտիկներ, վոր կլինենք անողոք դեպի նրա բոլոր և ամեն տեսակի թշնամիները, վորոնք կփորձեն քայքայել նրա ուժը, նրա միասնութիւնը:

Հավաստիացնում ենք ձեզ, ընկեր դեպուտատներ, վոր մենք կամրապնդենք խորհրդային ազատ ու հավասար ժողովուրդների ստալինյան բարեկամութիւնը և յեղբայրութիւնը—մեր անպարտելիության այդ յերաշխիքը:

Հավաստիացնում ենք ձեզ, ընկեր դեպուտատներ, վոր մենք հաստատ ու վստահ կանգնում ենք այն ուղու վրա, վորը դժել ե Լենինի և Ստալինի հանճարը, միակ ուղին, վորն աշխարհի բո-

լոր ժողովուրդներին կհասցնի աղատութեան ու յերջանկութեան և հավատացնում ենք ձեզ, վոր մենք յերբեք ու վոչ մի տեղ չենք շեղվի այդ ուղուց, վոր մենք ջախջախիչ հակահարված կտանք յուրաքանչյուրին, ով կփորձի շեղել մեզ այդ ուղուց:

Հավաստիացնում ենք ձեզ, ընկեր ղեպուտատներ, վոր մենք միասնական ազատ խորհրդային Ուկրաինայում, վորին ղեկավարում է Ուկրաինայի բոլշևիկների կոմունիստական կուսակցութունը և նրա Կենտրոնական Կոմիտեն, կաշխատենք ու կըստեղծենք նոր, կոմունիստական կյանք, վորպես ազատ ստեղծագործողների ժողովուրդ, վորպես իսկական հերոսների ժողովուրդ:

Կեցցե՛ք միասնական ազատ խորհրդային Ուկրաինան:

Թող կեցցե՛ք ու ծաղկի մեր հզոր հայրենիքը — խորհրդային Միութիւնը:

Կեցցե՛ք խորհրդային Կառավարութիւնը և նրա ղեկավար Վլադեսլավ Միխայլովիչ Մոլոտովը: (Բ ու ու ն ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր: Բ ու ու ու ը վ ո տ ք ի յ ե ն կ ա ն դ ն ու մ, վ ո ղ ջ ու ն ե լ ո վ ը ն կ ե ր Մ ու լ ո տ ո վ ի ն:)

Կեցցե՛ք բոլշևիկների կոմունիստական կուսակցութիւնը—խորհրդային ժողովուրդների հաղթանակների կաղմակերպիչը:

Կեցցե՛ք մեր մեծ առաջնորդ, մեր հարազատ Ստալինը: (Բ ու ու ն ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր, վ ո ո ո ն ք փ ո խ վ ու մ ե ն ո վ ա ց ի ա յ ի: Բ ու ո ո ը վ ո տ ք ի յ ե ն կ ա ն դ ն ու մ:)

Նախագահող: Խնդրում եմ Արևմտյան Ուկրաինայի ժողովրդական ժողովի Լիազոր Հանձնաժողովի ընկեր անդամներին տեղ գրավել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ղեպուտատներին չարքերում: (Բ ու ու ն, յ ե ր կ ա ր ա տ և ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր: Բ ու ո ո ը վ ո տ ք ի յ ե ն կ ա ն դ ն ու մ: Ա ր և մ տ յ ա ն Ու կ ր ա ի ն ա յ ի ժ ո ղ ո վ ը դ ա կ ա ն ժ ո ղ ո վ ի Լ ի ա ղ ո ր Հ ա ն ձ ն ա ժ ո ղ ո վ ի անդամները գրավում են իրենց տեղերը:)

Ընկե՛ր ղեպուտատներ, պահանջվո՞ւմ ե արդյոք թարգմանել ընկ. Պանչիչինի արտասանած ճառը:

Ջայներ տեղերից: Չի պահանջվում:

Նախագահող: Այն ղեպքում անցնում ենք Արևմտյան Ուկրաինայի ժողովրդական ժողովի Լիազոր Հանձնաժողովի հայտարարութեան քննարկմանը:

Խոսք ունի Արևմտյան Ուկրաինայի ժողովրդական ժողովի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Կրավչուկը:

(Տ Ր Ի Բ ու ն ի վ ր ա ը ն կ. Կ ր ա վ չ ու կ ի յ ե ր և ա լ ը վ ո ղ ջ ու ն վ ու մ ե բ ու ու ն, յ ե ր կ ա ր ա տ և ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր ո վ: Բ ու ո ո ը վ ո տ ք ի յ ե ն կ ա ն դ ն ու մ:)

Ի. Յու. Կրավչուկ (ն ա վ թ ա դ ո Ր ծ բ ա ն վ ո Ր, Դ Ր Ո Ղ Ո Ր Է ի դ ա վ ա ու, Լ Վ Ո Վ Ի մ ա ր դ): Ճ ա ու ն արտասանված ե ու կ ր ա ի ն ե ր ե ն լ ե ղ վ ո վ:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան Գերագույն խորհրդի ընկե՛ր ղեպուտատներ: Յես, Արևմտյան Ուկրաինայի նավթային ավազանի այժմ ազատ բանվորս, բախտ ունեմ այսօր, կյանքիս մեջ առաջին անգամ հանդես դալ այսպիսի բարձր, պատվավոր ժողովում, ներկայացնելով Արևմտյան Ուկրաինայի աղատագրված ժողովուրդը: (Բ ու ու ն ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր:) Ի ն ձ, ի նչպե ս և հ ա ղ ա ր ա վ ո Ր ա յ լ ա շ խ ա տ ա վ ո Ր ն ե ր ի, լ ե հ ա կ ա ն չ յ ա խ տ ա ն բ ա ն տ ե ր ե ր ն ե տ ու մ: Ի ս կ ա յ ժ մ յ ե ս արժանացել եմ մեծ պատվի՝ Արևմտյան Ուկրաինայի ազատ ժողովրդի անունից, նավթագործ բանվորների անունից հաղորդել ձեզ ջերմ պրոլետարական վղջույն: (Բ ու ո ո ն ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր, վ ո ո ո ն ք փ ո խ վ ու մ ե ն ո վ ա ց ի ա յ ի: Բ ո ո ո ը վ ո տ ք ի յ ե ն կ ա ն դ ն ու մ:)

Արևմտյան Ուկրաինայի ժողովուրդները յերկար դարերի ընթացքում լեհական չլյախտայից կրել են սով, կարիք, աղետներ, ճնշում:

Արևմտյան Ուկրաինայի աշխատավորների կարիքով և արյունով է հարստացել լեհական, ուկրաինական ու հրեական բուրժուազիան: Ծանր ու անտանելի յեր բանվորների և չքավոր դյուղացիութեան վիճակը: Բանվորներն ու չքավոր դյուղացիութիւնը կրել են անասելի կարիք, սով և աղետներ, վիրավորանք ու ծաղր:

Բանվորներին, հեղափոխականներին, մասսաների կաղմակերպիչներին լեհական չլյախտան տանջում եր, բանտերը նետում, դատապարտում յերկար տարիների տաժանքի:

Ուկրաինական ժողովուրդը քսան տարի յեղել է անտանելի ճնշման տակ: Քսան տարի լեհական չլյախտան պաշարել է այն ամենի դեմ, ինչ ուկրաինական եր,—փակում եր ուկրաինական դպրոցները, թատրոնները, ամեն կերպ ծաղրում եր ուկրաինական կուլտուրան:

Քսան տարի լեհական բուրժուազիան վայրագորեն տեր ու տնորինութիւն եր անում Արևմտյան Ուկրաինայում և վոչնչացնում ուկրաինական ամբողջ կուլտուրան:

Քսան տարի լեհական պաներն ամեն կերպ ծաղր ու ծանակի եյին յենթարկում կոմունիստներին: Դահիճները բանտերում մերկացնում եյին կանանց ու տղամարդկանց, դադանաբար ծեծում եյին նրանց, քաղաքական շատ բանտարկյալներ այնպես ել

տուն չվերադարձան, վոչնչացան բանտերում: Լեհաստանն իրոք ժողովուրդների բանտ էր: Ուկրաինացիների հետ միասին տառապում էին լեհական ու հրեական աշխատավոր մասսաները:

Ուկրաինական ու հրեական բուրժուազիան դործակցում էր լեհական բուրժուազիայի հետ: Նրանք աշխատում էին ժողովրդին ծաղր ու ծանակի յենթարկելու մեջ գերադանցել միմյանց, աշխատում էին խեղդել հեղափոխական շարժումն Արևմտյան Ուկրաինայում:

Հատկապես ցայտուն կերպով յերևան յեկավ Արևմտյան Ուկրաինայի ուկրաինական բուրժուազիայի դավաճանական դերը 1935 և 1938 թվերի ընտրություններին, յերբ նա դավաճանեց ժողովրդի ազգային շահերին ու համաձայնության յեկավ լեհական բուրժուազիայի հետ: Դրա համար ել Արևմտյան Ուկրաինայի աշխատավորներն ուկրաինական բուրժուազիային միանդամայն ճիշտ անվանում էին, անվանում են և կանվանեն ուկրաինական ժողովրդի դավաճան:

Լեհական, ուկրաինական և հրեական բուրժուազիան փորձում էր բոլոր միջոցներով արյան ծովի մեջ խեղդել ազատագրական շարժումն Արևմտյան Ուկրաինայում: Քիչ չի թափվել աշխատավորների արյունը Լվովում, Ստարո-Սամբորչինայում և այլ տեղերում: Սակայն հեղափոխական շարժումն Արևմտյան Ուկրաինայում անչեղորեն աճում էր: Դրա ապացույցներն էին դատական պրոցեսները, վոր համարյա ամեն օր տեղի էին ունենում Լեհաստանում, հատկապես Արևմտյան Ուկրաինայում: Այդ պրոցեսներում լեհական դատարանները բանվորներին ու գյուղացիներին դատապարտում էին յերկար տարիների բանտային կալանքի:

Սակայն հասավ 1939 թվի սեպտեմբերի 17-ի օրը: Այդ օրը պետք է համարել նոր եջի սկիզբ Արևմտյան Ուկրաինայի պատմության մեջ: Այդ օրը, Խորհրդային Կառավարության հրամանով, մեր թանկագին, սիրելի հայր — ընկեր Ստալինի ցուցումով... (բոլորը վոտքի յեն կանգնում, բոռն, յերկարատե ծափահարություններ, բացականչություններ. «Ուռա» ի պատիվ ընկեր Ստալինի)... մեր թանկագին ընկեր Վորոշիլովի ղեկավարությամբ... (բոլորը վոտքի յեն կանգնում, բացականչություններ. «Ուռա»): Բոռն ծափահարություններ, բացականչություն. «Կեցցե՛ կոմունիստական կուսակցությունը»)... փառապանծ հերոսական Բանվոր-Գյուղացիական Կարմիր Բանակը սահմանն անցավ և մի անգամ ընդմիջտ ջախջախեց արհեստա-

կանորեն ստեղծված պատնեշը, վորը բաժանում էր յերկու հարադատ քույրերին — Արևմտյան և Արևելյան Ուկրաինան: Այդ օրից մի անգամ ընդմիջտ կտրվեց մեր տառապանքների և վիրավորանքների անվերջ շարանը: Հիմա, ընկերներ, մենք, Արևմտյան Ուկրաինայի աշխատավորներս, Խորհրդային յերկրում ապրում ենք ազատ ու յերջանիկ, այնպես, ինչպես և դուք:

Մենք, ընկեր դեպուտատներ, չենք վախենա այն հակապական աշխատանքից, վորը մենք պետք է կատարենք: Մենք չենք վախենա թշնամիներից, վորոնք հիմա մտել են զազանային վորջերը և միայն առիթի յեն սպասում, վորպեսզի վնասեն մեզ: Մենք, ընկերներ, Արևմտյան Ուկրաինայի ժողովրդի անունից խոստանում ենք ձեզ, վոր կգլխատենք այդ իժերին (ծափահարություններ) և ձեզ հետ միասին կկառուցենք մեր նոր, յերջանիկ կյանքը:

Արևմտյան Ուկրաինայի նավթագործ պրոլետարների անունից յես դիմում եմ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդին, մեր թանկագին Ստալինին... (ծափահարություններ), վորպեսզի դուք մեզ ընդունեք Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ձեր մեծ ընտանիքի մեջ: (Բոռն ծափահարություններ):

Յես համոզված եմ, ընկեր դեպուտատներ, վոր դուք կբավարարեք մեր խնդիրը և մեզ կընդունեք ձեր ընտանիքի մեջ: (Ծափահարություններ):

Նավթային ավադանի աշխատավորների անունից հայտարարում եմ, վոր վոչ մի թշնամի վոտք չի դնի մեր հողի վրա, վորովհետեւ մենք բոլորս, Արևմտյան Ուկրաինայի աշխատավորներս, մեկ մարդու պես խորտակիչ հակահարված կտանք նրան: Մենք թշնամիների հետ կվարվենք այնպես, ինչպես վարվեց ընկ. Տիմոչենկոն մեզ ճնշողների, լեհական պաների հետ, Արևմտյան Ուկրաինայում:

Ընկերներ՝ Վերջացնելով իմ ճառը, ուզում եմ հայտարարել. Կեցցե՛ մեր հիասքանչ, անպարտելի, հերոսական Կարմիր Բանակը և նրա առաջնորդ — մեր սիրելի ընկեր Վորոշիլովը: (Ծափահարություններ: Բոլորը վոտքի յեն կանգնում: Ովացիա ի պատիվ ընկեր Վորոշիլովի):

Կեցցե՛ Խորհրդային Կառավարության ղեկավար ընկեր Մոլոտովը: (Բոռն ծափահարություններ: Բոլորը վոտքի յեն կանգնում: Ովացիա ի պատիվ ընկեր Մոլոտովի):

կեցցե՛ր մեր հայր, մեր արեւ, մեր հուշա, մեր սիրելի և իմաստուն, մեծ ընկեր Ստալինը: (Բ ու ու ն, յ երկարատե ծ ա փ ա-հ ա ր ու թ յ ու ն ն եր: Բ ու ու ու ը վ ո տ ք ի յ ե ն կ ա ն դ ն ու մ: Ո վ ա ց ի ա ի պ ա տ ի վ ը ն կ եր Ս տ ա լ ի ն ի:)

Նախագահող: Խոսք ունի դեպուտատ Բողոմոնցը: (Ծ ա փ ա-հ ա ր ու թ յ ու ն ն եր: Բ ու ու ու ը վ ո տ ք ի յ ե ն կ ա ն դ ն ու մ:)

Ա. Ա. Բոգոմոնց (Կ ի և ի—Կ ա դ ա ն ո վ ի չ ի ո կ ի ու ու դ, Ուկրաինական ԽՍՀ): Թանկագին ընկերներ, այժմ աղատ Արեմոյան Ուկրաինայի Ժողովրդական Ժողովի Լիազոր Հանձնաժողովի անդամներ: Յես յերջանիկ եմ, վոր վողջունում եմ ձեզ այս տրիբունից, մեծ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդի տրիբունից՝ պատմական մեծ իրադարձության—Արեմոյան Ուկրաինայի Ժողովուրդներին լեհական կալվածատերերի ու կապիտալիստների դարավոր ճնշումից ազատագրվելու առթիվ:

Ավելի քան հինգ և կես դար, 1387 թվից սկսած շարունակվում եր այդ ճնշումը: Նա չթուլացավ նաև այն շրջանում, յերբ Լեհաստանի բաժանումից հետո, 1772 թվին, Արեմոյան Ուկրաինան մտավ մոզակ Ավստրո-Հունգարական կայսրության կազմի մեջ, վորովհետև հողը և Ժողովուրդը մնում էին առաջվա պես Լեհական արխիստոկրատների իշխանության ներքո:

Արեմոյան Ուկրաինայի մեծ գրող Իվան Ֆրանկոն թողել է անցած դարի յերկրորդ կեսում և ներկա դարի սկզբում իր Ժողովրդի աղետների ու իրավազրկության անջնջելի պատկերներ:

Վերսալյան պայմանագիրը ստեղծեց ծվենակազմ պետություն—Լեհաստանը, վորի կազմի մեջ մտցվեց նաև Արեմոյան Ուկրաինան: Լեհաստանի գոյության յերկու տասնյակից քիչ ավելի տարիների ընթացքում Արեմոյան Ուկրաինայի աշխատավորութանը և հատկապես նրա ութմիլիոնանոց ուկրաինական Ժողովրդին վիճակվեցին անասելի տառապանքներ: Դեռ ևս յերբեք աշխատավոր մասսաները զոհ չեն դարձել այդպիսի անսահման չահագործման: Թե ինչ չափերի յեր հասել աշխատավորության, հատկապես գյուղացիության աղքատացումը կարելի չե դատել թեկուզ նրանով, վոր շատերը նավթը փոխարինել էին մարխով, վոր աղն ու լուցկին մի շարք դեպքերում դարձել էին սակավ մատչելի: Չե՞ վոր Արեմոյան Ուկրաինայում եր կատարվել խնայողության նպատակով լուցկին չորս մասի բաժանելու գյուղը:

Կիսաֆեոդալական Լեհաստանի դեկավար վերնախավն արհամարհում եր ուկրաինական Ժողովրդին: Նա Ժողովրդին զրկել եր

մայրենի լեզվով կրթություն ստանալու իրավունքից, ձգտում եր վոչնչացնել աղղային բաղմադարյան կուլտուրայի մնացորդները: Ուկրաինական բանվորները, գյուղացիները, ինտելիգենցիան յենթարկվում էին սխառմատիկ հալածանքների: Բողոքի ամենաչնչին փորձերը պատժվում էին չգերադանցված դատանություններ:

Լեհական պատժիչ արչավախճերի դադանությունների լուրերը յերջանիկ ու աղատ Խորհրդային Ուկրաինայի քաղաքացիների սրտերը, մեծ Խորհրդային Միության քաղաքացիների սրտերը լցնում էին դայրույթով և անհամբերությամբ՝ թե յե՞րբ և հասնելու ազատագրման ժամն արտասահմանյան յեղբայրների համար: Հասավ այդ ժամը:

Լեհաստանի վախկոտ կառավարությունը վախուստի դիմեց, բախտի քմահաճույքին թողնելով իր յերկրի Ժողովուրդներին: Խորհրդային Միության Ժողովուրդները խանդավառությամբ դիմավորեցին Խորհրդային Կառավարության կողմից մեր քաջարի Կարմիր Բանակին տրված հրամանը՝ առաջ շարժվելու Արեմոյան Ուկրաինայի և Արեմոյան Բելոռուսիայի յեղբայրական Ժողովուրդներին պաշտպանելու և չահագործողների ճնշումից նրանց ազատագրելու համար: Մեր հաղթական Բանվոր-Գյուղացիական Կարմիր Բանակը պատվով կատարեց այդ առաջադրանքը:

Ընդհանուր, ուղղակի, հավասար և դադունի քվեարկությամբ աղատորեն ընտրված Արեմոյան Ուկրաինայի Ժողովրդական Ժողովը կայացրեց իր պատմական վորոշումը: Այսուհետև Արեմոյան Ուկրաինան դառնում է Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության մի մասը և նրա հետ միասին՝ մեծ Խորհրդային Միության անբաժանելի մասը:

Այսօր Խորհրդային Միության Ժողովուրդները, հանձին իրենց ներկայացուցիչների, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի դեպուտատների, ուրախությամբ վողջունում են այդ վորոշումը:

Արեմոյան Ուկրաինայի Ժողովրդական Ժողովի Լիազոր Հանձնաժողովի ընկե՛ր անդամներ:

Այժմ դուք դեռ պատվիրակներ եք, բայց այսօր իսկ, յես չեմ տարակուսում, դուք կդառնաք մեծ Խորհրդային Միության քաղաքացիներ, ծաղկող, աղատ և կուլտուրական Խորհրդային Ուկրաինայի քաղաքացիներ: (Բ ու ու ն ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն եր:)

Հավանական է, վոր դուք, կատարելով ձեր պատմական միասին, նախքան հայրենիք վերադառնալը, կտեսնեք մեր նոր աղատ, յերջանիկ կյանքի բոլոր անկյունները:

Ձեզ լավ հայտնի յե թե ինչ եր ներկայացնում իրենից ցարա-
կան Ռուսաստանի կազմի մեջ մտնող Ուկրաինան: Բուրժուա-
զիայի և կալվածատերերի գաղութ, չղարգացած արդյունաբե-
րությամբ, սակավահող դյուղացիական տնտեսության ամե-
նապրիմիտիվ տեխնիկայով, մեծ մասամբ անդրադետ, իրավա-
զուրկ բնակչությամբ, վորի համար տարրական դպրոցում ան-
գամ արգելված եր մայրենի ուկրաինական լեզուն: Այսպիսին եր
Ուկրաինան մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղա-
փոխությունը:

Այժմ դա բարձր կուլտուրական յերկիր ե, Յեվրոպայում
ամենախոշոր ծանր արդյունաբերության յերկիր, աշխարհում
ամենախոշոր մեխանիզացիայի յենթարկված կոլեկտիվ գյու-
ղատնտեսության յերկիր:

Ձեր պատվիրակության կազմում կան դադդյահի բանվորներ,
գյուղացիներ, ինտելիգենցիայի ներկայացուցիչներ: Դուք կտես-
նեք ստալինյան հնգամյակների տարիներին ստեղծված մեր ար-
դյունաբերության գիգանտները և դրանց շուրջը կառուցված
սոցիալիստական նոր քաղաքներ՝ բանվորների համար հիպոքանչ
տներով, ալոմբներով, մանկամսուրներով, կինոներով, թատ-
րոններով, բուժական հիմնարկներով, միջնակարգ ու բարձրա-
գույն դպրոցներով, վորտեղ մայրենի լեզվով, բոլորովին ան-
վճար, իսկ բարձրագույն դպրոցում դեռ պետությունից ստաց-
վող թոշակով սովորում են բանվորների, գյուղացիների, ինտե-
լիգենցիայի յերեսանները:

Դուք կտեսնեք մեր կոլտնտեսային գյուղը նրա մեխանիզա-
ցիայի յենթարկված գյուղատնտեսությամբ, տրակտորներով,
կոմբայներով, վորոնք գյուղացու աշխատանքը դարձնում են
ավելի թեթև ու արդյունավետ, խրճիթ-ընթերցարաններով և
խրճիթ-լաբորատորիաներով, վորտեղ կոլտնտեսականն ու Գերա-
գույն խորհրդի նախագահի տեղակալ ակադեմիկ Լիսենկոն
միասին աշխատում են նոր գյուղատնտեսական կուլտուրաներ
ստեղծելու վրա, պայքարում են ստալինյան բազմամիլիարդ
բերքի համար:

Դուք կտեսնեք խորհրդային իշխանության տարիներին ստեղծ-
ված բազմաթիվ գիտա-հետադոտական ինստիտուտներ, վորտեղ
մեր գիտնականները բարձր գիտական թեորիան չաղկապում են
մեր սոցիալիստական շինարարության պրակտիկայի հետ: Դուք
կտեսնեք գիտությունների Ուկրաինական Ակադեմիան-խորհրդ-
դային Ուկրաինայի գիտական կենտրոնը, վորտեղ նրա հազարա-
վոր գիտական աշխատակիցների շարքերում կան մեծ թվով գիտ-

նականներ, վորոնք համաշխարհային անուն են վաստակել գի-
տության բնագավառում և աշխատում են հիասքանչ ինստիտուտ-
ներում, վորոնք ստեղծվել են ստալինյան հնգամյակների տարի-
ների ընթացքում:

Այդ ակադեմիայում դուք կդտնեք խորհրդային Միության մեջ
և աշխարհում լավագույն գրադարաններից մեկը հինգ միլիոն
հատորով և մի շարք ուրիշ ինստիտուտներ, վորոնք աշխատում
են ուկրաինական՝ ձևով աղագյին, բովանդակությամբ սոցիալիս-
տական կուլտուրայի զանազան բնագավառներում:

Յես խնդրում եմ ձեզ, ընկերներ, ծանոթանալ մեր նոր կյանքի
բոլոր անկյունների հետ որինական հսկարտության զղացմունքով,
վոր այս ամենը ստեղծել ենք մենք, խորհրդային Միության քա-
ղաքացիներս, կոմունիստական կուսակցության և մեր սիրելի
առաջնորդ ընկեր Ստալինի իմաստուն ղեկավարությամբ: (Բ ու ու ն
ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր : Բ ո լ ո ր ր ւ վ ո տ ք ի յ ե ն կ ա ն գ-
ն ու մ :)

Թող մեր նվաճումները դառնան գրավականն այն պայծառ
ապագայի, վորը սպասում ե Արևմտյան Ուկրաինայի ժողո-
վուրդներին խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն-
ների Միության ժողովուրդների մեծ ընտանիքում:

Կեցցե՛ք Արևմտյան Ուկրաինայի ազատ խորհրդային ժողո-
վուրդը:

Կեցցե՛ք կոմունիստական կուսակցությունը և ամբողջ աշ-
խարհի աշխատավորների մեծ բարեկամ ու առաջնորդ Իոսիֆ
Վիսսարիոնովիչ Ստալինը: (Բ ու ու ն ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն-
ն ե ր : Բ ո լ ո ր ր ւ վ ո տ ք ի յ ե ն կ ա ն գ ն ու մ :)

Նախագահող: Խոսք ունի Արևմտյան Ուկրաինայի ժողովրդ-
դական ժողովի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Ստոլդին-
սկին: (Բ ու ու ն ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր : Բ ո լ ո ր ր ւ վ ո տ ք ի
յ ե ն կ ա ն գ ն ու մ :)

Կ. Ո. Ստոլդինսկի (Լվովի համալսարանի պրոֆե-
սոր): Ճառն արտասանված ե ուկրաիներեն լեզվով:

Ընկե՛ր դեպուտատներ: Յես սեպտեմբերի 17-ին կանգնած եյի
ռադիոյի մոտ ու լսում եյի Արտաքին գործերի ժողովրդական
Կոմիտեի ընկեր Մոլոտովի ճառը: Յես լսում եյի հիասքանչ խոս-
քեր այն մասին, վոր խորհրդային ժողովուրդը վորոշել ե ոգնու-
թյան ձեռք մեկնել Արևմտյան Ուկրաինայի ու Արևմտյան Բելո-
ռուսիայի արյունակից յեղբայրներին և վոր խորհրդային Կառա-
վարությունը հրաման ե տվել Կարմիր Բանակին անցնելու սահ-
մանը:

Այն բոլորներն, յերբ յես լսում եյի ողորդողն, նոնալն ընկալ
ինձանից յերեսուն քայլ հեռավորութեան վրա, բայց ինձ հա-
մար սարսափելի չէր: Յես անշարժ կանգնած եյի, լսելով խոր-
հրդային հանրապետութեաններն աղաւթ ժողովրդի յուրաքան-
չյուր խոսքը: Յես դիտելի, վոր մեզ ողորդութեան ե գալիս,
վոր գալիս ե հերոսական Կարմիր Բանակը — մեր ազատարարը:
Ծանր եր մեր կյանքը: Գյուղացուն, դեղջուկին ծեծում եյին,
ծաղրում եյին նրան, տանջում եյին նրան, նետում բանտերը,
վոչնչացնում եյին նրա խրճիթը, հրդեհում ամբողջ գյուղեր,
հանում եյին մարդկանց աչքերը և դեռ կենդանի դերեզման
դնում:

Գուցե վորեւե մեկը չհավատա, սակայն յես վորպէս համալսա-
րանի պրոֆեսոր պետք ե ոբյեկտիվ կերպով հայտարարեմ, վոր
այս բոլորը հնարած բան չե, այլ իսկական ճշմարտութեան: Այդ
դիտե ամբողջ ժողովուրդը, այդ դիտե պատմութեանը, վորը չի
կարող չասել ճշմարտութեան: Կուտուրական տեսակետից մեր
ժողովուրդը միշտ ապրել եսովի մեջ—վոչ միայն դարնանը, այլ
աշնանը: Բայց չե՞ վոր մինչեւ լեհական սկսելի գալը մենք
ունեյինք մեր համալսարանական կաֆեդրաները, դպրոցները,
կուտուրան, վորը ձեռք եր բերվել ուկրաինական մտածող
մարդկանց ծանր աշխատանքով: Լեհերի դալով այդ բոլորը
վոչնչացված եր: Ձեր առջև կանգնած ե մի պրոֆեսոր, վորը
գործազուրկ ե Ձև տարի:

Այժմ մենք ունենք այն, ինչի մենք արժանացել ենք մեր տա-
ռապանքներով: Մենք ապրել ենք, թեւ մեզ համար շատ ծանր
եր: Լեհաստանն ուղում եր վոչնչացնել մեզ սովի, տանջանքի ու
ճնշման միջոցով: Կապանքների մեջ եյինք մենք—ե՛ւ՛ աշխատա-
վոր ուկրաինացին, ե՛ւ՛ հրեան, ե՛ւ՛ լեհացին: Ամօթ ե ասել այդ
մասին—յես լսել եմ, թե ինչպես մայրն իր վորդուն որոր եր
յերգում:

Մարդիկ քեզ կվիրավորեն,
ձեռքերիդ կապանքներ կդնեն,
և դու ինձ, քո մորը, կանիծես:

Այս տխուր յերգն արտացոլում եր մեր ուկրաինական ժողո-
վրդի վիշտը: Սակայն ժողովրդի մեջ խորը համոզմունք եր ապ-
րում, վոր այդ տխուր յերգը վիշտնա, վոր նրա փոխարեն
կդա նոր, յերջանիկ յերգ: Հերոսական Կարմիր Բանակը մեզ
բերեց նոր յերգ, հաղթանակի հալատ, և մենք դարձանք ազատ:

Անգլիան ու Ֆրանսիան միմեարմին եմ այն տխմար մտքով,

թե ուկրաինական հողի վրա կարելի չե վերականգնել հին Լեհաս-
տանը:

Մենք, արեւմտյան ուկրաինացիներս, մեր սեփական բախտը
վորոշեցինք ժողովրդական ժողովում, վորը յես սլատիվ ունեցա
բանալու վորպէս ավագադույն դեպուտատ:

Թող Անգլիան ու Ֆրանսիան հիշեն, վոր մենք հոգարակամ
մտանք խորհրդային Միութեան մեջ և միացանք խորհրդային
Ուկրաինային: (Մափա հարուստ յունեներ:) Այդ մեր ան-
սասան կամքն ե և մենք վոչ վոքի թույլ չենք տա սասանել
այդ կամքը: (Մափա հարուստ յունեներ:)

Յես հավատում եմ, վոր մենք կդառնանք խորհրդային Ուկ-
րաինայի և խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան-
ների Միութեան աղաւթ քաղաքացիներ:

Մեր վողջույնն ընկեր Մոլոտովին յերջանկութեան այն բոլոր-
ների համար, վոր բերեց նա մեզ այս տարվա սեպտեմբերի 17-ի
իր ճառով: (Մափա հարուստ յունեներ:)

Վողջույն բարձր կուտուրական մեր ամբողջ Կարմիր Բանա-
կին և նրա առաջնորդ ընկեր Վորոշիլովին: (Մափա հարու-
ստ յունեներ:)

Ապրիլ ու կեցցե՛ ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր
Ստալին: (Բուռն, յերկարատե ծափահարութեան-
ներ: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Թող ընդունի նա Արեւմտյան Ուկրաինայի ժողովուրդներին
խորը վողջույնը: Թող ապրի պրոլետարիատի մեծ առաջնորդ
ընկեր Ստալինը: (Յերկարատե ծափահարութեաններ:
Բոլորը վոտքի յեն կանգնում: Բացակայող յունե-
ներ, «Ուռա՛»:)

Նախագահող: Խոսք ունի Արեւմտյան Ուկրաինայի ժողովրդա-
կան ժողովի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Կուզմին-
սկայան: (Տրեբունի վրա ընկ. Կուզմինսկայայի
յերեւալը դիմավորվում ե յերկարատե ծափահա-
րութեաններով: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Յե. Ս. Կուզմինսկայա (չոկոլադի ֆաբրիկայի բանվո-
րուհի, քաղ. Լվով): Ճառն արտասանված ե լեհերեն
լեզվով:

Գերագույն խորհրդի հարգելի ընկեր դեպուտատներ: Թույլ
տվեք ինձ Արեւմտյան Ուկրաինայի բոլոր ժողովուրդների անու-
նից, թույլ տվեք ինձ ամբողջ պրտով արտահայտեմ իմ ուրա-
խութեանը, իմ ջերմ շնորհակալութեանը խորհրդային Միութեան
ժողովուրդներին, նրա Կառավարութեանը, նրա հերոսական

Կարմիր Բանակին և հարազատ հայր ընկեր Ստալինին: (Յերկարատե ծափահարություններ:)

Շնորհակալություն ձեզ նրա համար, վոր դուք մեզ աղատեցիք լեհական պաների, կարլածատերերի, ոսաղնիկների և կապիտալիստների սարսափելի ճնշումից: Մենք, աշխատավոր լեհացիներս, ուկրաինական ու հրեական ժողովրդի հետ միասին կրում եյինք պանական Լեհաստանի և նրա արյունոտ կառավարության սարսափելի ճնշումը:

Ընտրողների 96,71%-ը մասնակցեց քվեարկությանը: Ընտրություններին մասնակցողների ընդհանուր թվի 90,67%-ն իրենց ձայները տվին բանվորների բազմամարդ ժողովների, գյուղացիական կոմիտեների, բանվորական գվարդիայի ժողովների, աշխատավոր ինտելիգենցիայի բազմաթիվ ժողովների կողմից առաջադրված թեկնածուների ոգտին:

18-ամյա յերիտասարդները, ծերունիները, աղջիկներն ու պատանիները — բոլորն ուրախ յերդերով դնում եյին ընտրական տեղամասերը՝ քվեարկելու ժողովրդական յերջանկության ոգտին: (Մ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր :)

Լեհական սպիտակգվարդիականության մնացորդները, ոսադնիկները, դիմակավորված վոստիկանական դահիճները տեսնելով այդպիսի վոգեւորություն ու միասնություն, տեսնելով ժողովրդի անհողդողդ կամքը՝ հաստատելու Խորհրդային իշխանություն, թաղնվեցին իրենց թներում ու վորջերում: Մենք փրկություն չենք տա նրանց: Ժողովրդին մոլորեցնել կամ խաբել վոչ վոքի ու յերբեք չի հաջողվի, և թող մեր թշնամիները հույս չդնեն դրա վրա:

Հոկտեմբերի 28-ը — Արևմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովի գումարման որը — ընդմիշտ կմնա ժողովուրդների հիշողության մեջ, կմտնի բելոռուս ժողովրդի պատմության մեջ: Այդ որը 926 դեպուտատներ հավաքվեցին Բելոստոկում՝ արտահայտելու ամբողջ ժողովրդի կամքը և վճուելու այն հարցերը,

վոր առաջադրել եր ժողովուրդը, վճուելու դրանք այնպես, ինչպես սահանջում եր ժողովուրդը:

Ո՞վքեր են դրանք — այդ 926 դեպուտատները:

Նրանց մեջ չկա վո՛չ մի կալվածատեր, վո՛չ մի կապիտալիստ, վո՛չ մի լեհական մագնատ, վո՛չ մի ոսադնիկ, վո՛չ մի վոստիկան, վո՛չ մի վարձկան — Արևմտյան Բելոռուսիայի աշխատավորությանը կեղեքողներ:

Մեր դեպուտատները — դրանք Արևմտյան Բելոռուսիայի բանվորներն են, գյուղացիները, աշխատավոր ինտելիգենցիայի ներկայացուցիչները:

Հսկայական խանդավառությամբ, մեծ հրճվանքով, մենք, ժողովրդական ժողովի դեպուտատներս, արտահայտվեցինք և միահամուռ կերպով քվեարկեցինք Խորհրդային իշխանության ոգտին, Արևմտյան Բելոռուսիան Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը վերամիավորելու ոգտին, ինչպես նաև վճուեցինք կալվածատիրական ու վանքապատկան հողերի կոնֆիսկացիայի, բանկերի ու խոշոր արդյունաբերության աղաքանցման հարցերը:

Նեղվածք եր այն դահիճում, վորտեղ նիստեր եր ունենում ժողովրդական ժողովը: Այնքան շատ եր մարդկային յերջանկությունը, այնքան աղահաբար եյին մարդիկ ուզում խոսել, այնքան շատ բան պետք ե պատմեր յուրաքանչյուրն իր մասին, իր կյանքի մասին, ժողովրդի բարորության համար մեր կատարելիք հետապա աշխատանքի մասին, խաղաղ շինարարության մեր խնդիրների մասին:

Հրճվանքով, շնորհակալության արցունքներն աչքերիս, բուռն ծափահարություններով և «ուռա» բացականչություններով, մենք, ժողովրդական ժողովի դեպուտատներս, արտահայտում եյինք ժողովրդի կամքն ու ցանկությունը, շնորհակալություն եյինք հայտնում մեծ ու հարազատ հայր — ընկեր Ստալինին, Խորհրդային Կառավարությանը, ամբողջ Խորհրդային ժողովրդին և մեր աղատարարին — Կարմիր Բանակին: (Բ ու ռ ու ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր : Բ ո լ ո ր ը վ ո տ ք ի յ են կ ա ն գ ն ու մ :)

Ժողովրդական ժողովի դեպուտատները յեկան իրենց ընտրողների նակաղներով, յեկան և վճուեցին ամենակենսական հարցերը, վորոնք այնքան յերկար ժամանակ հուզում եյին Արևմտյան Բելոռուսիայի ժողովրդին: Դրանք անմոռանալի ժամեր եյին, յերբ յուրաքանչյուր դեպուտատ հրճվանք ու հպարտություն եր զգում իր աղատարարած ժողովրդի համար: Բելոռուսական ժողովրդական ժողովը, վորպես միակ, լիիշխան տեր և Արևմտյան Բելո-

առևտրային ժողովուրդների կամքն արտահայտող, կոչված երամենից առաջ վճռելու մեր տերիտորիայում ստեղծվելիք պետական իշխանության բնույթի հարցը:

Իշխանության բնույթի հարցը վճռելիս, մենք դիմեցինք մեծ խորհրդային Միության որինակին: ԽՍՀՄ ժողովուրդների պատմական փորձը սովորեցնում է մեզ, վոր միայն խորհրդային իշխանությունն է իսկական ժողովրդական իշխանություն, վորտեղ յերկիրը ղեկավարում է ինքը՝ ժողովուրդը, առանց կալվածատերերի ու կապիտալիստների: (Ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր :)

Վորտեղ խորհրդային իշխանությունն է, այնտեղ ընդմիջաժողոված է վարձու ստրկությունը, վոչնչացված է մարդու շահագործումը մարդու կողմից: Վորտեղ խորհրդային իշխանությունն է, այնտեղ Ստալինյան Սահմանադրությամբ ապահովված է աշխատանքի իրավունքը, հանդստի իրավունքը, կրթության իրավունքը, ծերության հասակում, ինչպես նաև հիվանդության և աշխատունակությունը կորցնելու դեպքում նյութական ապահովության իրավունքը: Վորտեղ խորհրդային իշխանությունն է, այնտեղ ստալինյան հողատարությունը մարդու նկատմամբ հանդիսանում է ամբողջ կյանքի ղեկավար սկզբունքը, և միայն այնտեղ կարող է խոսք լինել իսկական դեմոկրատիզմի մասին՝ աշխատավորության լայն մասսաների համար:

Վորտեղ խորհրդային իշխանությունն է, այնտեղ չկա և չի կարող լինել ազգային ճնշում ու անհավասարություն և բոլոր ժողովուրդները կազմում են միասնական համերաշխ ընտանիք: Միայն խորհրդային իշխանության որով է հնարավոր բոլոր ժողովուրդների կուլտուրայի չտեսնված ծաղկումը:

Խորհրդային Միության որինակը և պանական Լեհաստանում մեր իրավադուրկ կյանքի դառն փորձը մեզ համոզում են, վոր միայն խորհրդային իշխանությունը կարող է Արևմտյան Բելոռուսիայի ժողովրդին փրկել կարիքից, աղքատությունից, խավարից ու իրավադրկությունից, վոր միայն խորհրդային իշխանությունը — միակ արդարացի իշխանությունն ամբողջ աշխարհում — կապահովի մեզ համար քաղաքական, տնտեսական և կուլտուրական ծաղկում, կապահովի Արևմտյան Բելոռուսիայի բոլոր ժողովուրդների ազգային զարգացումը:

Ահա թե ինչու Բելոռուսական Ժողովրդական Ժողովն արտահայտելով Արևմտյան Բելոռուսիայի ժողովուրդների կամքն ու ցանկությունը, հռչակեց Արևմտյան Բելոռուսիայի ամբողջ տերիտորիայում խորհրդային իշխանության, քաղաքի և դյուղի

աշխատավորների իշխանության հաստատումը, հանձին աշխատավորների դեպուտատների խորհուրդների:

Յեվրոպական վորոշ պետությունների պարագլուխները յերադում են նախկին Լեհաստանի տերիտորիայում կապիտալիստական կարգերը վերականգնելու մասին, Լեհաստանի, վորի կառավարությունը խաբեց ժողովրդին ու փախավ, թողնելով նրան բախտի քմահաճույքին: Արևմտյան Բելոռուսիայի ժողովուրդների անունից մենք հայտարարում ենք, վոր վոչ մի այլ իշխանություն, բացի խորհրդայինից, մեզ հարկավոր չէ: Հանուն խորհրդային իշխանության, հանուն աշխատավորների իշխանության մեր ժողովուրդը կայաքարի մինչև արյան վերջին կաթիլը: Արևմտյան Բելոռուսիայի տերիտորիայում խորհրդային իշխանություն հաստատելու համար մենք պատրաստ ենք տալ ամեն բան, այդ թվում և մարդու համար ամենաթանկագին բանը — մեր կյանքը: (Ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր :)

Թող այդ լավ հիշեն նրանք, ովքեր ուղում են խմել ժողովրդի արյունը: Նրանց յերազները յերբեք չեն իրականանա — այս և մեր ամբողջ ժողովրդի կամքը:

Իսկ այժմ, ընկերներ, ինձ թույլ տվեք կարդալ Արևմտյան Բելոռուսիայի ժողովրդական Ժողովի Դեկլարացիան՝ Արևմտյան Բելոռուսիան Բելոռուսական խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմի մեջ մտնելու մասին:

«Այն ծանր ժամին, վորը քայքայում և ընաշնջում էր սպառնում մեր ժողովրդին, մեծ խորհրդային Միությունն իր պաշտպանության տակ վերցրեց Արևմտյան Բելոռուսիայի բնակչության կյանքն ու դուլքը:

Անպարտելի Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի ոգնությունով Արևմտյան Բելոռուսիայի ժողովուրդներն աղատաբերվեցին կալվածատերերի ու կապիտալիստների տիրապետությունից: Ընդմիջտ անցել են բելոռուս ժողովրդի ստորացման սև տարիները՝ լեհական պաների լծի տակ, վորոնք վտանակոխ եյին անում բելոռուս ժողովրդի տարրական իրավունքներն ու ազգային արժանապատվությունը:

Արևմտյան Բելոռուսիայի աշխատավորները միշտ իրենց անխղճի, արյունակցական կապերով կապված են համարել իրենց յեղբայրների հետ՝ վորոնք կառուցել են խորհրդային Սոցիալիստական Բելոռուսիան:

Արևմտյան Բելոռուսիայի աշխատավորները վճռակոնորեն պահանջում են վերամիավորել միասնական բելոռուս ժողովրդի,

միասնական բելոռուսական հողի՝ մինչև այժմ անջատված յերկու մասերը:

Բելոռուս ժողովրդի կամքը համարելով բարձրագույն որենք, Բելոռուսական ժողովրդական ժողովը վորոշում է.

Խնդրել հորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն հորհրդին և Բելոռուսական հորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն հորհրդին՝ Արևմտյան Բելոռուսիան ընդունել հորհրդային Միության և Բելոռուսական հորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմի մեջ, բելոռուս ժողովուրդը վերամիավորել միասնական պետության մեջ և դրանով իսկ վերջ դնել բելոռուս ժողովրդի անջատվածությանը:

Միայն Բելոռուսական խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմի մեջ Արևմտյան Բելոռուսիայի ժողովուրդը կկարողանա բուժել այն խոր վերքերը, վոր հասցրել են նրան ստրկացման յերկար տարիները, և մեծ խորհրդային Միության ողնությամբ բարձրացնել ու վերափոխել տնտեսությունը, զարգացնել իր ժողովրդական կուլտուրան, վորն արժանի լինի ազատ ժողովրդին, և ապահովել Արևմտյան Բելոռուսիայի բոլոր աշխատավորների բարեկեցության ծաղկումը:

Կեցցե՛ Բելոռուսական խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը:

Կեցցե՛ մեր հզոր Հայրենիքը — մեծ խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը: (Յերկար տևե ծափահարություններ:)

Այս Դեկլարացիան միաձայն ընդունված է Արևմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովի բոլոր դեպուտատների կողմից: Այն արտացոլում է Արևմտյան Բելոռուսիայի բոլոր աշխատավորների կամքն ու ցանկությունը:

(Ընկ. Պրիտիցկին Դեկլարացիան հանձնում է նախագահողին: Բուռն ծափահարություններ: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Հողային հարցը, ինչպես ձեզ հայտնի յե, մի հարց է, վորը չատեր հում Արևմտյան Բելոռուսիայի բոլոր աշխատավորներին: Պանական հողատիրության վոնջացումը և այդ հիման վրա հողազրկության ու սակավահողության վերացումն աշխատավորության լայն մասսաների միջից, նշանակում է, վոր գյուղացիության սովին ու աղքատությանը մեկ ընդմիշտ վերջ կդրվի:

Ահա թե ինչու Արևմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժո-

ղովը, ղեկավարվելով աշխատավոր գյուղացիների բուն շահերով և արտահայտելով բոլոր աշխատավոր մասսաների կամքը, Արևմտյան Բելոռուսիայի տերիտորիայում հռչակեց կալվածատիրական ու վանքապատկան բոլոր հողերի, պետական խոշոր չինովնիկների հողերի կոնֆիսկացիա, նրանց ամբողջ կենդանի ու մեռյալ ինվենտարով և կալվածքային կառուցումներով, առանց վորևէ փրկավճարի: Ժողովրդական ժողովն իր Դեկլարացիայի մեջ հայտարարեց, վոր ամբողջ հողն իր ընդերքով, ինչպես նաև անտառներն ու ջրերը ժողովրդական ունեցվածք են, այսինքն՝ պետական սեփականություն: Ժողովրդական ժողովը միահամուռ կերպով հաստատեց պանական հողերի գրավումը գյուղացիական կոմիտեների կողմից և դրանց հանձնումն աշխատավոր գյուղացիների ոգտագործմանը: Ժողովրդական ժողովը վորոշեց, վոր հողից պետք է ոգտվի միայն նա, ով աշխատում է նրա վրա, ով ինքն է այն մշակում:

Այսպես է Արևմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովի վորոշումը հողային հարցի վերաբերյալ:

Արևմտյան Բելոռուսիայի բանվորները, գյուղացիները և աշխատավոր ինտելիգենցիան իրենց բազմաթիվ և բազմամարդ միտինգներում ու ժողովներում նաև հարց դրին բանկերն ու խոշոր արդյունաբերությունն ազգայնացնելու անհրաժեշտության մասին: Յեվ այդ միանգամայն հասկանալի յե: Բանկերը լեհական կալվածատերերի ու կապիտալիստների ձեռքում ծառայում էյին վորպես շահագործողների տիրապետությունն ամբապընդելու ղենք և նրանց հնարավորություն էյին տալիս հարստանալու ի հաշիվ բանվորների ու գյուղացիների: Ֆաբրիկատերերն ու գործարանատերերը տմարդի կերպով շահագործում ու կողոպտում էյին բանվորներին, քայքայում էյին արհեստավորներին, աննշան գնով գնում էյին հումքն Արևմտյան Բելոռուսիայի գյուղացիներից: Ձեռք բերելով անթիվ ու անհամար հարստություններ, նրանք բանվոր դասակարգին պահում էյին ստրկության մեջ: Գործադրկությունը և անվստահությունը վաղվա որվանկատմամբ, Արևմտյան Բելոռուսիայի բանվորական մասսաների մշտական բաժինն էյին:

Նպատակ ունենալով վոնջացնել մարդու շահագործումը մարդու կողմից և պարագլխներին — ֆաբրիկատերերին, գործարանատերերին ու բանկիրներին զրկել աշխատավոր ժողովրդի նկատմամբ նրանց ունեցած իշխանությունից, Արևմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովը հռչակեց բանկերի ու խաբար ար-

դյուանաբերութեան արդայնացում և դրանք հայտարարեց համա-
ժողովրդական ունեցվածք, պետական սեփականութեան:

Այսպես մենք, դեպուտատներս, վճռեցինք նաև այդ հոգող
հարցը: Մեր այս վճիռը համապատասխանում է Արևմտյան Բե-
լոռուսիայի ամբողջ ժողովրդի նակաղին ու ցանկութեանը:

Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի շատ մարտիկներ
ու հրամանատարներ, կատարելով խորհրդային Կառավարութեան
և ընկեր Ստալինի հրամանը, ապատալըելով Արևմտյան Բելոռու-
սիայի աշխատավորներին, հերոսաբար զոհվեցին լեհական բան-
դանների դեմ մղված պայքարում: Նրանց անունները հավիտյան
կապրեն բելոռուս ժողովրդի սրտերում: Բելոստոկի բանվորների
և ինտելիգենցիայի առաջարկութեամբ, Արևմտյան Բելոռուսիայի
ժողովրդական ժողովը վորոշեց Բելոստոկում հուշարձան կանդ-
նեցնել Արևմտյան Բելոռուսիայի աշխատավորների աղատալը-
ման մեծ դործի համար զոհված հերոսներին: (Ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր :)

Արևմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովի պատմական
վորոշումներն արժանացան Արևմտյան Բելոռուսիայի ամբողջ
ժողովրդի միահամուռ հավանութեանը, վորպես նրա բուն շա-
հերին համապատասխանող վորոշումներ:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի թանկազին ընկե՛ր դեպուտատներ:
Արևմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովը մեծ վստահու-
թյուն է ցույց տվել մեզ: Նա հանձնարարել է մեզ, ժողովրդա-
կան ժողովի Լիազոր Հանձնաժողովի անդամներին, Արևմտյան
Բելոռուսիայի բոլոր աշխատավորների անունից խնդրել ԽՍՀ
Միութեան Գերագույն խորհրդին՝ Արևմտյան Բելոռուսիան ըն-
դունելու խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեանը
Միութեան կազմի մեջ — մեծ ու անսպարտելի յեղբայրական ժո-
ղովրդների միասնական, հզոր ընտանիքի մեջ:

Արևմտյան Բելոռուսիայի ամբողջ ժողովրդի անունից մենք
հավաստիացնում ենք, վոր ամեն բան կանենք, վորպեսզի խոր-
հրդային Բելոռուսիայում բնակվող մեր յեղբայրների ու քույ-
րերի որինակով, ամբողջ խորհրդային ժողովրդի որինակով ու
յեղբայրական ողնութեամբ, ամենամոտիկ ժամանակում մեր հե-
տամնաց, քայքայված Արևմտյան Բելոռուսիան դարձնենք ծաղ-
կող յերկիր, սոցիալիստական ինդուստրիայի յերկիր: Մենք
կպայքարենք այն բանի համար, վորպեսզի մեր աղատ դաշու-
րում նվաճենք նույնպիսի բարձր բերք, ինչպիսին ձեռք են բե-
րել մեր յեղբայրները՝ Բելոռուսական ԽՍՀ-ում: Մենք կկառու-
ցենք նոր Փարիզիկաներ ու դործարաններ, կստեղծենք սոցիալիս-

տական կուլտուրայի ոջախներ և ամեն բան կանենք, վորպեսզի
լինենք խորհրդային Միութեան ժողովուրդների յեղբայրական
ընտանիքի արժանավոր անդամներ: (Ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր :)

Ձեզ հետ միասին, ձեռք-ձեռքի տված, մենք կկառուցենք յեր-
ջանիկ ու հրճվալից կյանք: Մենք ելեկտրական լույսով կլուսա-
վորենք մեր խալար գլուղերը, կհերկենք կալվածատիրական հո-
ղերը նոր, չտեսնված բերքի համար: Մենք մեր զավակներին
կտանք Կարմիր Բանակին, վորպեսզի նրանք ղենքը ձեռքներին
պաշտպանեն մեր մեծ իրավունքները, վորպեսզի նրանք պաշտ-
պանեն մեր սոցիալիստական հայրենիքի սրբազան հողերը: Յեվ
յեթե սոցիալիզմի թշնամիները հանդիսն են ձեռք բարձրացնել մեր
հողի վրա, մեր աղատութեան վրա, մենք բոլորս, մեկ մարդու
պես, փոքրից մինչև մեծը, վոտքի կկանգնենք՝ ի պաշտպանու-
թյուն մեր հայրենիքի, իսկ յեթե պահանջվեց, հանուն նրա
կտանք մեր կյանքը: (Բ ու ու ն ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր :)
Դրանում ձեզ խնդրում ենք չտարակուսել, այլ անկեղծորեն հա-
վատալ մեզ:

Կեցցե՛ք ժողովուրդների մեծ բարեկամութեանը:

Կեցցե՛ն Արևմտյան Բելոռուսիայի և Արևմտյան Ուկրաինայի
աղատալըված ժողովուրդները:

Կեցցե՛ք մեծ խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան-
ների Միութեանը:

Կեցցե՛ք մեր ժամանակի մեծագույն մարդը, մեր բարեկամ և
աղատարար ընկեր Ստալինը: (Յ ե ր կ ա ր ա տ և ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր :)

Նախագահող: Խնդրում եմ Արևմտյան Բելոռուսիայի ժողո-
վրդական ժողովի Լիազոր Հանձնաժողովի ընկեր անդամներին
տեղ դրավել դեպուտատների շարքերում: (Բ ու ու ն, յ ե ր կ ա-
ր ա տ և ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր : Բ ու ու ո ը վ ո տ ք ի յ ն ն
կ ա ն դ ն ու մ : Լ ի ա ղ ո Ր Հ ա ն ձ ն ա ժ ո ղ ո Վ ի անդամները
տեղ են դրավում դեպուտատների շարքերում:)

Ընկեր դեպուտատներ, Պրիտիցկու ճառի թարգմանութեանը,
հավանական է, չի՞ պահանջվում:

Ձայներ: Վո՛չ:

Նախագահող: Անցնում ենք Արևմտյան Բելոռուսիայի ժողո-
վրդական ժողովի Լիազոր Հանձնաժողովի հայտարարութեան
ընթարկմանը:

Խոսք ունի Արևմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովի
Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Պեստրակը: (Բ ու ու ն,

յերկարատե ծափահարություններ, վորոնք փոխ-
վում են ուլացիայի: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Ֆ. Ս. Պետրակ (պոետ, Սախովցի գյուղ, Կոսսովի
վոլոստ, Պոլեսյեյի մարզ, Արևմտյան Բելո-
ռուսիա): Ճառն արտասանված է բելոռուսերեն
լեզվով:

Մեր յերկիրը — Արևմտյան Բելոռուսիան — տրեխավորների
յերկիր էր, ժողովրդական կարիքի ու հացաղրկության յերկիր:
Նա միաժամանակ մտղնատային չքեղության և աշխատանքի,
թեև չլարձատրվող աշխատանքի, սիրո յերկիր էր, կապիտալիս-
տական կողոպուտի, թալանի յերկիր: Դա սքանչելի բնության
յերկիր էր, և չնայած դրան, ժողովրդական վոլին հորինում
էր անչափ տխուր յերգեր: Դա ժողովրդի դառն պատմությամբ
ստեղծված կոնտրաստների յերկիր էր: Արևմտյան Բելոռուսիան
լեհական բուրժուազիայի կիսադաղութն էր, բուրժուազիա, վորը
գեռես արմատավորում էր ֆեոդալական-կալվաճատիրական
տրադիցիաներ: Դա սոցիալական ու աղգային ճնշման յերկիր
էր: Սարսափելի չահագործման որինակներ հաճախ փնտռել են
վորեւ տեղ չնդկաստանում կամ Ձինաստանում: Սակայն հեռու
գնալու կարիք չկար. — Արևմտյան Բելոռուսիայում բանվորը
50%/օ-ով ավելի պակաս աշխատավարձ էր ստանում, քան կենտ-
րոնական Լեհաստանի բանվորը: Այստեղից էլ առաջանում էին
բոլոր մնացած սահմանափակումներն Արևմտյան Բելոռուսիայի
աշխատավորների համար: Արևմտյան Բելոռուսիայի բանվոր դա-
սակարգին լեհական շովինիզմի թույնով, աղգային յերկառա-
կության թույնով կերակրում էին բուրժուազիայի այնպիսի
միջնորդների ձեռքով, ինչպիսին է ՊՊՍ-ը: Բանվոր դասակարգի
առջև սքողվում էր Արևմտյան Բելոռուսիայի՝ վորպես յերկրի
գոյությունն իսկ: «Ձկա վոչ մի Արևմտյան Բելոռուսիա — կան
միայն «Արևելյան Կրեսներ» — ահա աղգային ճնշման, դաղու-
թային չահագործման տիպիկ արտահայտությունը:

Իսկ բելոռուս գյուղացի⁶ն: Արևմտյան Բելոռուսիան 80%/օ-ով
գյուղացիական յերկիր է: Բելոռուս գյուղացիության հիմնական
մասսային վիճակված էր հացաղրկություն ու հողի անվերջ կա-
րոտ: Հողը սիրելի յեր, հարադատ, սքանչելի, նա իր հյութե-
րով սնում էր մեզ: Բայց նրա ժողովուրդը վորբ էր:

Դաժան, անիծյալ պանը — ժողովրդի կողոպտիչն այդ հողը
դարձրել էր խորթ մայր նրա զավակների համար: Ժողովրդի
ներսում թաղնված տաղանդները թառամում էին կարիքի մեջ,
իսկ յեթե անդամ յերեւան էին դալիս, ճղմվում էին տիրակալ-

պանի ձեռքով ու մեռնում գեռ չբացված, ինչպես հնձված ծա-
ղիկներ: Բելոռուս ժողովրդի սերունդները մինչև վերջերս Արև-
մտյան Բելոռուսիայում տալիս էին բաղմաթիվ չքավորներ, վո-
րոնք մեր յերկրի համար տիպիկ ուղատներով շրջում էին ուսե-
րից պարկեր կախած ու ծնդծնդացնում իրենց քնարները, վոդոր-
մություն խնդրելով: Յերկիրը լի յեր չքավորությամբ և ժողո-
վրդական վշտով:

Իսկ բելոռուս աշխատավոր ինտելիգենտն իսկական մուրացկան
էր — առանց ոթեկանի, կորցնելով իր ընդունակությունները, վո-
րոնք չէր կարող ժողովրդին տալ, վորովհետև աշխատանքի
դռները փակ էին նրա առջև: Ժողովրդական ուսուցիչը գորչ
կյանք էր վարում. ագրոնոմը գյուղատնտեսական յերկրում,
ինչպիսին մեր յերկրին է, աշխատանք չունեւ: Լեհական իշխա-
նությունը մեր յերեխաների համար ուղարկում էր լեհ ուսու-
ցիչներին՝ շովինիստական դիրքավորմամբ, վորպեսզի մեր ժողո-
վրդին անարդեն իր զավակների առաջ ու նրանց սրտերից ջնջեն
այն, ինչով նրանց ոժտել է հարադատ մայրը:

Ժողովրդի այսպիսի կենցաղը կարող էր նրան տանել ու տա-
նում էր միայն գեպի մահացում:

Հիմա դուք կհասկանաք, թանկագին ընկերներ, ինչքան մեծ
էր մեր ուրախությունը, մեր ժողովրդի ուրախությունը, յերբ
Բանվոր-Գյուղացիական Կարմիր Բանակը խորհրդային Կառա-
վարության հրամանով սեպտեմբերի 17-ին անցավ սահմանն ու
ժողովրդին աղատադրեց պանական լծից, աղատադրեց ընդմիշտ:
(ԲՈՒՈՆ ԾԱՓԱՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ:)

Պանական կրկի տակ անցկացրած քսան ծանր տարիները,
իր աղատադրման համար Արևմտյան Բելոռուսիայի աշխատավոր
մասսաների մղած արյունահեղ պայքարի քսան տարիներն ապար-
դյուն չանցան: Իդուր չեն բանտեր ընկել ու կախաղան բարձրա-
ցել ժողովրդի լավազույն զավակները: Հավետ ցանկալի հողն
անցավ նրա ձեռքը, ով աշխատում է այդ հողի վրա, անցավ
գյուղացու ձեռքը: Ֆարրիկաները, գործարաններն ու բանկերը
դարձան ժողովրդի ունեցվածք: Ծեծկված ժողովուրդը դարձավ
հաղթող ժողովուրդը:

Արևմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովը մեզ լիազո-
րել է հաղորդել ձեզ, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդին, իր կամքը,
ժողովրդի կամքը: Բելոռուս ժողովուրդը, վորը քվեարկել է
յերկրում խորհրդային իշխանություն հաստատելու ոգտին, ու-
ղում է միանալ մեծ Խորհրդային Միության ժողովուրդներին
ընտանիքին: Նա ուղում է Խորհրդային Սոցիալիստական Հանրա-

պետութիւնները որինակով ընկեր Ստալինի իմաստուն ղեկավարութեամբ ընթանալ նրանց ուղիով, սոցիալիստական շինարարութեան ուղիով, դեպի կոմունիզմի բարձունքները: Նա ուղում է Խորհրդային Միութեան բոլոր ժողովուրդներին հետ ապրել ու պայքարել հաւուն ազատաւորված յերկրի բարգաւաճման և փառքի: Նա ուղում է նրանց հետ միասին ամրապնդել մեծ Խորհրդային Միութեան հզորութիւնը՝ Ստալինյան Սահմանադրութեան արևի տակ: (Ծափահարութիւններ:)

Արևմտյան Բելոռուսիայի ժողովուրդն իր ընտրյալների միջոցով խնդրում է Գերագույն Խորհրդին լսել իր ցանկութիւնն ու Արևմտյան Բելոռուսիան մտցնել ԲՍՄՀ կազմի մեջ, և դրանով իսկ մեծ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան կազմի մեջ:

Մեզ պանական մտրակներէց, վայրենի տեւորից և ծաղր ու ծանակից փրկելու համար մենք բերել ենք ժողովրդական մեծ յերախտադիտութիւն: Այդ բոլորի համար խորհրդային ամբողջ ժողովրդին (բուռն ծափահարութիւններ), նրա անպարտելի Կարմիր Բանակին (բուռն ծափահարութիւններ), նրա հրամանատար — առաջին մարշալ ընկեր Վորոշիլովին (բուռն ծափահարութիւններ, բոլորը վոտքի յեն կանգնում), Խորհրդային Կառավարութեանը և նրա ղեկավար ընկեր Մոլոտովին (բուռն ծափահարութիւններ, բոլորը վոտքի յեն կանգնում), բոլոր ժողովուրդներին կոմունիստական կուսակցութեանը և թանկազին հայր, իմաստուն առաջնորդ — ընկեր Ստալինին (բուռն, յերկարատե ծափահարութիւններ, վոտքի յեն կանգնում) մեր անկեղծ, մեր ջերմ, մեր համաժողովրդական վողջույնը:

Կեցցե՛ն Խորհրդային Միութեան ժողովուրդները, վորոնք միաձուլված են լենինյան — ստալինյան անխղելի բարեկամութեամբ: (Բուռն ծափահարութիւններ:)

Կեցցե՛ անբաժանելի, ընդմիշտ միավորված Խորհրդային Բելոռուսիան:

Կեցցե՛ Խորհրդային Կառավարութեան ղեկավար ընկեր Մոլոտովը:

Կեցցե՛ անպարտելի քաջարի Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակը:

Կեցցե՛ առաջին մարշալ ընկեր Վորոշիլովը:

Կեցցե՛ բոլոր ժողովուրդներին կոմունիստական կուսակցութիւնը:

Կեցցե՛ բոլոր աշխատավորների առաջնորդ ու բարեկամ, մեծ

և իմաստուն ընկեր Ստալինը: (Բուռն, յերկարատե ծափահարութիւններ: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Նախագահող: Խոսք ունի ղեկուսաւոր Լյուինան:

Ն. Ս. Լյուինա (Ոսկովիչի ընտրական ոկրուգ, Բելոռուսական ԽՍՀ): Ծառն արտասանված է բելոռուսերեն լեզվով:

ԽՍՀ Միութեան Գերագույն Խորհրդի ընկե՛ր ղեկուսաւորներ: Մեր արտահերթ Հինգերորդ Սեսիայում ներկա յե Արևմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովի Լիազոր Հանձնաժողովը: Այդ լավագույն մարդկանց, արեւմտ-բելոռուսական ժողովրդի ընտրյալներին վիճակվել է մեծ պատիւ, վիճակվել է մեծ հարգանք — լինել Մոսկվայում, Կրեմլում, սոցիալիստական պառլամենտի մեր Սեսիայում:

Ժողովուրդը վստահել է իր Լիազոր Հանձնաժողովին Բելոռուսական ժողովրդական ժողովի անունից խնդիրքով դիմելու մեզ Արևմտյան Բելոռուսիան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան կազմի մեջ մտցնելու մասին՝ այն վերամիավորելով մեր Բելոռուսական ԽՍՀ-ին: (Ծափահարութիւններ:)

Մենք, ղեկուսաւորներս, ազատ բելոռուս ժողովրդի, Ստալինյան Սահմանադրութեան արևի տակ ծաղկող Բելոռուսական ԽՍՀ ներկայացուցիչներս, ջերմորեն վողջունում ենք Արևմտյան Բելոռուսիայի մեր ազատ յեղբայրներին ու քույրերին և միահամուռ կերպով պաշտպանում ենք Արևմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովի խնդիրքը՝ Արևմտյան Բելոռուսիան ԽՍՀՄ կազմի մեջ մտցնելու և այն մեր ԲՍՀ-ին վերամիավորելու մասին:

Բելոռուսական ԽՍՀ յերջանիկ ժողովուրդը, ինչպես և ամբողջ խորհրդային հզոր ժողովուրդը պատրաստ է իր ընտանիքի մեջ ընդունելու Արևմտյան Բելոռուսիայի ազատաւորված յեղբայրներին ու քույրերին: Մենք յերեկ միահամուռ կերպով բավարարեցինք Արևմտյան Ուկրաինայի յեղբայրների խնդիրքը, այսօր նույնպես միահամուռ կերպով կբավարարենք Արևմտյան Բելոռուսիայի ժողովուրդների խնդիրքը: (Ծափահարութիւններ:)

Թող նրանք, Արևմտյան Բելոռուսիայի աշխատավորները, մեր խորհրդային բելոռուս ժողովրդի հետ միասին, Լենինի — Ստալինի մեծ կուսակցութեան ղեկավարութեամբ, Ստալինյան Սահմանադրութեան արևի տակ, մեր ամբողջ խորհրդային ժողովրդի ող-

նությամբ կառուցեն իրենց յերջանկությունը, իրենց կյանքը, իսկ մենք դրանում կողնենք նրանց: (Ծ ա փ ա հ ա Ր Ո Ւ Թ յ Ո Ւ Ն ն ե Ր :)

Յերկար տարիներ ընթացքում Արևմտյան Բելոռուսիայի և Արևմտյան Ուկրաինայի ժողովուրդներին կողոպտել են լեհական պաներն ու լեհական կապիտալիստները: Աղգային ճնշում, իրավադրկություն, սով, տգիտություն և չքավորություն — ահա թե ինչ եր իշխում Արևմտյան Բելոռուսիայի, Արևմտյան Ուկրաինայի քաղաքներում, ավաններում ու դյուղերում:

Լեհական պետությունն ամենածանր բանտն եր այդ յերկրամասի աշխատավորության համար: Լեհական դահիճները բելոռուս ժողովրդին լեհացնելու նողկալի քաղաքականություն եյին վարում, մի բան, վոր հակասում եր ժողովրդի շահերին, ճնշում եր ազատասեր ժողովրդին: Բելոռուսները և վոչ-լեհական աղ-գության մնացած բոլոր ժողովուրդները զրկված եյին իրենց կուլտուրայի զարգացման իրավունքից, նույնիսկ նրանց արգելում եյին խոսել մայրենի լեզվով:

Բելոռուսական, ուկրաինական, հրեական դպրոցները փակված, ավերված եյին:

Սակայն անիծյալ բռնացողներին, լեհական պաներին 20 տարվա ընթացքում չհաջողվեց խեղդել կուլտուրան ու մայրենի լեզուն, վորով ոգտվում ե ժողովուրդը: Մենք այս բարձր տրիբունից յերեկ ու այսօր լսում ենք Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի ժողովուրդների մայրենի լեզուն: Պաների համար դժվար եր ժողովրդից խլել այն, ինչով ապրում ե ժողովուրդը, այն, ինչի մասին յերազում ե ժողովուրդը: Արևմտյան Բելոռուսիայի մեր յեղբայրները սիրելի յեն մեզ բոլորիս համար: Մեր զգացմունքները, մեր շահերը նույն են — ստեղծել մեր ժողովրդական յերջանկությունը, ամրացնել ժողովրդի բարեկեցությունը, զարգացնել կուլտուրան և ամրապնդել սոցիալիստական պետության հզորությունը:

Ընկե՛ր դեպուտատներ: Ամենածանր մոմենտին, յերբ քայքայման ու վոչնչացման եյին յենթարկվում Արևմտյան Բելոռուսիայի ժողովուրդները, մեծ խորհրդային Միությունն իր պաշտպանության տակ վերցրեց Արևմտյան Բելոռուսիայի բնակչության կյանքն ու գույքը: ԽՍՀՄ ժողովուրդներն իրենց յեղբայրներին ու քույրերին ոգնության յեղբայրական ձեռք մեկնեցին և Արևմտյան Բելոռուսիայի աշխատավորներին ընդմիշտ ազատադրեցին քաղաքական, սոցիալական և աղգային ճնշման լծից: Ազատ բելոռուս ժողովուրդն իր պատմության մեջ առաջին անգամ

հնարավորություն ստացավ դառնալու իր հողի, իր յերկրի, իր բախտի լիիրավ տերը:

Բելոստոկում գումարված Բելոռուսական Ժողովրդական Ժողովն արտահայտեց Արևմտյան Բելոռուսիայի ժողովուրդների կամքն ու ցանկությունը, Արևմտյան Բելոռուսիայի ամբողջ տերիտորիայում հռչակեց խորհրդային իշխանության հաստատումը:

Մենք պաշտպանում և վողջունում ենք այդ վորոշումը, քանի վոր նա արտացոլում ե ամբողջ ժողովրդի շահերն ու իղձերը:

Արևմտյան Բելոռուսիայի աշխատավորներն իրենց միշտ համարել են բուն շահերով կապված իրենց յեղբայրների հետ, վորոնք կառուցել են խորհրդային Բելոռուսիան: Նրանք միահամուռ կերպով պահանջեցին միավորել բելոռուս ժողովուրդը, վորը յերկար տարիներ գտնվում եր անջատվածության մեջ:

Մենք վողջունում և պաշտպանում ենք նրանց ցանկությունները, նրանց վորոշումները: Յեղբայրներ ու քույրեր, յեկեք մեզ մոտ, մեր միասնական, համերաշխ ընտանիքը, մեր որինակով կառուցեք ձեր կյանքն ու յերջանկությունը, ապրեք նույնպիսի բերկրալի և յերջանիկ կյանքով, ինչպես մենք, հարադատ հայր, սիրելի Ստալինի ջերմությամբ ապրող բելոռուսներս: (Ծ ա փ ա հ ա Ր Ո Ւ Թ յ Ո Ւ Ն ն ե Ր :)

Այնտեղ, վորտեղ մեծ Ստալինն ե, — այնտեղ ե և հաղթանակը, այնտեղ ե ուրախությունն ու խնդրությունը, ունեւորությունն ու իսկական կուլտուրան ժողովրդի համար:

Ընկե՛ր դեպուտատներ: Արևմտյան Բելոռուսիայի ժողովուրդը միայն խորհրդային ժողովրդի համերաշխ ընտանիքում, մեծ խորհրդային Միության և նրա անբաժանելի մաս — Բելոռուսական ԽՍՀ կազմում կարող ե արագորեն բուժել այն խոր վերքերը, վոր հասցրել են նրան ծանր, ստրկական կյանքի, ճնշման ու քայքայման յերկար տարիները: Միայն խորհրդային Միության ոգնությամբ և հնարավոր բարձրացնել ու վերակառուցել տնտեսությունը, զարգացնել ազատ ժողովրդին արժանի մեր բելոռուսական կուլտուրան, և ապահովել Արևմտյան Բելոռուսիայի ամբողջ աշխատավորության կյանքի ծաղկումը:

Թող կեցցե՛ և ամրանա բոլոր ժողովուրդների բարեկամությունը:

Կեցցե՛ մեր յերջանիկ հայրենիքը:

Կեցցե՛ մեր ուրախություն, մեր յերջանկություն, մեր հույս, մեր հարադատ ընկեր Ստալինը: (Բ ու ո Ն Ծ ա փ ա հ ա Ր Ո Ւ Թ յ Ո Ւ Ն ն ե Ր : Բ ո լ ո Ր Վ ո թ ք ի յ են կ ա ն դ ն ու մ : Բ ա ց ա կ ա ն չ ու Թ յ Ո Ւ Ն ն ե Ր . «Ուռա՛ ընկեր Ստալինին» :)

Նախագահող: Խոսք ունի Արևմտյան Բելոռուսիայի ժողովուրդական ժողովի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Գրինցև-վիչը: (Ծափահարություններ:)

Ն. Ի. Գրինցևիչ (գլուղացի, Սափինո գլուղ, Կուրե-նեցկի վոլոստ, Վերեյսկի գավառ): Ճառն արտա-սանված է բելոռուսերեն լեզվով:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միու-թյան Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Թույլ տվե՛ք ինձ Արևմտյան Բելոռուսիայի ամբողջ աշխատավորության անունից հաղորդել ձեզ ջերմ, սրտադին վողջուն:

Արևմտյան Բելոռուսիայի աշխատավորները հանձնարարել են ինձ վողջուն հաղորդել Խորհրդային Միության մեծ ժողովուրդին, ամբողջ աշխարհի աշխատավորության մեծադույն ուսուցիչ և առաջնորդ, մեր իմաստուն, թանկազին հայր—ընկեր Ստալինին: (Բուռն, յերկար ժամանակ չլռող ծափահարու-թյուններ: Բոլորը վոտքի յեն կանգնում: Բացա-կան չություններ. «Ուռա՛»:)

Ընկե՛ր դեպուտատներ: Բելոռուսիան չատ տարիներ առաջ անջատվել է յերկու մասի: Նրա Արևմտյան մասն ընկել է լեհա-կան պաների, կալվածատերերի ու կապիտալիստների ճանկը, վորոնք իրենց բարեկեցութունը, իրենց կուշտ կյանքը կառու-ցում, իրենց դրպանները լցնում էին ի հաշիվ բելոռուս ժողո-վրդի կեղեքման: Լեհական կալվածատերերն ու կապիտալիստ-ները գլուղացիությանը հարկում էին ուժից վեր հարկերով: Հարկ էին վերցնում ջրհորների, բակերի, ցանկապատերի, լիամների համար, սայլերի տախտակների համար: Հարկերը չվճարելու համար բելոռուս ժողովուրդն ամեն ուր յենթարկվում էր ուսպրեսիաների: Լեհական պաները սկսեցին գլուղացիներին տարաբնակեցնել ըստ խոտորների, վորպեսզի նրանք չկարողա-նան միավորվել ու դուրս գալ գերությունից: Դրանով իսկ նրանք փորձում էին մեռցնել գլուղացու յերազը, աշխատավորության յերազը՝ քաղաքական, տնտեսական և ազգային ազատության մասին: Հարկահավաքներն անողոքաբար կողոպտում ու ճնշում էին բելոռուս ժողովուրդին: Բելոռուսին անմատչելի յեր բժշկու-թյունը: Նա դպրոցներում չեր կարող մայրենի լեզվով սովորել: Նա պարտավոր էր իշխանավորների հետ խոսել վոչ թե մայրենի, այլ լեհերեն լեզվով: Չնայած այսպիսի դաժան ճնշման, բելո-ռուս ժողովուրդը դուրսուկ, բայց և այնպես յերգում էր իր ազգային լեզվով: Նա յերգում էր յերազելով իր քաղաքական ու տնտեսական անկասության մասին:

Արևմտյան Բելոռուսիայի ժողովուրդը յերբեք չի մոռանա սեպտեմբերի 17-ի մեծ ուրը, յերբ լուրեր տարածվեցին այն մա-սին, վոր հզոր Կարմիր Բանակն անցել է սահմանը: Բելոռուս-ների սրտերում վերակենդանացավ ազատության յերազը: Բոլոր գլուղացիները մեկ մարդու պես թողին դութանները, տախան-ները և դնացին դիմավորելու իրենց ազատարարներին: Մենք միտինդ հրավիրեցինք, վորտեղ ներկա յեր մոտավորապես հա-զար մարդ: Կարմիր Բանակը դեռ չեր յեկել, բայց մենք միտին-դում արդեն ստեղծել էինք ժամանակավոր կոմիտե: Պաները փախան դեպի անտառները, և մինչև Կարմիր Բանակի դալն ավանը կառավարում էր ժամանակավոր կոմիտեն:

Յես, վորպես Արևմտյան Բելոռուսիայի դեպուտատ և վոլոս-տային գլուղացիական կոմիտեյի նախագահ, հայտարարում եմ, վոր Արևմտյան Բելոռուսիայի ամբողջ բնակչությունը պատրաստ է ամեն մի ղոհաբերության, չի խնայի իր կյանքը, ու վոչ վոքի թույլ չի տա խել իրենից Խորհրդային Իշխանությունը: Մենք մեր հողը վոչ վոքի չենք տա: Այդ դործում մեզ ողնություն ցույց կտան մեծ Խորհրդային Միության ժողովուրդները:

Յես խնդրում եմ ընդունել մեզ մեծ Խորհրդային Սոցիալիս-տական Հանրապետությունների Միության հարազատ ընտանիքի մեջ: Յես հաստատ հավատում եմ, վոր մեծ Խորհրդային Միության Գերագույն Խորհուրդը, բուլչեիկների կոմունիստա-կան մեծ կուսակցությունը և աշխատավորության մեծ առաջ-նորդ ընկեր Ստալինը մեզ չեն մերժի դրանում:

Մենք կաշխատենք այնպես, ինչպես աշխատում է Խորհրդային Միության ամբողջ ժողովուրդը: Մենք կաշխատենք ու կապրենք ըստ Ստալինյան Սահմանադրության:

Կեցցե՛ Բելոռուսական ռադաճակատի հրամանատար ընկ. Կովալյովը: (Ծափահարություններ:)

Կեցցե՛ ամենահզոր, անպարտելի Բանվորա-Գլուղացիական Կարմիր Բանակը և Խորհրդային Միության առաջին մարշալ ընկեր Վորոշիլովը: (Բուռն ծափահարություններ: Բո-լորը վոտքի յեն կանգնում:)

Կեցցե՛ ժողկոմխորհի Նախագահ մեր սիրելի ընկեր Մուրտովը: (Բուռն ծափահարություններ: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Կեցցե՛ ամբողջ աշխարհի աշխատավորության բարեկամ, մեր հարազատ, սիրելի հայր ընկեր Ստալինը: (Բուռն ծափահա-րություններ: Բոլորը վոտքի յեն կանգնում: Բա-ցա կան չություններ. «Ուռա՛» ընկեր Ստալինին:)

Նախագահող: Խոսք ունի Արեմտյան Բելոռուսիայի Ժողովըրդական Ժողովի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Տուրլեյսկին:

Ի. Ա. Տուրլեյսկի (չուգունածուլական դործարանի ինժեներ, Լոմժա քաղաք): Ճառն արտասանված է լեհերեն լեզվով:

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Քսանտարի դոյուլթյուն ունեւ լեհական պետությունը, պետություն, վորն անվանում եր իրեն անկախ, վորն աշխատում եր բոլոր մարդկանց ասել, վոր ինքն աղատ պետություն է: Սակայն այդ պետությունն աղատ եր միմիայն կառավարական կլիկայի համար, կալվածատերերի համար, կապիտալիստների համար, բարձրաստիճան սպանների համար:

Այդ պետությունը բանտ եր բելոռուսական և ուկրաինական ժողովուրդների համար, բանտ եր Լեհաստանում բնակվող բոլոր աղքատներին աշխատավոր մասսաների համար:

Մի քանի թվեր կրերեմ պաշտոնական վիճակագրությունից: Հողագործության նախկին լեհական մինիստր Պոնյատովսկին ասում եր, վոր լեհական դյուղերում բնակվում են 7 միլիոն այսպես կոչված անպետք մարդիկ, վորոնք բան չունեն անելու, վորոնք ունեն այնպիսի հողակտորներ, վոր չեն կարող նրանցով կերակրվել, կամ ընդհանրապես հող չունեն: Յեթե այդ թվին ավելացնենք քաղաքում բնակվող 1,5 միլիոն դործազուրկներին և 1,5 միլիոն կիսագործազուրկներին, վորոնք աշխատում էին շաբաթական 1—2 օր, ապա պարզ կլինի, վոր պանական Լեհաստանում 10 միլիոն մարդ անդործ եր, վոր քաղցած եր 10 միլիոն մարդ:

Այդ հսկայական թիվն ինքն է խոսում իր մասին, ասում է այն մասին, թե ինչպիսի «աղատություն և անկախություն» կար Լեհաստանում:

Ահա դարձյալ մի քանի թվեր պաշտոնական վիճակագրությունից: Լեհական վերջին անճարակ կառավարության արդարադատության նախկին մինիստր Գրաբովսկին ասել է, վոր Լեհաստանում վերջին տարին 130 հազար մարդ է դատապարտվել այսպես կոչված «կրիդիսային հանցագործությունների» համար: Ի՞նչ հանցագործություններ են դրանք: Սովից ու ցրտից տառապող մարդիկ պանական դաշտերից վերցնում էին մի քանի կիլոգրամ կարտոֆել կամ պանական անտառում կտրում մեկ-յերկու ծառ: Յեվ ահա այդ «հանցագործությունների» համար նրանց բռնում ու դատում էին: Պանական Լեհաստանում բան-

տերը լեւի լեցուն էյին: Յեվ ահա տասնյակ հազարավոր մարդիկ փակված էյին համակենտրոնացման ճամբարներում, վորոնց լեհական կառավարողները համեստորեն անվանում էյին «հարկադիր աշխատանքներ կատարելու վայրեր»: Սակայն դրանք իսկական համակենտրոնացման ճամբարներ էյին, վորտեղ կարաբինի զնդակների սպառնալիքների տակ մարդիկ ճահիճնեցում աշխատում էյին որական շատ ու շատ ժամեր:

Ահա թե ինչ եր ներկայացնում իրենից կյանքը նախկին Լեհաստանում:

Իսկ այնտեղ ի՞նչ եր ներկայացնում իրենից ժողովրդական կրթությունը: Այդ կարելի չե բնութագրել մեկ թվով.— 1 միլիոն յերեսա դպրոցից դուրս եր մնացել: Նրանց չեւ կարելի դպրոց ընդունել, վորովհետեւ դպրոցներում նրանց համար տեղ չկար:

Այդ թվերին յես կավելացնեմ դարձյալ մեկ թիվ. Լեհաստանի բանտերում տառապում էյին համարյա 30 հազար առաջավոր լեհացիներ, ուկրաինացիներ, բելոռուսներ, հրեաներ, վորոնք համարձակվել էյին սոյքարի դրոշ բարձրացնել հանուն ճշմարտության ու աղատության:

Նախկին մինիստր Գրաբովսկին հատկապես մեծ խստություններ եր մտցրել այդ քաղաքական կալանավորների նկատմամբ, վորպեսզի ընկճի նրանց ֆիզիկապես և բարոյապես: Նա կալանավորներին թույլ եր տվել տնից յերկու շաբաթվա համար միայն մեկ կիլոգրամ հաց ստանալ: Իսկ թե ինչ եր ներկայացնում իրենից կարտուղ-Բերեղա համակենտրոնացման ճամբարը, յես կարողացա համոզվել իմ յեղորր որինակով: Նա կալանավորվեց ու այդ ճամբարն ուղարկվեց միանգամայն առողջ: Իսկ այնտեղից դուրս յեկավ ամենորյա ծեծերից միանգամայն սեւացած մարմնով: Նա միայն չորս ամիս մնաց ճամբարում և այդ կարճ ժամանակամիջոցում դահիճներն այլանդակեցին յերիտասարդ մարդուն: Նա անընդհատ հաղում եր և միաժամանակ թոքերից առատությամբ արյուն եր դալիս: Նա իրեն զուգում եր ընկճված մարդ:

Ահա թե ինչ եր ներկայացնում իրենից այսպես կոչված լեհական աղատությունը:

Հիմա լեհական պետությունը դադարել է դոյուլթյուն ունենալուց: Այդ պետությունը քայքայվեց բառիս բուն իմաստով մի քանի օրվա ընթացքում: Յեվ այդ միանգամայն հասկանալի չե: Լեհաստանում աշխատավորների մեջ չկային այնպիսի մարդիկ, վորոնք կռվէյին Լեհաստանի համար, վորովհետեւ լեհական պետությունը նրանց համար բանտ է յեղել, վորովհետեւ Լեհաս-

տանը նրանց համար յեղել ե վոչ թե հարադատ, այլ խորթ մայր:

Այն դռները, վորոնց մասին ասաց ընկեր Մուրտուլը, այն կարմիրբանակայիններն ու հրամանատարները, վորոնք ղոհվեցին Արևմտյան Բելոռուսիայի և Ուկրաինայի դաշտերում, ընկել են լեհական սպայության, լեհական վոստիկանության, լեհական ռիտանկայի ձեռքով:

Ձինվորների համալրեստ հազած լեհական բանվորները, լեհական դյուղացիները, — լեհական ամբողջ ժողովուրդն ուկրաինացիների, բելոռուսների, հրեաների հետ միասին վողջունում եր Կարմիր Բանակին: Նա հասկանում եր, վոր իսկական աղատությունը, իսկական անկախությունն իր համար կղա Կարմիր Բանակի դալու հետ միասին:

Մի քանի խոսք կասեմ իմ մասին: Յես ուսանող եյի, Պուլտեխնիկական ինստիտուտ ընդունվեցի 1933 թվին: Սարսափելի սովորություններ եյին տիրում այնտեղ: Իմ ինստիտուտ դալու առաջին օրն իսկ յես տեսա ինչպես լեհական 40 պանիչներ, ոսաղնիկների վորդիներ հարձակվեցին մի հրեա ուսանողի վրա, ծեծեցին նրան և, վիրավոր, ուշադնաց, թողին փողոցում: Մեր ինստիտուտում, ինչպես և Լեհաստանի բոլոր ինստիտուտներում, որինականացված եր մի վայրենի կարգ — օրինականացված եր միջնադարյան «դետտո»-ն, ըստ վորի հրեա ուսանողները կարող եյին նստել դահլիճի ամենահետեի մասում, հատկապես առանձնացված աթոռների վրա:

Առաջավոր յերիտասարդության այն մասը, վորին, չնայած դոլություն ունեցող տեղորի, հաջողվել եր մնալ բարձրագույն ուսումնական հաստատություններում, պայքարում եր այդ կարգերի դեմ, պայքարում եր ջարդարարների դեմ, պաշտպանում եր իր յեղբայր-ուսանողներին — հրեաներին, բելոռուսներին, ուկրաինացիներին: Այդ պայքարի համար մեղ դաժանորեն պատժում եյին: Անձամբ յես մի քանի անգամ ծեծվել ու վիրավորվել եմ նրա համար, վոր բողոքել եմ ջարդերի դեմ:

Ահա թե ինչպիսի դրություն եր տիրում բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Հիմա այլևս չի վերադառնա սարսափելի անցյալը: Մեր ժողովուրդն ինքը վճռեց իր բախտը. — հոկտեմբերի 22-ին ու 28-ին նա քվեարկեց Խորհրդային իշխանություն հաստատելու ոգտին: (Ծափահարություններ:)

Յես հավատում եմ, ընկերներ, վոր կյանքը հիմա կընթանա այլ կերպ, ազատ, բերկրալի կյանքը, վոր կվոճնչանա աղալին:

առեւությունը, վոր Արևմտյան Բելոռուսիան կդառնա սոցիալիստական, ինչպես Խորհրդային Բելոռուսիան ե: (Ծափահարություններ:)

Յես հավատում եմ, վոր Խորհրդային Միության հզոր ժողովուրդները և նրա Կառավարությունն ոգնություն ցույց կտան մեղ, վորպեսզի մենք կարողանանք տնտեսական ու կուլտուրական տեսակետից արագ կերպով հավասարվել Խորհրդային ամբողջ ժողովրդին:

Կեցցե՛ք մեր աղատարարը, անսխալելի Կարմիր Բանակը և նրա յերկաթյա ժողովո՞ւմ ընկեր Վորոշիլովը: (Ծափահարություններ: Բոլորը վոտքի յեն կանգնում: Բացականչություններ. «Ուռա՛»:)

Կեցցե՛ք Խորհրդային Կառավարությունը և նրա ղեկավար ընկեր Մուրտուլը: (Բոլուն ծափահարություններ: Բոլորը վոտքի յեն կանգնում: Բացականչություններ. «Ուռա՛»:)

Կեցցե՛ք ամբողջ աշխարհի աշխատավորության առաջնորդ, մեր սիրելի, հարազատ ընկեր Ստալինը: (Բոլուն, յերկարատե ծափահարություններ: Բոլորը վոտքի յեն կանգնում: Բացականչություններ. «Ուռա՛ ընկեր Ստալինին»:)

Նախագահադ: Խոսք ունի ընկ. Բուշիլոն: (Բոլուն, յերկարատե ծափահարություններ: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Մ. Ս. Բուշիլոն (դեղձկուհի, Բոստին դյուղ, Լուսինեցի դավառ):

Ընկե՛ր դեպուտատներ: Յես Արևմտյան Բելոռուսիայի — Պոլեսյեյի դեպուտատն եմ: Յես բանտ եմ նստել: Իմ վորդուն, Իվան Լազարեվիչ Բուշիլոյին, մրջնանոց եյին նստել նրա համար, վոր նա, 16 տարեկան տղան, մասնակցել ե քաղաքական կյանքին, չի յենթարկվել կալվածատերերին, դիմադրել ե նրանց: Դրա համար նրան յերկու օր տանջեցին, պահեցին մրջնանոցում, վորպեսզի ստիպեն նրան հեռանալ քաղաքական կյանքից: Բայց մենք այդ ամենը կրել ու տարել ենք: (Ծափահարություններ:)

Հետո նրան այդ մրջնանոցից հանեցին ու տարան պոստերոնենկ (վոստիկանատուն) և 2 օր ծեծեցին: Չնայած ուժեղ ցավերին ու տանջանքներին, նա տոկուն մնաց: Նրան դատապարտեցին 10 տարվա բանտարկության: Նա բանտում նստեց 9 տարի,

և նրան ազատեց Կարմիր Բանակը: (Բ ու ու ն ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր :)

Իմ ամուսինը, Լադար Բուշիլոն, 70 տարեկան ծերունի յե, 2 տարի բանտ է նստել: Յես, նրա կինը, բանտ եմ նստել մեկ տարի: Վորդիս, Պալել Լադարեվիչը, դատապարտված էր մեկ տարով, նստեց 1 ամիս, հետո փախավ բանտից և 4 ամիս ապրում էր անտառում:

Յերբ սկսվեց պատերազմը Գերմանիայի և Լեհաստանի միջև, վոստրիկանը յեկավ մեր տուն և ինձ ասաց. — 2 ժամից հետո կգաս պոստերունեկ: Այնտեղ պարետի մոտ վի չքավոր սպասա-վորուհի կար: Նա վաղեց մեզ մոտ և ասաց. — «Մի՛ դնա պոստե-րունեկ, կաքսորեն քեզ, թո՛ղ ամեն ինչ ու դնա, ուր աչքդ կկտրի»: Յես թողի իմ 5 փոքրիկ յերեխաներին ու դնացի խիտ անտառը, վորտեղ 4 շաբաթ կերակրվում եյի կանաչ խոտով, չերնիկայով և սունկերով: Անտառում մնացի այնքան ժամանակ, մինչև վոր մեզ մոտ թռան մեր բաղեները, մեր կարմիր ար-ծիվները, վորոնց ուղարկեց մեր հայր — մեծ Ստալինը, վոր-պեսզի կործանեն այդ բոլոր բանտերը: (Բ ու ու ն, յ Ե ր կ ա ր ժ ա մ ա ն ա կ չ Լ ո ո Ղ ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր : Բ ո լ ո ր Ը վ ո տ ք ի յ Ե ն կ ա ն դ ն ու մ : Բ ա ց ա կ ա ն չ ու թ յ ու ն ն ե ր - «Ուռա՛» :)

Ընկե՛ր դեպուտատներ: Յերբ յես տուն վերադարձա, բոլոր յերեխաներս վղովս ընկան ու ասացին. «Մայրի՛կ, մայրի՛կ, իսկ մենք կարծում եյինք, վոր դու չկաս»: — «Վո՛չ, — ասում եմ յես նրանց, — մենք ապրում ենք, մենք կապրենք և կկառուցենք յերջանիկ կյանք, վորը բերին մեզ թանկագին բաղեները»: (Ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր :)

Ո՞ւր են մեր պաները, ո՞ւր են մեր Ռիձ-Սմիդլաները: Բոլորը փախան: (Ծ ի ծ ա Ղ :) Ո՞ւր է մեր Բեկը: Փախավ թիփուտը: Նրանք ամեն ինչ եյին, իսկ հիմա դարձան զրո: Մենք ապրում եյինք խավարի մեջ, իսկ հիմա մենք ապրում ենք ազատ ու յերջանիկ: Պաները հիմա մեր ձեռքից ել չեն պրծնի:

Հիմա մենք ինքներս ենք կոփում մեր բախտը: Մենք գիտենք, վոր վո՛չ ցարը, վո՛չ աստված և վո՛չ հերոսը, այլ միայն մենք ինքներս կարողացանք իշխանությունը վերցնել մեր սեփական ձեռքով, վորպեսզի նոր կյանք ստեղծենք: (Ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր :)

Ընկերներ: Մեզ մոտ դեռ կան տերտերներ, վորոնք ասում են՝ աղոթեցե՛ք աստծուն, դնացե՛ք յեկեղեցի: Թող հիմա նրանք իրենք աղոթեն աստծուն, թող իրենք դնան յեկեղեցի, թող

աստծուց դրախտ սպասեն, իսկ մեզ մոտ փայլեց արևը, վորն արևմուտքի վրա ծագեց արևելքից: Դրանով մենք պարտական ենք մեր մեծ հորը, մեր Ստալինին: (Ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր : Բ ո լ ո ր Ը վ ո տ ք ի յ Ե ն կ ա ն դ ն ու մ :)

Յես այլևս չեմ կարողանում խոսել: Յես չքավոր դեղջիկուհի յեմ, իմ ամբողջ ընտանիքը նստած է յեղել բանտում, իմ յերե-խաները չեն ունեցել վո՛չ հաց, վո՛չ հաղուտ, մենք նոր միայն ազատվեցինք:

Մեր հայրենի հողն աղատագրեց մեր հայր ընկեր Ստալինը, և ահա մենք հիմա գտնվում ենք Մոսկվայում: (Բ ու ու ն ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր :)

Նախագահող: Խոսք ունի Գերագույն Խորհրդի դեպուտատ ընկ. Նատալիիչը: (Ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր :)

Ն. Յա. Նատալիիչ (Ս Լ ու ց կ ի ո կ ր ու ղ, Բ Խ Ս Հ): Ճ ա ու ն ար տ ա ս ա ն վ ա ծ է Բ Ե Լ Ո Ւ Ս Ե ր Ե ն լ Ե Ղ Վ Ո Վ :

Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի արտահերթ Հինգերորդ Սեսիան պետք է վճռի Արև-մայան Բելոռուսիան Խորհրդային Սոցիալիստական Հանրապե-տությունների Միության կազմի մեջ ընդունելու պատմական հարցը:

Խոսք չեմ գտնում, վորպեսզի հաղորդեմ հուզող զգացմունք-ների և սիրո ամբողջ խորությունն Արևմտյան Բելոռուսիայի մեր արյունակից յեղբայրների ու քույրերի նկատմամբ: Հանձին ձեզ, Ժողովրդական Ժողովի Լիազոր Հանձնաժողովի ընկե՛ր անդամներ, յես վողջունում եմ Արևմտյան Բելոռուսիայի ամ-բողջ աղատագրված Ժողովրդին:

Քսան տարի սրանից առաջ ստեղծվել էր Վերսալյան պայմա-նագրի ճիվաղ զավակը — լեհական պետությունը: Նա ստեղծ-վել էր արհեստականորեն ու բռնի կերպով ի հաշիվ Արև-մայան Բելոռուսիայի և Արևմտյան Ուկրաինայի հողերի: Քսան տարվա ընթացքում լեհական պաները, ինչպես չար ուրուրներ, ծվատում ու պատառոտում եյին մեր հարազատ, արյունակից քրոջ — Արևմտյան Բելոռուսիայի մարմինը:

Լեհական պաներն անգլիական ու Փրանսիական բուրժուա-զիայի ոգնությամբ Արևմտյան Բելոռուսիայի աշխատավորու-թյան համար բերին քայքայում, աղքատություն, սով, անար-դանք, տեղոր ու բանտեր:

Այդ նրանք, լեհական պաներն եյին, վոր աշխատավոր մաս-սաներին դադութային անամոթ շահագործման ու կողոպուտի յենթարկելու նպատակով Լեհաստանը բաժանեցին յերկու մա-

սի—Լեհաստան «Ա» և Լեհաստան «Բ»։ Այդ նրանք, լեհական պա-
ներն եյին, վոր վոչնչացրին բելոռուսական բոլոր դպրոցները,
արձակեցին ու առանց աշխատանքի թողին բելոռուս ուսուցիչ-
ներին և ամբողջ աղնիվ աշխատավոր ինտելիգենցիային։ Նրանք
ցեխի մեջ վոտնահարում եյին բելոռուս ժողովրդի դարերով
ստեղծված կուլտուրան։ Նրանք բելոռուս ժողովրդի վրին փա-
թաթում եյին լեհական լեզուն, բռնի կերպով անցկացնելով լե-
հացում։

Լեհական պաները բելոռուս դյուղացուն համարում եյին ճորտ
և անասուն։ Նրանք դյուղացուց խլեցին ամենալավ հողերը և
տվին ոսաղնիկներին ու կալվածատերերին։ Նրանք քայքայում
եյին դյուղացիներին, նրանց դարձնում մշտական բատրակներ
պայծառափայլ իշխաններ՝ Պոտոցկիների, Ռաձիվիլովների և
Լյուբոմիրսկիների համար։ Նրանք կազմակերպում եյին հրեա-
կան ջարդեր ու աշխատավոր հրեաների, բելոռուսների և լե-
հերի արյունի ու վոսկորների վրա կառուցում եյին իրենց
տիրապետությունը։ Լեհական կառավարողները Լեհաստանը
դարձրել եյին ժողովուրդների բանտ։ Անասելի ծաղր ու ծանակ՝
աշխատավորների նկատմամբ, մասսայական տեռոր, հալածանք-
ներ, ձերբակալություններ—ահա թե ինչն եր բնորոշ պանական
Լեհաստանի համար։ Ազատասեր բելոռուս ժողովուրդը չեր կա-
րող հաշտվել այդպիսի դրության հետ։ Բելոռուս բանվորներն
ու դյուղացիները բազմիցս անգամ գեներ ձեռքներին դուրս են
յեկել ընդդէմ լեհական պաների և կապիտալիստների։ Լեհական
չլյախտան ժանդարմներ ու զորքեր եր հանում ապստամբների
դեմ ու դաժանորեն ճնշում նրանց։ Բանվորների, դյուղացիների
ու ինտելիգենցիայի կյանքը դառնում եր անտանելի։ Լեհական
կառավարողները, գործադրելով աշխատավորների կողոպտման
ավազակային քաղաքականություն, մասսայական տեռոր, ջար-
դեր, սպանություններ, դրանով իսկ աշխատավորներին զինում
եյին շլյախտայի իշխանության դեմ, զինում եյին պայքարի՝
հանուն Խորհուրդների իշխանության, հանուն աշխատավորների
իշխանության։

Ահա թե ինչու, յերբ անպարտելի Բանվորա-Գյուղացիական
կարմիր Բանակը, կատարելով Խորհրդային Կառավարության ու
Լենինի—Ստալինի պանծալի կուսակցության կամքը, 170-մի-
լիոնանոց մեծ խորհրդային ժողովրդի կամքը, սեպտեմբերի
17-ին անցավ նախկին լեհական պետության սահմանը, Արև-
մտյան Բելոռուսիայի աշխատավորները դիմավորեցին նրան

վորպես իրենց ազատարարին, վորպես իրենց սիրելի և հարա-
զատ մորը։

Բնակչությունը ծաղիկներ եր սփռում Բանվորա-Գյուղացիա-
կան կարմիր Բանակի ճանապարհին, մարտիկներին ու հրամա-
նատարներին դիմավորում եր ուրախությամբ, արցունքներով,
յերջանկության արցունքներով։ Աշխատավորությունը պատրաստ
եր անմիջապես մտնել կարմիր Բանակի շարքերը և նրա հետ
միասին պայքարի դնալ լեհական կալվածատերերի ու կապիտա-
լիստների լծից ազատագրվելու համար։

Արևմտյան Բելոռուսիայի ազատագրված ժողովուրդները ժո-
ղովրդական ժողովի միջոցով արտահայտեցին իրենց կամքը։
Ժողովրդական ժողովի ընտրությունները, վորոնք տեղի ունեցան
այս տարվա հոկտեմբերի 22-ին, ամենադեմոկրատիկ, համա-
ժողովրդական ընտրություններ եյին։ Նրանք տեղի ունեցան
ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման
վրա՝ դադտնի քվեարկությամբ։ Ընտրություններին մասնակե-
ցեցին 2 672 280 մարդ, կամ ընտրողների 96,71%-ը։ Առաջա-
դրված թեկնածուների ոգտին քվեարկեցին 2 409 522 մարդ,
կամ ընտրողների 90,67%-ը։ Մինչդեռ 1938 թվին սեյմի ընտ-
րությունների ժամանակ քվեարկությանը մասնակցել ե ընտ-
րողների ընդամենը 45%-ը։

Արևմտյան Բելոռուսիայի աշխատավորները հոկտեմբերի
22-ի պատմական որը կայացրին լեհական կալվածատերերի ու
կապիտալիստների ատելի իշխանության մահվան դատավճիռը։
Արևմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովն արտահայտեց
ամբողջ աշխատավորության կամքը, վորջ աշխարհին հայտա-
րարելով այն մասին, թե ով ե իր համար ամենաթանկն ու ամե-
նամոտը և հանուն վո՞ր իշխանության նա պատրաստ ե կռվել,
չխնայելով վոչ ուժերը, վոչ կյանքը։ Արևմտյան Բելոռուսիայի
ժողովուրդներն ամբողջ աշխարհին հայտարարեցին այն մասին,
վոր Խորհրդային իշխանությունից բացի իրենց ուրիշ վոչ մի
իշխանություն պետք չե (բ ու ո ն ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն-
ն եր), վոր լեհական կալվածատերերի ու կապիտալիստների իշ-
խանությունը նրանք չեն ուղում և այդ իշխանությունը յերբեք
իրենց տերիտորիայում թույլ չեն տալ։ Նրանց համար թանկ ե
ու սիրելի Խորհրդային իշխանությունը, աշխատավորների իշ-
խանությունը, և այդ իշխանությունը նրանք յերբեք ու
վոչ մի գնով բաց չեն թողնի իրենց ձեռքից և յերբեք վոչ
վոքի չեն զիջի։ Արևմտյան Բելոռուսիայի ժողովուրդները
քվեարկեցին Խորհրդային իշխանության ոգտին ու այդ իշխա-

նությունը հաստատեցին իրենց տերիտորիայում: Ահա Արևմտյան Բելոռուսիայի աշխատավորության ձգտումները, ցանկությունները և կամքը:

Զի կարելի նկարագրել Արևմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովի նիստերի հուզիչ պատկերը: Պոետներն անդոր են պատկերել այն, ինչ տեսել ու լսել են այդ ժողովում: Նրանք անդոր են արտահայտել աշխատավոր մասսաների ատելության զգացմունքը լեհական կառավարողների, կալվածատերերի ու կապիտալիստների նկատմամբ, մեծ ուրախության և ջերմ սիրո զգացմունքը խորհրդային Միության, խորհրդային Կառավարության նկատմամբ, Լենինի — Ստալինի կուսակցության ու մեծ, իմաստուն մեր հայր և ուսուցիչ ընկեր Ստալինի նկատմամբ: (Բ ու ռ ը ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր: Բ ու ռ ը ղ վ ո տ ք ի յ է ն կ ա ն դ ն ու մ:) Ժողովում ղեպուստաները հուզվում էին, ծիծաղում ու լալիս: Այդ արցունքները մեծ յերջանկության և ուրախության արցունքներ էին, խորհրդային հզոր ժողովրդի նկատմամբ ունեցած յերախտադիտության արցունքներ՝ նրա ցույց տված ոգնության համար: Նրանք լալիս էին իրենց համակած մեծ, ուրախալի հախուռն զգացմունքներից:

Արևմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովը միաձայն վորոշեց.

ա) կազմել խորհրդային իշխանություն Արևմտյան Բելոռուսիայում:

բ) վերամիավորել Արևմտյան Բելոռուսիան Բելոռուսական խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը:

գ) կոնֆիսկացիայի յենթարկել կալվածատիրական ու վանքապատկան հողերը, ինչպես և պետական խոշոր չինովնիկների հողերը:

դ) ազգայնացնել բանկերն ու խոշոր արդյունաբերությունը: Ժողովրդական ժողովն ամբողջությամբ ու մինչև վերջ կատարեց իր ժողովրդի կամքը: Պանական Լեհաստանի սարսափելի, անիծյալ անցյալը հավիտյան չքացավ: Լեհական բռնացող կառավարողները դուրս են նետված պատմության հետնաբակը:

Անդլիական ու Ֆրանսիական կառավարություններին յերբեք չի հաջողվի վերադարձնել լեհական շլախտայի իշխանությունը՝ բելոռուս ժողովրդի նկատմամբ:

Բելոռուս ժողովուրդն այդ թույլ չի տա: Թույլ չի տա այդ և մեծ խորհրդային ժողովուրդը, վորն իր յեղբայրական ոգնության ձեռքը մեկնեց Արևմտյան Բելոռուսիայի ու Արևմտյան Ուկրաինայի արյունակից յեղբայրներին:

Յերեկ իՍՀ Միության Գերագույն խորհուրդը վորոշեց բավարարել Արևմտյան Ուկրաինայի ժողովրդական ժողովի Լիազոր Հանձնաժողովի խնդիրքը՝ Արևմտյան Ուկրաինան խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ ընդունելու մասին:

Արևմտյան Բելոռուսիայի ազատագրված ժողովուրդները Մոսկվա յեն ուղարկել իրենց ներկայացուցիչներին՝ հանձնել ժողովրդական ժողովի Լիազոր Հանձնաժողովի: Լիազոր Հանձնաժողովը իՍՀՄ Գերագույն խորհրդին Դեկլարացիա հանձնեց միջնորդելով Արևմտյան Բելոռուսիան ընդունել խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ՝ այն վերամիավորելով Բելոռուսական խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը: Յես յերջանիկ եմ Գերագույն խորհրդի այս պատվավոր տրիրունից Բելոռուսական խորհրդային Սոցիալիստական Հանրապետության աշխատավորների անունից հայտարարելու, վոր նրանք բոլորը մեկ մարդու պես ուրախ են Բելոռուսական իՍՀ կազմի մեջ ընդունելու իրենց արյունակից, հարազատ քրոջ (բ ու ռ ը ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր) և միջնորդում են իՍՀ Միության Գերագույն խորհրդի առաջ Արևմտյան Բելոռուսիան ընդունել խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ:

Յես չեմ տարակուսում նրանում, վոր Գերագույն խորհուրդը կբավարարի մեր հարազատ քրոջ — Արևմտյան Բելոռուսիայի խնդիրքն ու նրան կընդունի, ինչպես վոր ընդունեց Արևմտյան Ուկրաինային, խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ժողովուրդների յեղբայրական ընտանիքի կազմի մեջ:

Ստալինյան Սահմանադրության արևով լուսավորված Արևմտյան Բելոռուսիայի աշխատավորները, միավորված մեծ խորհրդային Միության ժողովուրդների միասնական, համերաշխ յեղբայրական ընտանիքում, կպլրեն ազատ ու յերջանիկ և բուշևիկների մեր անպարտելի, պանծալի կուսակցության, ժողովուրդների մեծ առաջնորդ, ամբողջ աշխարհի աշխատավորության բարեկամ և ուսուցիչ ընկեր Ստալինի ղեկավարությամբ իրենց բոլոր ուժերը կտան սոցիալիստական հասարակության կառուցման և սոցիալիզմի հայրենիքի պաշտպանունակության ու հզորության ամրապնդման գործին: (Յ ե ր կ ա ր ա տ և ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր:)

Թող կեցցե՛ ու ամրանա խորհրդային Սոցիալիստական Հան-

բանկատուությունների Միության ժողովուրդների անպարտելի բանկատուությունը: (Ծափահարություններ:)

Փա՛ռք մեր հզոր և անպարտելի Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակին — Արևմտյան Բելոռուսիայի ժողովուրդների ազատարարին: (Ծափահարություններ:)

Կեցցե՛ք Սորհրդային Կառավարությունը և Կառավարության ղեկավար ընկեր Մոլոտովը: (Բուռն ծափահարություններ: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Կեցցե՛ք շատ ու շատ տարիներ մարդկության հանճար, պանծալի, իմաստուն, մեր հարազատ ու մեծ Ստալինը: (Բուռն ծափահարություններ: Բոլորը վոտքի յեն կանգնում: Լսվում են բացակա չություններ. «Ուռա՛»:)

Նախագահող: Խոսք ունի Արևմտյան Բելոռուսիայի Ժողովուրդական Ժողովի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Պիրկոն:

Վ. Ա. Պիրկոն (տեքստիլ Փաբրիկայի բանվոր, Բելոստոկ): Ճառն արտասանված է լեհերեն լեզվով:

Թանկագին ընկերներ, Սորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Սորհրդի ղեկավարներ: Հաղորդում եմ ձեզ, ընկերներ, պրոլետարական սրտազին վոլջոյն իմ ընտրողների — Բելոստոկ քաղաքի բանվորների անունից: (Ծափահարություններ:)

Թանկագին ընկերներ, յես խնդրում եմ թույլ տալ ինձ համառոտ խոսքերով պատմել ձեզ թե ինչպիսի կյանք են ունեցել մանածադործները կալվածատիրական-կապիտալիստական կառավարության ճնշման տակ: Բանվորական ուր, վորը հասնում էր 16 ժամի, ծանր աշխատանք, վորից մարդիկ ուշաթափվում էին, մեծ դործադրկություն, կարիք, սով ու մահացություն՝ յերիտասարդ հասակում — այսպես էր Արևմտյան Բելոռուսիայի բանվոր դասակարգի վիճակը: Մեզ, բանվորներին, պաները մարդ չեյին համարում, անվանում էյին անասուն:

Լեհական կառավարությունը բանվորների չըջանում ստեղծել էր բաղմամբիվ ղանաղան մեծ ու փոքր դեղին միություններ, վորպեսզի խորտակի բանվոր դասակարգի միասնությունը: Լեհական կառավարությունը մեզ թույլ չեր տալիս ստեղծել իսկական, պրոլետարական միություն:

Արևմտյան Բելոռուսիայի պրոլետարիատը, վորին ղեկավարում է կոմունիստական կուսակցությունը, հավատարիմ մնաց Մարքսի — Ենգելսի — Լենինի — Ստալինի մեծ գաղափարներին: 1928—1932, 1933—1937 թվերին Բելոստոկում և պրովինցիայում տեղի ունեցան ուժեղ դործադուլներ: Դրանք տևում էյին 11—13

շաբաթ: Գործադուլային իր համառ պայքարով պրոլետարիատը ցույց տվեց, վոր նա լավ է հասկանում, վոր միայն բոլոր ադդությունների բանվորների միախառն պայքարը հաղթանակ կրերի կապիտալիստների նկատմամբ, կստեղծի բանվորա-գյուղացիական կառավարություն:

Կապիտալիստների և կալվածատերերի ճնշման դեմ պայքարող բանվորներին լեհական կառավարությունը դաժանորեն պատժում էր: Բանվորներին յերկար տարիներով նետում էյին բանտերն ու համակենտրոնացման ճամբարները, դադանաբար ծեծում էյին: Սակայն մեր պրոլետարիատը հաստատ հավատում էր, վոր ազատության արև կծագի իր համար: Յեվ ահա յեկավ քաջարի Կարմիր Բանակն ու Արևմտյան Բելոռուսիայի համար բերեց ազատություն, հանուն վորի յերկար տարիներ պայքարել է մեր ժողովուրդը: Կարմիր Բանակն ազատեց մեզ պատերազմի սարսափներից, վորի մեջ դեցել էյին մեզ լեհական պաները: Պանական Լեհաստանի կառավարությունը գողացավ ժողովրդական փողերը և վախկոտությամբ փախավ արտասահման, յերկիրը թողնելով բախտի քմահաճույքին: Յեվ միայն Կարմիր Բանակն ու մեր Թանկագին ընկեր Ստալինը պաշտպանեցին մեր կյանքը:

Բելոստոկ քաղաքի ու ամբողջ Արևմտյան Բելոռուսիայի բանվորները հանձնարարել են մեզ, ղեկավարներին, խնդրել ԽՍՀՄ Կառավարությանը, վորպեսզի մեզ միացնի Սորհրդային Միության հետ (ծափահարություններ), իսկ մենք, մանածադործներս, Սորհրդային իշխանության ոգնությամբ Բելոստոկը կդարձնենք յերկրորդ Իվանովո, Սորհրդային Միության համար կարտադրենք լավ գործվածքներ:

Մենք մեր ժողովներում վորոչեցինք Սորհրդային իշխանություն հաստատել Արևմտյան Բելոռուսիայում ու միանալ մեծ Սորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությանը, վորոչեցինք կոնֆիսկացիայի յենթարկել կալվածատիրական, վանքապատկան և չինովնիկական հողերը, ազգայնացնել բանկերն ու խոշոր արդյունաբերությունը և այդ ամենը հանձնել ժողովրդի ձեռքը:

Մենք լավ դիտենք, վոր միայն մեծ Սորհրդային Միության ոգնությամբ մենք կարող ենք արագորեն ստեղծել յերջանիկ և ուրախ կյանք, վորովհետև Սորհրդային Միությունը, Ստալինյան Սահմանադրությունը — դա ճշմարտացի, ժողովրդական դեմոկրատիա յե, վորը պաշտպանում է մարդու իրավունքները, դարձնում է նրան իր կյանքի տերը:

Կեցցե՛ք անպարտելի Կարմիր Բանակը և նրա առաջնորդ ընկեր

Վորոշիլովը: (Բոլորը վոտքի յեն կանգնում: Բոլոն, յերկար ժամանակ չլռող ծափահարություններ:)

Կեցցե՛ք Խորհրդային Կառավարութեան ղեկավար ընկեր Մոլոտովը: (Բոլորը վոտքի յեն կանգնում: Յերկար ժամանակ չլռող, բոլոն ծափահարություններ:)

Կեցցե՛ք մեր սիրելի ուսուցիչ և ամբողջ պրոլետարիատի հայր ընկեր Ստալինը: (Բոլորը վոտքի յեն կանգնում: Բոլոն, յերկարատե ծափահարություններ: Ուղացիա ի պատիւ ընկեր Ստալինի: Բացական չություններ. «Կեցցե՛ք ընկեր Ստալինը: Ուռա՛: Ուռա՛»:)

Նախագահող: Խոսք ունի Արեւմտյան Բելոռուսիայի Ժողովրդապետ Ժողովի Լիպոյր Հանձնաժողովի անդամ ընկ. Ֆեդոսյուկը: (Բոլոն ծափահարություններ:)

Ա. Ի. Ֆեդոսյուկ (գեղջկուհի, Կոբրինի գավառ, Պոլեսյայի մարզ, Արեւմտյան Բելոռուսիա): Ճառն արտասանված է բելոռուսերեն լեզվով:

Ընկե՛ր ղեկուստաներ: Թույլ տվեք ինձ Արեւմտյան Բելոռուսիայի բաղամիլիոն աշխատավոր մասնաների անունից հաղորդել ձեզ, և հանձին ձեզ Խորհրդային Միութեան մեծ Ժողովրդին՝ սրտագին, բոցավառ վողջուն: (Բոլոն ծափահարություններ:)

Թույլ տվեք ինձ ԽՍՀ Միութեան Գերագույն Խորհրդի այս բարձր արբերակից ջերմ շնորհակալություն հայտնել Խորհրդային մեծ Ժողովրդին, նրա Կառավարութեանը, Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակին, նրա յերկաթյա ժողկոմ ընկեր Վորոշիլովին (բոլոն ծափահարություններ, բոլորը վոտքի յեն կանգնում), բոլոր աշխատավորների հարազատ հայր, բարեկամ և ուսուցիչ—մեծ Ստալինին (բոլոն ծափահարություններ, բոլորը վոտքի յեն կանգնում, բացական չություններ. «Ուռա՛») այն ոգնութեան համար, վոր ցույց տրվեց Արեւմտյան Բելոռուսիայի աշխատավորներին կալվածատերերի ու կապիտալիստների լծից ազատագրելու պայքարում:

Քսան տարի Արեւմտյան Բելոռուսիայի աշխատավորութեանը հյուսիսում եր գաղանացած լեհական պաների կրնկի տակ: Պանական Լեհաստանն իրենից ներկայացնում եր համատարած բանտ, վորտեղ մարդիկ շնչառապառ եյին լինում հողադրկությունից, գործադրկությունից, վոստիկանական ոխրանկաների զնդաններում, բանտերի նկուղներում:

Արեւմտյան Բելոռուսիան իրենից ներկայացնում եր համատար-

աած արյունոտ վերք: Լեհական պաները վայրագորեն ծաղրում եյին բելոռուս Ժողովրդին:

Գերագույն Խորհրդի ընկե՛ր ղեկուստաներ: Սեպտեմբերի 17-ի որը կմտնի Արեւմտյան Բելոռուսիայի պատմութեան մեջ, բելոռուս Ժողովրդի պատմութեան մեջ վորպես Արեւմտյան Բելոռուսիայի Ժողովուրդների մեծ տոն: Այդ որը Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակն անցավ սահմանը և ոգնութեան յեղաշրջանի ձեռք մեկնեց մեր աշխատավորներին ու ազատագրեց նրանց շահագործումից, ստորացումից, ծաղր ու ծանակից և ազդային ճնշումից: Ձի կարելի խոսքերով արտահայտել այն ամենը, ինչ ապրում եյին բանվորները, գյուղացիները, յերեսաները, յերիտասարդութեանը, յերբ իմացան, վոր Կարմիր Բանակն անցել է սահմանն ու ոգնութեան՝ ե գալիս: Մարդիկ լալիս եյին, մարդիկ համբուրվում եյին ուրախությունից, այն գիտակցութեանից, վոր իրենք ազատ են լինելու, վոր այլևս չի լինելու ստրկացում և ճնշում, ինչպես այդ յեղել է 20 տարվա ընթացքում:

Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի գալով Արեւմտյան Բելոռուսիայի գյուղացիները լիակատար քաղաքական ազատութեան ստացան և գյուղացիական կոմիտեների միջոցով ձեռնամուխ յեղան կալվածատիրական ու վանքապատկան հողերի բաժանմանը:

Խորհրդային Կառավարութեանը և Կարմիր Բանակը հսկայական ոգնութեան ցույց տվին մեզ՝ քաղաքում ու գյուղում տնտեսական, կուլտուրական և հասարակական—քաղաքական կյանքը կազմակերպելու գործում: Արեւմտյան Բելոռուսիայի աշխատավորներն արդեն ուղտվում են նոր բացված հիվանդանոցներից, դպրոցներից, ամբուլատորիաներից, վորոնց մասին սլանական Լեհաստանում մինչև իսկ չեյին կարող յերագել:

Ընկե՛ր ղեկուստաներ: Արեւմտյան Բելոռուսիայի Ժողովրդական Ժողովի ընտրութեանների որն ընդհանուր ցնծութեան, ընդհանուր վողեւորութեան որ եր: Աշխատավորներն աւտիվ կերպով մասնակցեցին քվեարկութեանը:

Պատմութեան մեջ առաջին անգամ արեւմտա-բելոռուսական գյուղերի գեղջկուհիները կարող եյին վոչ միայն ազատ քվեարկել, ազատ ընտրել, այլ կարող եյին ընտրվել Ժողովրդական Ժողովի ղեկուստաներ, Ժողովի, վորտեղ վորոշվում եյին պատմական կարեւորութեան ունեցող հարցեր:

Ընտրողներն իրենց ղեկուստաներին հաստատուն նակաղ եյին տալիս, վորպեսդի նրանք սահանջեն Խորհրդային իշխանութեան

հաստատել, վորովհետև Խորհրդային իշխանությունը հանդիսանում է աշխատավորների իշխանություն և նա կապալտպանի իրենց շահերը: Նրանք ասում եյին, վոր մենք քվեարկենք Արևմտյան Բելոռուսիան Խորհրդային Սոցիալիստական Բելոռուսիային միացնելու ողտին, վորովհետև դա դրավական վլինի այն բանի, վոր անիծյալ անցյալն ել յերբեք չի վերադառնա: Նրանք ասում եյին, վոր մենք քվեարկենք կալվածատիրական ու վանքապատկան հողերի կոնֆիսկացիայի ողտին: Նրանք պահանջում եյին մեղանից, դեպուտատներէիցս, վորպեսզի մենք քվեարկենք բանկերի ու խոշոր արդյունաբերութեան աղղայնացման ողտին:

Մենք, Ժողովրդական Ժողովի դեպուտատներս, Ժողովրդի այդ կամքը, այդ նակաղը պատվով կատարեցինք: Հոկտեմբերի 29-ին Արևմտյան Բելոռուսիայում հաստատվեց Խորհրդային իշխանություն: (Բ ու ու ն ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր :)

Ընկե՛ր դեպուտատներ: Յես, վորպես Արևմտյան Բելոռուսիայի Ժողովրդական Ժողովի ընտրյալ, վորպես Լիազոր Հանձնաժողովի անդամ, իմ ընտրողների անունից խնդրում եմ թանկազին ու սիրելի առաջնորդ և ուսուցիչ ընկեր Ստալինին, խնդրում եմ Խորհրդային Կառավարութեանը՝ հանձին ընկեր Մուրտովի և ձեզ, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի դեպուտատներիդ, Արևմտյան Բելոռուսիան ընդունել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միութեան կազմի մեջ (բ ու ու ն ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր, բ ու ու ը ը վ ո տ ք ի յ ե ն կ ա ն դ ն ու մ, բ ա ց ա կ ա ն չ ու թ յ ու ն ն ե ր. «Ուււա՛»): և հնարավորութեան տալ նրան միաձուլվել յեղբայրական Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեանը:

Մենք, Արևմտյան Բելոռուսիայի աշխատավորներս, ուղում ենք ապրել ըստ Ստալինյան Սահմանադրութեան, վորին հավասարը չկա աշխարհում: Մենք ցանկանում ենք մտնել Խորհրդային Միութեան Ժողովուրդների մեծ ընտանիքի մեջ և նրանց հետ միասին աղնվաբար աշխատել, կառուցել յերջանիկ, կուլտուրական և ունեւոր, կյանք, ինչպիսի կյանքով ապրում են Խորհրդային Միութեան Ժողովուրդները: Մենք ցանկանում ենք խորհրդային Ժողովրդի հետ միասին ամրապնդել սոցիալիստական հայրենիքի հզորութիւնը, կառուցել սոցիալիստական տնտեսութիւն:

Կեցցե՛ք մեծ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միութիւնը:

Կեցցե՛ք Խորհրդային Կառավարութիւնը՝ ընկեր Մուրտովի դե-

պւարութեամբ: (Բ ու ու ն ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր : Բ ու ու ը ը վ ո տ ք ի յ ե ն կ ա ն դ ն ու մ :)

Կեցցե՛ք Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակը և նրա յերկաթյա ժողովմ ընկեր Վորոշիլովը: (Բ ու ու ն ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր : Բ ու ու ը ը վ ո տ ք ի յ ե ն կ ա ն դ ն ու մ : Բ ա ց ա կ ա ն չ ու թ յ ու ն ն ե ր. «Ուււա՛»):

Կեցցե՛ք բոլշևիկների Համամիութենական կոմունիստական կուսակցութիւնը — Լենինի — Ստալինի կուսակցութիւնը: (Բ ու ու ն ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր : Բ ու ու ը ը վ ո տ ք ի յ ե ն կ ա ն դ ն ու մ :)

Կեցցե՛ք մեր հայր, ամբողջ աշխարհի աշխատավորութեան բարեկամ, մեր թանկազին, մեր հարազատ ընկեր Ստալինը: (Բ ու ու ն ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր : Բ ու ու ը ը վ ո տ ք ի յ ե ն կ ա ն դ ն ու մ : Բ ա ց ա կ ա ն չ ու թ յ ու ն ն ե ր. «Ուււա՛»):

Նախագահող: Խոսք ունի Արևմտյան Բելոռուսիայի Ժողովրդական Ժողովի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Մալեվիչը: (Ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր :)

Ա. Ս. Մալեվիչ (գյուղացի, Գուլի գյուղ, Պոստավիի գավառ): Ճառն արտասանված է բելոռուսերեն լեզվով:

ԽՍՀ Միութեան Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Թույլ տվեք ինձ, Արևմտյան Բելոռուսիայի աշխատավոր Ժողովրդի զավակին, մրտած խրճիթի չքավոր գյուղացուն, Պոստավիի գավառի ընտրողների անունից, ինչպես և Արևմտյան Բելոռուսիայի ամբողջ Ժողովրդի անունից մեծ շնորհակալութիւն հայտնել Խորհրդային Միութեանը, ԽՍՀ Միութեան Գերագույն Խորհրդին, ինչպես և ամբողջ Խորհրդային Ժողովրդին (ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր), մեծ շնորհակալութիւն հայտնել բոլոր նրանց, վորոնք մեր կյանքի կրիտիկական րոպեներին թույլ չտվին, վորպեսզի լեհական պաները ջնջեն մեզ յերկրի յերեսից:

Մեծ շնորհակալութիւն մեր Կարմիր Բանակին և նրա ղեկավար ընկեր Վորոշիլովին (բ ու ու ն ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր), վորոնք ամենածանր որերին մեզ ազատեցին լեհական դիշատիչներից և ոգնութեան յեղբայրական ձեռք մեկնեցին մեզ:

Արևմտյան Բելոռուսիայի Ժողովուրդները խնդրել են ինձ ջերմ շնորհակալութիւն հայտնել մեր թանկազին հայր, մեր ազատարար, մեր ուսուցիչ ընկեր Ստալինին: (Բ ու ու ն ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր : Բ ու ու ը ը վ ո տ ք ի յ ե ն կ ա ն դ ն ու մ : Բ ա ց ա կ ա ն չ ու թ յ ու ն ն ե ր. «Ուււա՛»):

Արեւմտյան Բելոռուսիան 20 տարվա ընթացքում ասլերել ե խա-
վարի, վշտի, սովի մեջ: Ծանր եր Արեւմտյան Բելոռուսիայի ժո-
ղովրդի վիճակը: Լեհական պաները, սե ագռավները պես, իրենց
սուր ճանկերը խրել եյին մեր սրտերի մեջ, նրանք մեզ չեյին-
թողնում մայրենի լեզվով դրականություն կարգալ, փա-
կում եյին դպրոցները, նրանք բռնի կերպով մեր վրին փաթա-
թում եյին լեհական լեզուն: Լեհական պաները ղրկում եյին մեզ
մինչև իսկ փոքրիկ հողակտորները, բայց դրա փոխարեն տա-
րածում եյին ոսաղնիկներին, վորոնք տմարդի միջոցներով ծաղր
ու ծանակի եյին յենթարկում մեր ժողովրդին: Բելոռուսին
մարդ չեյին համարում, նրան համեմատում եյին անասունի հետ,
«բիդլո», «խլոպ» բառերից բացի նա յերբեք ուրիշ բառ չի լսել:
Գյուղացիներին հարկում եյին ուժից վեր հարկերով ու տու-
գանքներով: Յեթե գյուղացին չուկա պետք ե գնար ու անցնում
եր ճանապարհով, յեթե գյուղացին տուն եր շինում, ջրհոր փո-
րում, ապա լեհական վստիկանությունը միշտ հնարավորու-
թյուն եր գտնում որենքի խախտման պատրվակով տուգանելու
գյուղացուն, իսկ տուգանքը չվճարելու դեպքում՝ կալանավո-
րում եր նրան: Մենք ավելի ու ավելի եյինք գնում դեպի չքա-
վորություն ու քայքայում:

Լեհական պաները չեյին կարող հնարել կառավարման ավելի
լավ միջոց, քան միջնադարյան միջոցը, նրանք մինչև անգամ
չեյին խորշում մեզ վաճառքի հանելուց: Փոխանակ ֆարքիկաներ,
գործարաններ կառուցելու, վորպեսզի մեզ հնարավորություն
տան մեր հողի վրա մի կտոր հաց վաստակել, նրանք մեզ վա-
ճառում եյին հարեան յերկրներին՝ ծանր աշխատանքի, վաճա-
ռում եյին բառիս բուն իմաստով, վորովհետև արտասահման
գնալու իրավունքի փաստաթուղթ ստանալու համար հարկավոր
եր լեհական իշխանություններին խոշոր գումարներ վճարել:

Սեպտեմբերի 17-ին մեծ Խորհրդային Միությունը, աշխատա-
վորների հարադատ ու սիրելի հայր ընկեր Ստալինն աղատա-
գրեցին մեզ աղքատությունից, ծաղր ու ծանակից: Մենք տեր
ու տնորեն դարձանք, կառուցում ենք յերջանիկ, ունեւոր կյանք:

Կեցցե՛ մեր աղատարարը — Բանվորա-Գյուղացիական Կարմիր
Բանակը և նրա ղեկավար ընկեր Վորոշիլովը: (Բ ու ու ն ծ ա փ ա-
հ ա ր ու թ յ ու ն ն եր: Բ ո լ ո Ր ը Վ ո տ ք ի յ ե ն կ ա ն գ ն ու մ:
Բ ա ց ա կ ա ն չ ու թ յ ու ն ն եր. «Ուււա՛»):

Կեցցե՛ ժողովուրդների ստալինյան բարեկամությունը:

Կեցցե՛ Խորհրդային իշխանությունը և Կառավարության դե-

կավար ընկեր Մոլոտովը: (Բ ու ու ն ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն-
ն եր: Բ ո լ ո Ր ը Վ ո տ ք ի յ ե ն կ ա ն գ ն ու մ:)

Կեցցե՛ մեր մեծ, հարադատ հայր, մեր աղատարար ընկեր
Ստալինը: (Բ ու ու ն, յ երկար ժամանակ չլռող ծ ա փ ա-
հ ա ր ու թ յ ու ն ն եր: Բ ո լ ո Ր ը Վ ո տ ք ի յ ե ն կ ա ն գ ն ու մ:
Բ ա ց ա կ ա ն չ ու թ յ ու ն ն եր. «Ուււա՛»):

Ընկեր դեպուտատներ, թույլ տվեք ինձ կարգալ մի փոքրիկ
բանաստեղծություն, վորը յես գրել եմ կարմիր մայրաքաղաքը
դալու ժամանակ.

П Р И В І Т А Н Н Е

Вітай-жа, наш бацька, вялікі наш Сталін,
Вітай, наш збавіцель, нам доля настала.
Вітай-жа, Масква, вітайце, Советы,
Выбачце мяне, што худы, не адзеты,
Я сын беларуса з Заходняй краіны,
Ніколі не знаў я вясёлай хвіліны,
Бо ў нас гаспадарылі польскія паны,—
Нам рукі і ногі кавалі ў кайданы.
Я ў сне толькі марыў аб волі народа,—
Нам даў яе Сталін, прыслаў нам з Усхода.
Сягодня няма ўжо між намі граніцы,
Вясёлы я ехаў па роднай зямліцы,
Я бачыў калгасныя вашыя вёскі,
У вас даўно зніклі вузкія палоскі,
У вашай старонцы шчаслівыя дзеці,
У вас доля пануе, як нідзе на свеце.
А ў нас, на Заходзе, у гаротнай краіне,
Народ перад панам худую гнуў спіну.
А пан весяліўся, не знаючы гора,
Ён марыў аб Польшчы «ад мора да мора».
Ды згінулі мары праклятага ката,
Руку нам даў Сталін, як роднаму брату.
Народ цяпер вольны, сазваўшы Сабранне,
Совецкай улады стварыў панаванне.
І як сіраціна, цярпеўшая здзекі,
У Сталіна просіць сабе ён апекі.
Прымі-ж нас, як бацька,
Прымі сыноў родных,
У вашу сямейку.
Рэспублік свабодных.

(Բ ու ու ն ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն եր:)

Նախագահող: Խոսք ունի ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների
Խորհրդի Նախագահ Տեղակալ՝ դեպուտատ Բուդանինը:
(Բ ու ու ն ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն եր:)

Ն. Ա. Բուլգանին: Ընկե՛ր դեպուտատներ: Մենք լսեցինք Արևմտյան Բելոռուսիայի Ժողովրդական Ժողովի Լիազոր Հանձնա-
ժողովի հայտարարությունը, վերով խնդրվում է Արևմտյան Բե-
լոռուսիան մտցնել խորհրդային Սոցիալիստական Հանրապետու-
թյունների Միության կազմի մեջ և արևմտա-բելոռուսական Ժո-
ղովուրդը վերամիավորել իր արյունակից յեղբայրների հետ—
Բելոռուսական խորհրդային Սոցիալիստական Հանրապետության
Ժողովրդի հետ:

Ժողովրդական Ժողովի Լիազոր Հանձնաժողովի այդ հայտա-
րարությունն արտահայտեց Արևմտյան Բելոռուսիայի Ժողո-
վուրդների իսկական կամքն ու ցանկությունը:

Արևմտյան Բելոռուսիայի Ժողովրդական Ժողովի դեպուտատ-
ների ընտրությունների ընտրական կամպանիան, վորն անցկաց-
վեց ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հի-
ման վրա՝ զաղտնի քվեարկությամբ, պարզ կերպով ցույց տվեց,
թե ինչ է ուղում Արևմտյան Բելոռուսիայի Ժողովուրդը: Ընտ-
րողների նակազների մեջ արտահայտված է միահամուռ ցանկու-
թյուն—խորհրդային իշխանություն հաստատել Արևմտյան Բելո-
ռուսիայի ամբողջ տերիտորիայում: (Բ ու ու ն ծ ա փ ա հ ա ր ու-
թ յ ու ն ն ե ր:)

Արևմտյան Բելոռուսիայի Ժողովրդական Ժողովի Լիազոր
Հանձնաժողովի՝ այստեղ հանդես յեկող անդամների բոլոր ճա-
ռերը հանդիսանում են վառ, հուզիչ պատմվածք Արևմտյան Բե-
լոռուսիայի Ժողովրդի խոհերի, զգացմունքների ու մտքերի մա-
սին, Ժողովուրդ, վորն այժմ աղատադրված է լեհական պաների
ու կապիտալիստների ճնշումից:

Մենք չենք տարակուսում, վոր այստեղ հանդես յեկող հո-
տորներն իրենց ճառերի մեջ արտացոլեցին Արևմտյան Բելոռու-
սիայի ամբողջ Ժողովրդի խոհերն ու իղձերը, Ժողովրդի, վորն
այսօր այստեղ նշում է իր աղատադրման և յեղբայրական խոր-
հրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության
ընտանիքի մեջ մտնելու մեծագույն պատմական իրադարձու-
թյունը: (Բ ու ու ն ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր:)

Լեհական պաներն ու կապիտալիստները ճնշում, կեղեքում և
բռնի կերպով լեհացնում եյին բելոռուսներին և ուկրաինացիներ-
ին: Ազգային ճնշումը, վոր հասցվել էր ծայրահեղ սահման-
ների, դործադրկությունը, սովն ու կարիքն եյին Արևմտյան
Բելոռուսիայի քաղաքի և դյուղի աշխատավորների միակ բա-
ժինը:

Նախկին պանական Լեհաստանում բելոռուսները զրկված եյին

վոչ միայն իրենց կուլտուրան զարգացնելու իրավունքից, այլև
իրենց բելոռուսական լեզվով խոսելու իրավունքից:

Արևմտյան Բելոռուսիան տնջում էր լեհական կալվածատերերի
ու կապիտալիստների լծի տակ: Լեհական պաներն Արևմտյան
Բելոռուսիան դեցել եյին անթիվ ու անհամար դժբախտություն-
ների մեջ: Գատարկ սոսպրակը, աղքատիկ հագուստը և ծանր
վիշտն եյին հանդիսանում արևմտա-բելոռուսական աշխատավոր
Ժողովրդի բաժինը:

Այն որերին, ջերբ լեհական պետությունը քայքայվեց և Լե-
հաստանը հարմար ասպարեղ դարձավ ամեն տեսակ պատահա-
կանությունների ու անակնկալների համար, վորոնք կարող եյին
սպառնալիք ստեղծել խորհրդային Միության վերաբերմամբ,
յերբ ուկրաինացիներն ու բելոռուսները թողնվեցին պատահակա-
նության կամքին, խորհրդային Կառավարություն իր պարտա-
կանությունը համարեց ողնության ձեռք մեկնել իր արյունակից
յեղբայրներին—ուկրաինացիներին և բելոռուսներին:

խորհրդային Կառավարությունը 1939 թվի սեպտեմբերի 17-ին
հրաման տվեց Կարմիր Բանակի հրամանատարությունը՝ սլաշու-
պանության տակ առնելու Արևմտյան Բելոռուսիայի և Արևմտյան
Ուկրաինայի բնակչության կյանքն ու դուլքը:

Կարմիր Բանակն իր պանծալի հրամանատարների առաջնոր-
դությամբ մտավ նախկին պանական Լեհաստանի տերիտորիան և
Արևմտյան Բելոռուսիայի ու Արևմտյան Ուկրաինայի հողերում
ամրացրեց սոցիալիզմի սրբազան դրոշը, Լենինի—Ստալինի մեծ
ուսմունքի դրոշը: (Բ ու ու ն ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր: Բ ո-
ւ ո Ր Ր Վ ո տ ք ի յ ե ն կ ա ն դ ն ու մ: Ա մ բ ո ղ ջ դ ա հ լ ի ճ ի ո վ ա-
ց ի ա ն: Բ ա ց ա կ ա ն չ ու թ յ ու ն ն ե ր. «Ու ո ա՛»:)

Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի Ժողո-
վուրդները ցնծությամբ դիմավորեցին իրենց աղատարարին—մե-
քաջարի Կարմիր Բանակին: Կարմիր Բանակի, խորհրդային Կա-
ռավարության շնորհիվ, մեծ Ստալինի շնորհիվ Արևմտյան Ուկ-
րաինայի և Արևմտյան Բելոռուսիայի Ժողովուրդներն այժմ նոր
դարադուլի են բաց անում իրենց կյանքում: Այսուհետև Արև-
մտյան Բելոռուսիան այլևս նախկին ստրկական կյանքի հետևան-
քով ընկճված յերկիր չէ: Այսօր Արևմտյան Բելոռուսիայի Ժողո-
վուրդը—դրանք լեհական պաների լծից աղատադրված քաղաքա-
ցիներ ու քաղաքացուհիներ են, մեծ խորհրդային Միության
միասնական ընտանիքի յեղբայրներ ու քույրեր: (Բ ու ու ն ծ ա-
փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր:)

1939 թվի հոկտեմբերի 22-ին Արևմտյան Բելոռուսիայի Ժողո-

վրդական ժողովի ընտրութիւններէ ժամանակ բելոռուս ժողովուրդն առաջին անգամ հնարավորութիւն ունեցավ ազատ կերպով, առանց հարկադրանքի ընտրելու նրանց, ովքեր արժանի չեն նրա վստահութեանը: Արեւմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովը ժողովուրդներէ ազատ կամքի լիազօրմած ու իսկական արտահայտիչն է:

1939 թվի հոկտեմբերի 29-ին Արեւմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովը, վորպէս Արեւմտյան Բելոռուսիայի ժողովուրդներէ կամքի միակ ու լիիրավ արտահայտիչը, վճռելով ստեղծվելիք իշխանութեան բնութիւնը հարցը, միահամուռ կերպով հայտարարեց, վոր Խորհրդային Միութեան որինակը և նախկին պանական Լեհաստանում աշխատավորներէ կյանքի դառն փորձը համոզում են մեզ, վոր միայն Խորհրդային իշխանութիւնը կարող է Արեւմտյան Բելոռուսիայի ժողովրդին փրկել չահագործումից, կարիքից, սովից ու իրավադրկութիւնից:

Արեւմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովը, արտահայտելով Արեւմտյան Բելոռուսիայի ժողովուրդներէ անհողող կամքն ու ցանկութիւնը, Արեւմտյան Բելոռուսիայի ամբողջ տեքիտորիայում հռչակեց Խորհրդային իշխանութեան հաստատումը:

Այսուհետեւ Արեւմտյան Բելոռուսիայի տեքիտորիայում ամբողջ իշխանութիւնը պատկանում է քաղաքի և գյուղի աշխատավորներին, հանձին աշխատավորներէ դեպուտատներէ Խորհուրդներէ:

Այս է ժողովրդի կամքը—ժողովուրդ, վորը բռնի կերպով անջատվել էր հայրենիքից, իր արյունակից յեղբայրներէ և այժմ ձգտում է ընդմիշտ, հավիտյան վերականգնել յեղբայրական բարեկամութիւնը Խորհրդային Միութեան ժողովուրդներէ հետ, Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան ժողովրդի հետ: (Բ ու ու ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր :)

Արեւմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովի Լիազոր Հանձնաժողովի ընկե՛ր անդամներ: Ձեր ժողովրդական ժողովը կալվածատիրական—պանական ամենաիշխանութիւնը վերացնելու մասին իր առաջին պատմական վորոշումներում, հողը գյուղի աշխատավոր մասսաների ոգտագործմանը հանձնելու, խոշոր արդյունաբերութիւնն ու բանկերն ազգայնացնելու և դրանք աշխատավորներէ տնորինութեանը հանձնելու մասին վորոշումներով, դրեց ձեզ ընտրած ժողովրդի ծաղկման հիմքն ու սկիզբը:

ԽՍՀ Միութեան Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Արեւմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովի Լիազոր Հանձնաժողովը մեր Կարմիր Բանակին, Խորհրդային Կառավարու-

թեանը և մեծ Ստալինին ուղղված ջերմ յերախտագիտութեան բառերի հետ միասին, այստեղ, ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդ է բերել Արեւմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովի խնդրը՝ Արեւմտյան Բելոռուսիան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւններէ Միութեան կազմի մեջ մտցնելու մասին: (Բ ու ու ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր :)

Ժողովրդի կամքը համարելով բարձրագույն որենք, Արեւմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովը վորոշել է խնդրել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւններէ Միութեան Գերագույն Խորհրդին և Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան Գերագույն Խորհրդին՝ Արեւմտյան Բելոռուսիան ընդունել Խորհրդային Միութեան և Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան կազմի մեջ, բելոռուս ժողովուրդը վերամիավորել միասնական պետութեան մեջ և դրանով իսկ վերջ դնել բելոռուս ժողովրդի անջատվածութեանը:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւններէ Միութեան Կառավարութեան անունից յես մտցնում եմ հետեւյալ առաջարկը:

«Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւններէ Միութեան Գերագույն Խորհուրդը, լսելով Արեւմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովի Լիազոր Հանձնաժողովի հայտարարութիւնը, վ որ ո շ ու մ է:

1. Բաւարարել Արեւմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովի խնդրքը և Արեւմտյան Բելոռուսիան մտցնել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւններէ Միութեան կազմի մեջ՝ (յ ե ր կ ա ր ա տ ե ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր , վ որ ո ն ք փ ո խ վ ու մ են ո վ ա ց ի ա յ ի , բ ա ց ա կ ա ն չ ու թ յ ու ն ն ե ր . «Ուռա՛», բ ո լ ո ր ք վ ո տ ք ի յ են կ ա ն գ ն ու մ) այն վերամիավորելով Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեանը:

2. Հանձնարարել Գերագույն Խորհրդի Նախագահութեանը՝ նշանակել Արեւմտյան Բելոռուսիայից ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի դեպուտատներէ ընտրութիւններէ որը:

3. Առաջարկել Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան Գերագույն Խորհրդին՝ Արեւմտյան Բելոռուսիան ընդունել Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան կազմի մեջ:

4. Խնդրել Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան Գերագույն Խորհրդին՝ ԽՍՀՄ Գերագույն Խոր-

հըրդի քննարկմանը ներկայացնել Բելոռուսական խորհրդային Սոցիալիստական Հանրապետության և Ուկրաինական խորհրդային Սոցիալիստական Հանրապետության միջև չըջանների ու մարզերի սահմանորոշման նախագիծը»:

Ընկե՛ր բելոռուսներ: Այսօր դուք մտնում եք մեծ խորհրդային Միության քաղաքացիների շարքերը, Միության, վորը մեր պանծալի բոլշևիկյան կուսակցության ղեկավարութամբ ընթանում է դեպի կոմունիզմ տանող ուղիով: Ուրեմն դուք ես, ընկերներ, դնացե՛ք այդ ուղիով, ամրապնդեցե՛ք ձեր շարքերը մեր խորհրդային Կառավարության շուրջը, սիրեցե՛ք ձեր ազատաբախ՝ — պանծալի ու իմաստուն լենինյան-ստալինյան կուսակցությանը, սիրեցե՛ք ու ե՛լ ավելի սերտորեն համախմբեցե՛ք ձեր շարքերը ժողովուրդների մեծ ազատարարի, մեր մեծ Ստալինի շուրջը: (Բուռն ծափահարություններ, վորոնք փոխվում են ովացիայի: Բոլորը վոտքի յեն կանգնում: Ամբողջ դահլիճում թնդում է բարձրաձայն «ուռա»:)

Կեցցե՛ խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Խորհուրդների ստալինյան բարեկամությունը: (Ծափահարություններ:)

Կեցցե՛ Լենինի—Ստալինի մեր հզոր կուսակցությունը:

Կեցցե՛ յերկա՛ր ու յերկա՛ր տարիներ մեր առաջնորդ, ուսուցիչ և բարեկամ մեծ Ստալինը: (Բուռն ծափահարություններ, վորոնք փոխվում են ովացիայի: Դեպուսատները և հյուրերը վոտքի կանգնած վողջում են ընկեր Ստալինին: Բացակա չություններ. «ուռա»:)

Նախագահող: Ընկե՛ր ղեպուտատներ, առաջարկ ե ստացվել մտքերի փոխանակությունը դադարեցնելու մասին: Կա՞ն արդյոք ուրիշ առաջարկներ: Քվեարկում եմ: Ով կողմնակից է, վորպեսզի մտքերի փոխանակությունը դադարեցնել, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Այսպիսով, մտքերի փոխանակությունը դադարեցվում է:

Դեպուտատներից ո՞վ է խոսք խնդրում որենքի նախագծի առթիվ, վորը ղեպուտատ Բուլգանինը մտցրեց Կառավարությանն ունից:

Ձայներ: Ընդունել:

Նախագահող: Կա՞ն արդյոք ուրիշ առաջարկներ: Չկան: Այդ ղեպուտատ անցնում ենք որենքի նախագծի քննարկմանը: Հրապարակում եմ որենքի նախագիծը:

«Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Դերադույն խորհուրդը, լսելով Արևմտյան Բելոռուսիայի Ժողովրդական Ժողովի Լիազոր Հանձնաժողովի հայտարարությունը, վորոշում է:

1. Բավարարել Արևմտյան Բելոռուսիայի Ժողովրդական Ժողովի խնդիրը և Արևմտյան Բելոռուսիան մտցնել խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ՝ այն վերամիավորելով Բելոռուսական խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը:

2. Հանձնարարել Գերագույն խորհրդի Նախագահությանը՝ նշանակել Արևմտյան Բելոռուսիայից ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ղեպուտատներ ընտրությունների որը:

3. Առաջարկել Բելոռուսական խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն խորհրդին՝ Արևմտյան Բելոռուսիան ընդունել Բելոռուսական խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմի մեջ:

4. Խնդրել Բելոռուսական խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն խորհրդին՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի քննարկմանը ներկայացնել Բելոռուսական խորհրդային Սոցիալիստական Հանրապետության և Ուկրաինական խորհրդային Սոցիալիստական Հանրապետության միջև չըջանների ու մարզերի սահմանորոշման նախագիծը»:

Ընկեր ղեպուտատները պահանջում են արդյոք որենքի նախագիծը քվեարկել ըստ հոդվածների առանձին-առանձին:

Ձայներ: Վո՛չ:

Նախագահող: Քվեարկել ամբողջությամբ:

Ձայներ: Այո՛:

Նախագահող: Անցնում ենք որենքի նախագիծն ամբողջությամբ քվեարկելուն:

Քվեարկում եմ ըստ պալատների առանձին-առանձին:

Քվեարկում են Աղդությունների խորհրդի ղեպուտատները: Ով կողմնակից է ընդունել որենքի մտցված նախագիծը, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Քվեարկում են Միության խորհրդի ղեպուտատները: Ով կողմնակից է ընդունել որենքի մտցված նախագիծը, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Այսպիսով, որենքն Արևմտյան Բելոռուսիան խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ

մտցնելու մասին՝ այն վերամիավորելով Բելոռուսական Խորհրդա-
դային Սոցիալիստական Հանրապետութեանը, — յերկու պալատ-
ներէ կողմից ընդունված ե միաձայն: (Բ ու ու ն ծ ա ի ա հ ա ը ու-
թ յ ու ն ն ե ը, վ ո ը ո ն ք փ ո խ վ ու մ ե ն ո վ ա ց ի ա յ ի: Ս մ-
բ ո ղ ջ դ ա հ լ ի ճ ու մ թ ն դ ու մ ե բ ա ը ճ բ ա ձ ա յ ն « ու ո ա »:)

Ընկե՛ր դեպուտատներ: Որակարգը սպառված ե: ԽՍՀՄ Գերա-
զույն Խորհրդի արտահերթ Հինգերորդ Սեսիան հայտարարում
եմ փակված:

ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ
ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐԵՆՔՆԵՐԸ



Ո Ր Ե Ն Ք

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՈՒԿՐԱԻՆԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՒՍԱԼԻՍՏԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԻ ՄԵՋ ՄՏՑՆԵ-
ԼՈՒ ՄԱՍԻՆ՝ ԱՅՆ ՎԵՐԱՄԻՎՈՐԵԼՈՎ ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՒՍԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան Գերագույն Խորհուրդը, լսելով Արեւմտյան Ուկրաինայի Ժողովրդական Ժողովի Լիազոր Հանձնաժողովի հայտարարութիւնը, վ ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե .

1. Բաւարարել Արեւմտյան Ուկրաինայի Ժողովրդական Ժողովի խնդիրքը և Արեւմտյան Ուկրաինան մտցնել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան կազմի մեջ՝ այն վերամիավորելով Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեանը :

2. Հանձնարարել Գերագույն Խորհրդի Նախագահութեանը՝ նշանակել Արեւմտյան Ուկրաինայից ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի դեպուտատների ընտրութիւնների որը :

3. Առաջարկել Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան Գերագույն Խորհրդին՝ Արեւմտյան Ուկրաինան ընդունել Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան կազմի մեջ :

4. Խնդրել Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան Գերագույն Խորհրդին՝ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի քննարկմանը ներկայացնել Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան և Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան միջև շրջանների ու մարզերի սահմանորոշման նախագիծը :

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահութեան Նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահութեան Քարտուղար՝ Ա. ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ.

1 նոյեմբերի 1939 թ.

Ո Ր Ե Ն Ք

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԲԵԼՈՒՈՒՍԻԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԻ ՄԵՋ ՄՏՑՆԵ-
ԼՈՒ ՄԱՍԻՆ՝ ԱՅՆ ՎԵՐԱՄԻՎՈՐԵԼՈՎ ԲԵԼՈՒՈՒՍԻԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միու-
թյան Գերագույն Խորհուրդը, լսելով Արևմտյան Բելոռուսիայի
Ժողովրդական Ժողովի Լիազոր Հանձնաժողովի հայտարարու-
թյունը, վ որ ո չ ու մ ե .

1. Բաժարարել Արևմտյան Բելոռուսիայի Ժողովրդական Ժո-
ղովի խնդիրքը և Արևմտյան Բելոռուսիան մտցնել Խորհրդային
Սոցիալիստական Հանրապետությունների Միություն կազմի մեջ՝
այն վերամիավորելով Բելոռուսական Խորհրդային Սոցիալիս-
տական Հանրապետությանը:

2. Հանձնարարել Գերագույն Խորհրդի Նախագահությանը՝
հշանակել Արևմտյան Բելոռուսիայից ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի
դեպուտատների ընտրությունների որը:

3. Առաջարկել Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական
Հանրապետության Գերագույն Խորհրդին՝ Արևմտյան Բելոռու-
սիան ընդունել Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական
Հանրապետության կազմի մեջ:

4. Խնդրել Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հան-
րապետության Գերագույն Խորհրդին՝ ԽՍՀՄ Գերագույն Խոր-
հրդի զինարկմանը ներկայացնել Բելոռուսական Խորհրդային
Սոցիալիստական Հանրապետության և Ուկրաինական Խորհրդ-
ային Սոցիալիստական Հանրապետության միջև չըջանների ու
մարզերի սահմանորոշման նախագիծը:

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության Նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության Քարտուղար՝ Ա. ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ.

2 նոյեմբերի 1939 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՍԵՍՍԻԱՆ

ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ՀԱՄԱՏԵՂ ՆԻՍՏԵՐԸ

Առաջին նիստ

(1939 թ. հոկտեմբերի 31-ին)

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի արտահերթ Հինգերորդ Սեսիայի բացումը.	5
Դեպուտատ Վ. Մ. Բաբրաձեյի առաջարկը	6
ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի արտահերթ Հինգերորդ Սեսիայի որակարգի հաստատումը	7
Դեպուտատ Մ. Ա. Բուրմիստենկոյի առաջարկը	7
ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահ և Արտաքին գործերի Ժողովրդական Կոմիսար ընկ. Վ. Մ. Մոլոտովի զեկուցումը՝ Կառավարության արտաքին քաղաքականության մասին	8
Դեպուտատ Ա. Ա. Կուզնեցովի ճառը	29
Կառավարության արտաքին քաղաքականության մասին ԽՍՀՄ Ժողովրդ- ական Կոմիսարների Խորհրդի Նախագահ և Արտաքին գործերի Ժո- ղովրդական Կոմիսար ընկ. Վ. Մ. Մոլոտովի զեկուցման առթիվ վո- րոշման ընդունումը	33

Յերկրորդ նիստ

(1939 թ. նոյեմբերի 1-ին)

Արևմտյան Ուկրաինայի Ժողովրդական Ժողովի Լիազոր Հանձնաժողովի հայտարարությունը: Արևմտյան Ուկրաինայի Ժողովրդական Ժողովի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Մ. Ի. Պանչիշնի ճառը	35
Արևմտյան Ուկրաինայի Ժողովրդական Ժողովի Լիազոր Հանձնաժողովի հայտարարության զննարկումը	
Արևմտյան Ուկրաինայի Ժողովրդական Ժողովի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Ի. Յու. Կրաչուկի ճառը	45
Դեպուտատ Ա. Ա. Բուրմիստենկոյի ճառը	48
Արևմտյան Ուկրաինայի Ժողովրդական Ժողովի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Կ. Ո. Ստուլցինսկու ճառը	51
Արևմտյան Ուկրաինայի Ժողովրդական Ժողովի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Յե. Ս. Կուզմինսկայի ճառը	53
Դեպուտատ Ա. Յե. Կուրնյուկի ճառը	55
Արևմտյան Ուկրաինայի Ժողովրդական Ժողովի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Գ. Վ. Գալերչուկի ճառը	61
Արևմտյան Ուկրաինայի Ժողովրդական Ժողովի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Ու. Վ. Յեֆիմչուկ-Դյաչուկի ճառը	63
ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահի Տեղակալ՝ դե- պուտատ Ա. Յա. Վլադիսլավ ճառը	66

Որենքի ընդունումը Արևմտյան Ուկրաինան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ մտցնելու մասին՝ այն վերամիավորելով Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը	69 71
--	----------

Յերրորդ նիստ

(1939 թ. նոյեմբերի 2-ին)

Արևմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովի Լիազոր Հանձնաժողովի հայտարարությունը: Արևմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Ս. Ո. Պրիտիցկու ճառը	71
Արևմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովի Լիազոր Հանձնաժողովի հայտարարության ընթերցումը	
Արևմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Ֆ. Ս. Պեստրաևի ճառը	86
Դեպուտատ Ն. Ս. Լյուկինայի ճառը	89
Արևմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Ն. Ի. Գրինցելի ճառը	92
Արևմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Ի. Ա. Տուրլեյսկու ճառը	94
Արևմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Մ. Ս. Բուշկովի ճառը	97
Դեպուտատ Ն. Յա. Նատալևիչի ճառը	99
Արևմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Վ. Ա. Պրիկոյի ճառը	104
Արևմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Ա. Ի. Ֆեդոսյուկի ճառը	106
Արևմտյան Բելոռուսիայի ժողովրդական ժողովի Լիազոր Հանձնաժողովի անդամ ընկ. Ա. Ս. Մալեվիչի ճառը	109
ԽՍՀՄ ժողովրդական կոմիտեաների Խորհրդի Նախագահի Տեղակալ՝ դեպուտատ Ն. Ա. Բուրջանինի ճառը	112
Որենքի ընդունումը Արևմտյան Բելոռուսիան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ մտցնելու մասին՝ այն վերամիավորելով Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը	117
ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի արասներթ Հինդերորդ Սեսևայի փակումը	118

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընդունած որենքները

Որենք Արևմտյան Ուկրաինան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ մտցնելու մասին՝ այն վերամիավորելով Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը	121
Որենք Արևմտյան Բելոռուսիան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ մտցնելու մասին՝ այն վերամիավորելով Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը	122

ВНЕОЧЕРЕДНАЯ ПЯТАЯ СЕССИЯ ВЕРХОВНОГО СОВЕТА СССР.

Стенографический отчет.

Издание Верховного Совета СССР.

Редактор А. Оганян. Переводчик Т. Мкртчян.

Корректор А. Пеникян. Технический редактор Н. Филиппов.

Сдано в набор 16 ноября. Подписано к печати 14 декабря.

Уполн. Главлита № А—21925. Тираж 4.000 экз. Формат 62 × 94/16. Об'ем 7 3/4 печ. л., 6,75 авт. лист. Заказ № 3782.

Цена 3 руб.

Типография «Известий Советов депутатов трудящихся СССР» им. И. И. Скворцова-Степанова.

Москва, Пушкинская площадь, проезд им. И. И. Скворцова-Степанова, 5.



ՀԱՅ
ԿՈ

ՀՀ Ազգային գրադարան



NL0202317

